



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ



**ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Հեղինակային խումբ՝

Վարուժան Ավետիսյան իրավաբան-փորձագետ
Սիրանուշ Սահակյան իրավաբան-փորձագետ
Կարապետ Բադալյան իրավաբան-փորձագետ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը շնորհակալություն է հայտնում, Պավել Խացուկին, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի Մարդու իրավունքների հարցերով խորհրդական, և Անդրեա Վեսսային, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի Մարդու իրավունքների հարցերով պատասխանատու, սույն ձեռնարկի վերանայման հարցում իրենց ներդրումն ունենալու համար:

Ուսումնական ձեռնարկը պատրաստվել և հրատարակվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնի «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկի հիման վրա:

Այն միտված է զարգացնելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում զինված ուժերի անձնակազմի գիտելիքները:

ISBN 978-92-9234-168-8

Բովանդակություն

| | |
|--|-----|
| Ներածություն | 4 |
| Մոդուլ 1: Մարդու իրավունքների հասկացությունը..... | 8 |
| Մոդուլ 2: Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտականությունը..... | 41 |
| Մոդուլ 3: Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը. ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը | 51 |
| Մոդուլ 4: Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք..... | 63 |
| Մոդուլ 5: Արդար դատաքննության իրավունք..... | 80 |
| Մոդուլ 6: Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք | 96 |
| Մոդուլ 7: Մտքի, խղճի և կրոնի ազատություն | 112 |
| Մոդուլ 8: Արտահայտվելու ազատություն | 120 |
| Մոդուլ 9: Հավաքների և միավորման ազատություն | 129 |
| Մոդուլ 10: Ազատ ընտրելու իրավունքը | 137 |
| Մոդուլ 11: Տեղաշարժվելու ազատություն..... | 151 |
| Մոդուլ 12: Խտրականության արգելքը..... | 155 |
| Մոդուլ 13: Այլընտրանքային զինվորական ծառայություն..... | 165 |
| Մոդուլ 14: Առողջության իրավունք..... | 174 |

Ներածություն

Վերջին երեսուն տարիների ընթացքում մարդու իրավունքների վերաբերյալ ստանդարտների իրազեկումը խթանել է բարեփոխումներ՝ ուղղված զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությանը և մարդու իրավունքների չարաշահումների դեպքերի նվազմանը: Շատ պետություններ ստիպված էին բարեփոխել իրենց զինվորական կառույցները՝ անվտանգության սրընթաց փոփոխվող միջավայրին համապատասխանեցնելու նպատակով: Աստիճանաբար ավելի ու ավելի մեծ տարածում է գտնում այն ըմբռումը, որ պետությունները պետք է զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողություն իրականացնեն և վերանայեն իրենց զինվորական կառույցներն այն նկատառումով, որ դրանք համապատասխանեն մարդու իրավունքների ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին:

Զինված ուժերում համատարած է դառնում մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացների կազմակերպումը:

Սույն ձեռնարկի օգնությամբ կարելի է կազմակերպել մարդու իրավունքների ինստիտուցիոնալացված կրթություն, ինչը կնպաստի զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների նվազմանը:

Այն առաջարկում է գործառույթային պարամետրեր, որոնց միջոցով ընտրվում է համընդհանուր, հոլիստիկ և միասնական մոտեցում մարդու իրավունքների վերաբերյալ:

Ձեռնարկի ստեղծման նպատակը եվ խնդիրները

Ձեռնարկի ստեղծման *նպատակն* է զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացի կազմակերպման համար ուսումնական նյութերի պատրաստումը և անցկացման առնչությամբ ուղեցույցների տրամադրումը:

Ներկայացված նյութերը կնպաստեն զինված ուժերում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը:

Ձեռնարկի ստեղծման *խնդիրներն* են.

Ա. բարձրացնել զինված ուժերի անձնակազմի իրազեկվածությունը մարդու իրավունքների ստանդարտների վերաբերյալ,

Բ. տրամադրել և զարգացնել հմտություններ, որոնք կնպաստեն անձնակազմի կողմից իրենց գործառույթների և պարտականությունների կատարման ընթացքում մարդու իրավունքների հարգմանը և պահպանմանը,

Գ. արմատավորել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ամրապնդող արժեհամակարգ՝ փոխելով բացասական վերաբերմունքն ու վարքագիծը, ամրապնդելով դրական մոտեցումները:

Թիրախային խմբեր

Սույն ձեռնարկն ուղղված է այն անհատներին, կազմակերպություններին, ովքեր նպատակ ունեն խթանելու մարդու իրավունքների ուսուցումը զինված ուժերում, ինչպես նաև նպաստելու դրանց պաշտպանությանն ու իրացմանը: Ձեռնարկը օգտակար կլինի զինվորական ծառայողների համար:

Ինչպես օգտվել սույն ձեռնարկից

Ձեռնարկը բաղկացած է 14 բաժիններից, որոնցում ներկայացված թեմաների դասավանդումը կապահովի զինված ուժերի անձնակազմի կողմից մարդու իրավունքների (այդ թվում՝ դրանց իրացման) լիարժեք ըմբռնումը:

Ձեռնարկը ցուցումներ է պարունակում դասընթացի նախապատրաստման և անցկացման վերաբերյալ: Քննարկումների և պրակտիկ վարժությունների համար ներկայացված են հարցեր և խնդիրներ:

Առաջարկվում է դասընթացը կազմակերպել հետևյալ ժամանակացույցով:

| ՄՈԴՈՒԼ | ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ |
|---|---------------|
| Ներածական խոսք | 30 րոպե |
| Մոդուլ 1: Մարդու իրավունքների հասկացությունը | 3 ժամ 30 րոպե |
| Մոդուլ 2: Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտականությունը | 5 ժամ |
| Մոդուլ 3: Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը. ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը | 3 ժամ 30 րոպե |
| Մոդուլ 4: Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք | 4 ժամ 15 րոպե |
| Մոդուլ 5: Արդար դատաքննության իրավունք | 4 ժամ 40 րոպե |
| Մոդուլ 6: Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք | 4 ժամ |
| Մոդուլ 7: Մտքի, խղճի և կրոնի ազատություն | 2 ժամ 45 րոպե |
| Մոդուլ 8: Արտահայտվելու ազատություն | 5 ժամ 30 րոպե |

| | |
|---|---------------|
| Մոդուլ 9: Հավաքների և միավորման ազատություն | 2 ժամ 45 րոպե |
| Մոդուլ 10: Ազատ ընտրելու իրավունքը | 3 ժամ 25 րոպե |
| Մոդուլ 11: Տեղաշարժելու ազատություն | 1 ժամ 25 րոպե |
| Մոդուլ 12: Խտրականության արգելքը | 2 ժամ 45 րոպե |
| Մոդուլ 13: Այլընտրանքային ծառայություն | 2 ժամ 35 րոպե |
| Մոդուլ 14: Առողջության իրավունք | 2 ժամ 30 րոպե |

Դասընթացի մեթոդաբանությունը

Դասընթացի կազմակերպման և անցկացման մեթոդաբանության մեջ կարևոր նշանակություն ունեն վերապատրաստողների ընտրությունը, դասավանդման մեթոդները, լսարանի կարիքները և կոնկրետությունը:

Մարդու իրավունքների վերապատրաստման դասընթացները պետք է կազմակերպվեն նախ՝ սպայական անձնակազմի համար, որոնք հետագայում ձեռնամուխ կլինեն գիտելիքների տարածմանը զինծառայողների շրջանակում: Համապատասխանաբար, ի լրումն բովանդակության, սույն ձեռնարկը պարունակում է կարողությունների զարգացման մեթոդաբանություն և կարողությունների ձևավորման տարրեր, ինչպիսիք են դասախաղության նյութերը և գործնական վարժությունները, որոնք նախատեսված են մասնակիցներին վերապատրաստական հմտություններ հաղորդելու համար:

Մշակված դասընթացների անցկացման ժամանակ պետք է ընտրվեն ստեղծագործական, ինտերակտիվ դասավանդման մեթոդներ, որոնք կապահովեն ծրագրի մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը: Առաջարկվող մեթոդներն են՝ ներկայացում և քննարկում, խմբակային աշխատանք, դեպքերի ուսումնասիրություններ, առաջադրված խնդրի լուծումներ, դատախաղեր, խմբային խաղեր և այլն:

Դասընթացը ներկայացնելիս պետք է դրսևորել գործնական մոտեցում: Հետևաբար, դասընթացավարի խնդիրն է ոչ միայն մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և ներպետական նորմերի ներկայացումը, այլև զինված ուժերի անձնակազմի պարտականությունների պարզաբանումը այդ նորմերի իրացման գործընթացում: Դասընթացավարը պետք է հստակ լուսաբանի, թե մարդու իրավունքների իմացությունը ինչ արժեք և որակ կարող է տալ իրենց գործին:

Դասընթացների անցկացման ժամանակ մասնակիցներին պետք է բաժանվեն համապատասխան նյութեր, այդ թվում՝ թարգմանված գործեր,

որոնց հիման վրա պետք է իրականացվեն գործերի ուսումնասիրությունը, դերային խաղերը և դատախաղերը:

Դասախոսության նյութերը մշակելիս ապահովվել է նյութերի օգտագործման ճկունությունը: Հետևաբար, դասընթացավարները կարող են կառուցել իրենց նյութերը գոյություն ունեցող տեքստերի հիման վրա՝ ապահովելով ինքնուրույնություն նյութը մատուցելիս:

Դասընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է պահպանել մի շարք դեկավար կանոններ.

- Դասընթացների կազմակերպումը պետք է հիմնվի կարիքների, պահանջների խորհրդատվական գնահատման վրա:
- Հնարավորության դեպքում առանձին թրեյնինգ-ծրագրեր պետք է կազմակերպվեն փոքր խմբերի համար՝ տվյալ ենթախմբի ամենօրյա աշխատանքի գործառույթներից ու կոնտեքստից ելնելով:
- Պետք է ապահովել ինտերակտիվ մեթոդների կիրառումը:

Դասընթացի անցկացման համար անհրաժեշտ է ձևավորել 24 անձից բաղկացած խմբեր (նվազագույնը՝ 15, առավելագույնը՝ 30): Դասընթացի վարման համար անհրաժեշտ է ունենալ կազմակերպիչ և դասընթացավար: Վերջիններիս դերերը բաշխվում են հետևյալ կերպ.

- Կազմակերպիչը պատասխանատու է դասընթացի նախապատրաստման և բովանդակության համար: Նա հստակեցնում է դասընթացի նպատակները, ընտրում է մասնակիցներին, կազմում է օրակարգը/դասացուցակը:
- Դասընթացավարը պատասխանատու է դասընթացի անցկացման համար: Նա պետք է ունենա հաղորդակցման լավ հմտություններ, բովանդակային առումով տիրապետի նյութին:

Մոդուլ 1: Մարդու իրավունքների հասկացությունը

Տևողությունը՝ 3 ժամ 30 րոպե
Բովանդակություն

1. Մարդու իրավունքների հասկացությունը և դրա պատմական զարգացումը
2. Մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ և եվրոպական մեխանիզմներ
3. Մարդու իրավունքները զինված ուժերում

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|--|----------------------------|--------------------|
| Մարդու իրավունքների հասկացությունը և դրա պատմական զարգացումը | Մտքերի գրոհ Պրեզենտացիա | 40 րոպե 20 րոպե |
| Մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ և եվրոպական մեխանիզմներ | Պրեզենտացիա | 2 ժամ |
| Մարդու իրավունքները զինված ուժերում | Պրեզենտացիա Քննարկում | 20 րոպե 10 րոպե |

Ինտերակտիվ խաղ

Խումբը վիճակահանությամբ բաժանվում է 4-6-հոգանոց ենթախմբերի:

Դասընթացավարը ենթախմբերին տալիս է մեկական մաքուր պլակատ, գունավոր մարկերներ և ներկայացնում հետևյալ նախապատմությունը.

«Մի խումբ մարդիկ հայտնվել են անմարդաբնակ մոլորակի վրա, որտեղ կյանքի բավարար պայմաններ կան, սակայն ամեն ինչ պետք է սկսել զրոյից: Նոր բնակիչներն իրենց համատեղ կյանքը կարգավորելու համար ժողով են գումարում և որոշում են ստեղծել հանրային կառավարման մարմիններ (կամ, այլ կերպ ասած, պետություն) և ընտրել դրանցում ծառայություն իրականացնողներին»:

Ենթախմբի անդամները քննարկում են հետևյալ հարցերը.

ա. Ի՞նչ բնական անօտարելի իրավունքներ ունեն մարդիկ:

բ. Նորաստեղծ պետությունը ո՞ր իրավունքները պետք է ճանաչի՝ նոր մոլորակի բնակիչների համար ապահով, արդար, խաղաղ ու բարեկեցիկ համատեղ կյանք կազմակերպելու նպատակով:

Ենթախմբի յուրաքանչյուր անդամ պետք է մասնակցի մտքերի գրոհին և պլակատի վրա կատարի համապատասխան գրառումներ:

Այս աշխատանքի համար ենթախմբերին տրվում է 20 րոպե ժամանակ, որից հետո յուրաքանչյուր ենթախմբից մեկական ներկայացուցիչ պետք է լսարանին ներկայացնի առաջադրանքի կատարման իրենց տարբերակը:

Դասընթացավարը և մասնակիցները կարող են հարցեր տալ ներկայացնողին:

Ընդ որում՝ ցանկալի է, որ սկզբում մասնակիցը ներկայացնի իր կարծիքը, իսկ հարցերը տրվեն վերջում:

Յուրաքանչյուր ենթախմբի կարծիքը ներկայացնելու համար տրվում է առավելագույնը 10 րոպե:

Բոլոր ենթախմբերի կարծիքներին ծանոթանալուց հետո դասախոսը համեմատում է նրանց ներկայացրած իրավունքների ընդհանրություններն ու տարբերությունները, որից հետո կազմում է բոլոր ենթախմբերի ընտրած իրավունքների ցանկը՝ ջնջելով կրկնվողները:

Ներկայացված իրավունքների ամբողջական ցանկը համեմատվում է Մարդու իրավունքների միջազգային բիլլով սահմանված մարդու իրավունքների ցանկի հետ:

Դասընթացավարը ամփոփում է կատարված առաջադրանքը, պատասխանում տրված հարցերին, մանրակրկիտ մեկնաբանում մասնակիցների կողմից հարցերին տրված պատասխանները:

Դասախոսության նյութ

1. Մարդու իրավունքների հասկացությունը

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանում է. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

Մարդկային արժանապատվությունը գաղափարական և հոգևոր այն տիեզերական հիմքն է (universal), որով արդարացվում են մարդու իրավունքները և դրանց զարգացման անհրաժեշտությունը: Մարդը մյուս կենդանի էակներից տարբերվում է արժանապատվությամբ և այդ հատկանիշով նրանց շարքում գլխավոր տեղն է զբաղեցնում:

«Մարդու իրավունքներ» արտահայտությունը հանրահայտ է: Այսօր դժվար է գտնել մեկին, ով չի լսել մարդու իրավունքների մասին: Ինչպես ցանկացած երևույթի, այնպես էլ մարդու իրավունքների վերաբերյալ կան ամենատարբեր, երբեմն՝ իրարամերժ ընկալումներ և բացատրություններ:

Մասնավորապես շրջանառվում են մարդու իրավունքների հետևյալ սահմանումները.

ա). Մարդու իրավունքները կոչված են ապահովելու յուրաքանչյուր անձի՝ հասարակության մնացած անդամների և պետական մարմինների կողմից իր մարդկային արժանապատվությանն ու պատվին համապատասխան վերաբերմունքի արժանանալու իրավունքը:

բ). Մարդու իրավունքները ամեն տեսակ անարդարությունների դեմ պայքարելու բարոյապես արդարացված միջոց են:

գ). Մարդու իրավունքները ստիպում են, որ դատարաններն ու ոստիկանությունը պաշտպանեն հանցագործներին և ահաբեկիչներին՝ ի հաշիվ ժողովրդի մեծամասնության միջոցների և անվտանգության:

Մարդու իրավունքներն ունեն գերակայություն մարդկային համակեցության բոլոր կանոնների նկատմամբ¹: Ուստի յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության մեջ պետության գործունեության հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

«Մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացություններն ի հայտ են եկել դեռևս հնագույն դարաշրջաններում: Ազատության վերաբերյալ առաջին հիշատակումը հանդիպում է մ.թ.ա. 14-րդ դարում²: Մարդու իրավունքները գոյություն ունեին դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում, դրանք ամրագրում էին օրենքի ու օրինականության արժեքն ու կարևորությունը: Մարդկության ամբողջ պատմությունն իրենից ներկայացնում է մարդու անընդմեջ պայքար պետության հետ՝ առավել շատ իրավունքներ ու ազատություններ ձեռք բերելու համար: Այդ պայքարը ներառում էր նաև արդեն իսկ նվաճած իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար առավել գործուն մեխանիզմներ ձեռք բերելու միտում: Մարդկության զարգացման յուրաքանչյուր փուլի հետ զուգահեռ ավելի շատ սոցիալական շերտեր են սկսում ձեռք բերել իրավունքներ ու ազատություններ: Իսկ ժամանակակից հասարակությունում արդեն յուրաքանչյուր մարդ, անկախ իր դիրքից, ունի որոշակի անօտարելի իրավունքներ ու ազատություններ:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական կոնցեպցիաները զարգացել են 18-19-րդ դարերում³: Բացառապես դատավճռի հիման վրա անձին մեղավոր ճանաչելը, իրավախախտման և պատժի համաչափության

¹ История защиты прав человека; И. П. Мазитова; Accessed February 18 2010; Available from <http://www.law.edu.ru/doc/document.asp>.

² International Human Rights Protection; Accessed February 21 2010; Available at: http://www.cdphrc.uottawa.ca/eng/doc/inter-web/sitesint_e.php.

³ Международные механизмы защиты прав человека; И. Ю. Лищина, Харьков 2001; ст. 34.

սկզբունքը, պատշաճ իրավական ընթացակարգերի նախատեսումը, անմեղության կանխավարկածը, խոսքի, կրոնի ազատությունը, ազատ տեղաշարժման իրավունքը շարադրվել են դեռևս Ազատությունների մեծ խարտիայում (Magna Carta, 1215 թ.), իրենց հետագա զարգացումն են ստացել Հարեաս Կորպուս Ակտում (Habeas Corpus Amendment Act 1679 թ.), Իրավունքների մասին բիլլում (The Bill of Rights, 1689 թ.), ԱՄՆ Անկախության հռչակագրում (The Declaration of Independence United States Code, 1776 թ.), Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում (Ֆրանսիա, 1789 թ.) և այլն:

Մարդու իրավունքների վերաբերյալ նախնական իրավական ձևակերպումներն առաջին անգամ տեղ են գտել 1215 թ. Անգլիական «Մագնա Կարտա» կոչվող փաստաթղթում, որը պայմանագիր էր անգլիական թագավորի և բարոնների միջև: Այդ պայմանագրով երաշխավորվում էր, որ ազատ մարդիկ չեն կարող ձերբակալվել, բանտարկվել կամ գրկվել իրենց ունեցվածքից այլ կերպ, քան դատարանի օրինական վճռով: Այլ կերպ ասած՝ դրանով կաշկանդվեց թագավորի կամ այլ արտոնյալ անձանց իրավունքը, որով մինչ այդ նրանք կարող էին ազատ մարդկանց կամայականորեն գրկել ազատությունից կամ ունեցվածքից:

Նշված իրավունքներն այսօրվա իմաստով մարդու իրավունքներ չեն կարող համարվել, քանի որ վերաբերում էին մարդկանց մի խմբի միայն՝ ազատ մարդկանց, ովքեր սեփական ունեցվածք ունեին: Սակայն, եթե հաշվի առնենք, որ դա ժամանակակից ընկալմամբ մարդու իրավունքների ձևակերպման և կիրառման առաջին հաջող փորձն էր, ապա դրա արժեքն անգնահատելի է:

1689 թ. անգլիական իրավունքների բիլլը պայմանագիր էր արդեն անգլիական պառլամենտի և թագավորի միջև: Այս պայմանագիրը նախորդի նման իրավունքներ էր վերապահում մարդկանց մեկ խմբի միայն, սակայն այն շարունակեց «Մագնա Կարտա»-ի տրամաբանությունը և թագավորի ու այլ արտոնյալների կամայականություններից պաշտպանվելու վահան ստեղծեց մարդկանց նաև այդ խմբի համար: Սա կարելի է հզոր առաջընթաց քայլ համարել, քանի որ դրանով ուղղակիորեն ճանաչվում էր մարդկանց տվյալ խմբի ինքնիշխանությունը, ինչը բացառիկ կարևոր էր:

Ինչպես իրենց ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում այս պայմանագրերը հսկայական սնունդ տվեցին տարբեր երկրների հասարակություններում մարդու իրավունքների վերաբերյալ քննարկումների համար: Այդ հարցերին խորը կերպով անդրադարձել են հայտնի մտածողներ Ջոն Լոքը, Ժան-ժակ Ռուսոն և ուրիշներ:

Ըստ Ջոն Լոքի՝ բնական իրավունքը մարդու բնական վիճակն է, երբ մարդը ազատություն է վայելում և իրավունք ունի պաշտպանելու իրեն: Իսկ

այնքանով, որքանով մարդը պաշտպանված է, նա պետք է պաշտպանի և պահպանի մնացած մարդկանց, և ոչ ոք չպետք է այլ անձի գրկի կյանքից, ազատությունից, առողջությունից կամ գույքից: Ըստ Լոքի՝ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի պատժել իրեն վնասողին և դրանով իսկ լինել բնության իրավունքի իրականացնողը, սակայն դա կարող է անել միայն այնքան ժամանակ, քանի դեռ այդ մարդու և մնացած մարդկանց միջև չի ձևավորվում այնպիսի պայմանավորվածություն, որն իր հերթին ձևավորում է որոշակի քաղաքական հասարակություն: Այդ համաձայնությամբ մարդկիկ իրենց ինքնիշխանությունը որոշակիորեն զիջում են կառավարությանը, որպեսզի վերջինս ապահովի օրենքների կիրառումը այնքան ժամանակ, քանի դեռ արդարացնում է իրեն տրված վստահությունը: Իսկ երբ կառավարությունը սկսում է կամայականություն գործել և ոտնձգել ընդդեմ մարդկանց կյանքի, ազատությունների և ունեցվածքի, ապա, ըստ Լոքի, կառավարությունը զրկվում է իշխանությունից, և վերջինս վերադառնում է մարդկանց:

Ըստ Ռուսոյի՝ յուրաքանչյուր անձ ունի ինքնուրույն կամք և շահեր, որոնք բնական ազատություններ են, և որոնց իրականացումը կարող է չհամընկնել ընդհանուրի կամքի և շահերի հետ: Հասարակության մեջ մարդը սոցիալական պայմանագիր է կնքում, որով զիջում է իր բնական ազատությունները և ձեռք է բերում քաղաքացիական ազատություններ ու սեփականության իրավունք իր ամբողջ ունեցվածքի նկատմամբ:

Սոցիալական պայմանագրի այս տեսությունը մեծապես ազդեց այն ժամանակվա մտածողության վրա՝ նախանշելով 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունը:

Իսկ մինչ այդ՝ 1776 թ. Ամերիկյան անկախության հռչակագրով սահմանվեց, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար, որոնց Արարիչն օժտել է որոշակի անօտարելի իրավունքներով: Դրանց թվում են կյանքի, ազատության և երջանկության ձգտման իրավունքները: 1789 թ. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիրը նույնպես արձանագրեց, որ մարդիկ ծնվում են ազատ և ունեն հավասար իրավունքներ, որ յուրաքանչյուր քաղաքական կազմակերպության նպատակը մարդու բնական և անօտարելի՝ ազատության, սեփականության, անվտանգության և բնություններին դիմադրելու իրավունքների պաշտպանությունն ու պահպանությունն է:

1.1. Մարդու իրավունքների սերունդներ

Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքները հանդիսանում են բնական իրավունքներ և ստացել են ավելի լայն մեկնաբանություն: Միջազ-

գային իրավական փաստաթղթերում ընդունված է մարդու իրավունքները բաժանել առանձին կատեգորիաների կամ սերունդների.

- Առաջին սերնդին վերաբերում են քաղաքացիական և քաղաքական իրավունքները, որոնք ամրագրված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագրում: Այդ իրավունքներն ի սկզբանե ամրագրված էին ազգային օրենսդրություններում, իսկ դրանց միջազգային իրավական ամրագրմանը մեծապես նպաստել է Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Ընդունված է համարել, որ այդ սերնդի իրավունքները (կյանքի իրավունք, ազատության իրավունք, անձնական անձեռմխելիության իրավունք, օրենքի առջև հավասարության իրավունք և այլն) համարվում են բնական, անօտարելի և պատկանում են յուրաքանչյուր մարդու ի ծնե, իսկ պետությունը պետք է ապահովի այդ իրավունքների իրականացումը՝ անկախ իր քաղաքական, տնտեսական, սոցիալական զարգացման մակարդակից:

- Երկրորդ սերնդի մեջ մտնում են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ամրագրված են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում: Այս կատեգորիայի իրավունքների կենսագործման համար (աշխատանքի իրավունք, կյանքի բարենպաստ կենսապայմանների իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, հանգստի իրավունք, կրթության իրավունք և այլն) պահանջվում է պետության կողմից որոշակի գործողությունների իրականացում, և դրանց իրագործումը կախված է տվյալ պետության տնտեսական և սոցիալական պայմաններից: Այս իրավունքների ձևավորման գործում հսկայական ազդեցություն են ունեցել 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ձեռքբերումները և այլ երկրներում ծայր առած աշխատավորական շարժումները:

- Երրորդ սերնդի իրավունքների շարքին դասվում են կոլեկտիվ իրավունքները (ազգերի իրավունք, փոքրամասնությունների իրավունք, զարգացման իրավունք, միջազգային խաղաղության և անվտանգության իրավունք և այլն): Այս իրավունքները ծագել են ազգային-ազատագրական շարժումների արդյունքում և ամրագրված են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Գաղութային երկրներին և ժողովուրդներին ազատություն շնորհելու մասին 1960 թ. հռչակագրում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Ազգային և էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին 1984 թ. հռչակագրում, 1981 թ. Աֆրիկյան խարտիայում, Եվրոպական տարածաշրջանային ակտերում և այլն:

Մարդու իրավունքների երրորդ սերունդը, ըստ էության, սահմանվում և պաշտպանվում է միջազգային կազմակերպությունների կողմից⁴: Վերջիններս հսկում են, որ պետություններն անշեղորեն կատարեն մարդու կոլեկտիվ իրավունքների վերաբերյալ իրենց կողմից ընդունված որոշումները:

Հարկ է նշել, որ մարդու իրավունքների տարանջատումը նման սերունդների կամ կատեգորիաների խիստ պայմանական բնույթ է կրում⁵, գրականության մեջ նման տարանջատումները շատ բազմազան են ու հաճախ չեն համընկնում միմյանց հետ: Ոչ բոլոր հետազոտողներն են համամիտ մարդու իրավունքների նման դասակարգման հետ՝ պնդելով, որ բոլոր իրավունքներն էլ անբաժան են, և ցանկացած իրավունքի կրող հանդիսանում է անհատը, իսկ իրավունքների տարանջատումը կրում է խիստ պայմանական բնույթ՝ արտացոլելով միայն այս ոլորտում առկա միջազգային իրավական նորմերի ստեղծման պատմական առանձնահատկությունները:

1.2. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական ինստիտուտին բնորոշ սկզբունքները

Հարկ է նշել, որ միջազգային իրավական պաշտպանության ենթակա մարդու իրավունքներին բնորոշ են որոշակի սկզբունքներ, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ինչպես նաև այլ ունիվերսալ և տարածաշրջանային ակտերում⁶:

Մասնավորապես, մարդու իրավունքների ունիվերսալության սկզբունքը նշանակում է, որ մարդու իրավունքների ոլորտում գործող լայն ճանաչում ստացած միջազգային իրավական նորմերը ենթակա են պարտադիր կատարման բոլոր պետությունների կողմից ողջ միջազգային հանրության հանդեպ՝ անկախ որևէ պետության ազգային, կրոնական, քաղաքական առանձնահատկություններից⁷: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է պահպանել որոշակի համընդհանուր ճանաչում ստացած միջազգային իրավական նորմեր ոչ միայն իր քաղաքացիների հանդեպ, այլ նաև օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ:

Խտրականության արգելքի և հավասարության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պետությունները պարտավոր են հետևել և ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը յուրաքանչյուր անձի հանդեպ՝

⁴ «Մարդու իրավունքներ», ուսումնական ձեռնարկ, Վ. Այվազյան, Երևան, 2002, էջ 31:

⁵ Международное право; Ответственные редакторы Ю. М. Колосов, Э. С. Кривчикова; Москва; 2007; ст. 536.

⁶ Human Rights in the Developed World; Accessed February 10 2010; American Journal of International Law.

⁷ Международное публичное право; Ответственный редактор К. А. Бекашев; Москва; 2007; ст. 234.

անկախ վերջինիս ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, կրոնից կամ ցանկացած այլ նմանատիպ հիմքից:

Մարդու իրավունքների փոխկապվածության և անբաժանելիության սկզբունքին համապատասխան՝ միջազգային հանրությունը պետք է մարդու իրավունքները դիտարկի որպես գլոբալ երևույթ՝ հավասար և արդարացի հիմունքներով, միատեսակ մոտեցմամբ և ուշադրությամբ⁸: Պետությունները պարտավոր են պաշտպանել մարդու և քաղաքացու բոլոր իրավունքներն ու հիմնական ազատությունները՝ լինեն դրանք քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, մշակութային թե սոցիալական:

2. Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության ունիվերսալ և տարածաշրջանային մեխանիզմները

20-րդ դարի երկու համաշխարհային պատերազմների պատճառած արհավիրքները և մարդկային աննկարագրելի տառապանքները (մեկ ու կես միլիոն հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, շուրջ 6 միլիոն հրեաների ողջակիզումը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, տասնյակ միլիոնավոր զինվորների՝ միջազգային մարդասիրական նորմերի խախտումներով պատճառված մահերը և խաղաղ բնակիչների մահը) ստիպեցին պետություններին միավորել ջանքերը և ստեղծել այնպիսի միջազգային իրավունքի նորմեր, որոնք կհոչակեն ու կպաշտպանեն մարդու իրավունքները և կկանխեն հետագա հնարավոր ողբերգությունները:

Մեր օրերում, երբ որևէ մեկը վկայակոչում է մարդու իրավունքները, նա վստահաբար նկատի ունի մարդու այն իրավունքները, որոնք ամրագրված են միջազգային և ներպետական իրավունքում, այլ ոչ այն իրավունքները, որոնք փիլիսոփայական քննարկման առարկա են: Նման լեզալիստական մոտեցումը միտված է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, հետևաբար ունի մեծ պահանջարկ:

Մարդու իրավունքների համընդհանուր հարգումը և պաշտպանությունը մարդկությանը հավերժ հուզող խնդիրներից մեկն է և ներկայումս դասվում է համաշխարհային հանրության առջև ծառայած կարևորագույն խնդիրների թվին: Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության ռեալ մեխանիզմներն ի հայտ են եկել համեմատաբար վերջերս: Բհարկե, մարդու իրավունքների պաշտպանության իրավական նորմեր և դրանց համապատասխան նաև պաշտպանության անհրաժեշտ մեխանիզմներ ինչ-որ ձևով եղել են տարբեր ժամանակաշրջաններում, բայց ընդունված

⁸ Human Rights in the Developed World; Accessed February 10 2010; American Journal of International Law.

Է մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության իրական մեխանիզմների մասին խոսել միայն ՄԱԿ-ի ստեղծումից հետո: Իրադրությունը սկզբունքորեն փոխվեց ՄԱԿ-ի կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և այլ համաձայնագրերի ընդունումից հետո: Այս ակտերը ոչ միայն անդամ պետությունների համար սահմանում են մարդու իրավունքների ոլորտին վերաբերող իրավական պարտականություններ, այլ նաև նախատեսում են պետությունների կողմից ստանձնած պարտականությունների կատարմանը վերահսկող միջազգային իրավական մեխանիզմներ:

Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերից հիմնարարը 1948 թ. Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է⁹:

Հռչակագրի 1-ին հոդվածը, ի ցույց դնելով մարդու իրավունքների վերաբերյալ նախկինում ընդունված հանրահայտ փաստաթղթերի հետ իր ժառանգական կապը, օգտագործում է 1789 թ. ֆրանսիական հռչակագրում օգտագործված լեզուն և սահմանում է. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ և խղճով, և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով»: Հռչակագիրը շեշտում է մարդկային արժանապատվության ժառանգական անգնահատելի արժեքը, որը պետք է ճանաչվի բոլոր մարդկանց համար, առանց որևէ խտրականության: Այդուհանդերձ, Հռչակագիրը որոշակի սահմանափակումներ է նախատեսում մարդու իրավունքների իրականացման հարցում՝ դրանք պայմանավորելով հասարակական կարգի պահպանության անհրաժեշտությամբ, որն էլ իր հերթին անհրաժեշտ է մարդու իրավունքների իրականացման պայմաններ ստեղծելու համար: Հռչակագրի 29-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք համայնքի առջև պարտականություններ ունի, որտեղ և հնարավոր է նրա անհատական ազատ ու լիարժեք զարգացումը»: Ընդ որում՝ իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքի հիման վրա՝ այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, հասարակական կարգը, ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները և ընդհանուր բարեկեցությունը ապահովելու նպատակով: Հռչակագիրն ունեւր դեկլարատիվ բնույթ, ուստի դրա հենքի վրա պետությունների համար պարտադիր իրավական ուժ ունեցող միջազգային պայմանագրեր ունենալու համար ՄԱԿ-ը ձեռնամուխ եղավ մարդու իրավունքների միջազգային բազմակողմ դաշնագրերի նախագծերի պատրաստմանը:

⁹ http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf.

Աշխատանքի արդյունքը եղավ այն, որ 1966 թ. դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան առանձին-առանձին ընդունեց Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ու Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերը:

Դաշնագրերն իրավական ուժ ստացան 1976 թ.: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և նրա երկու արձանագրությունները, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը միասին կազմում են Մարդու իրավունքների միջազգային բիլլը, որը բեկումնային նշանակություն է ունեցել մարդու իրավունքների պատմության մեջ:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը¹⁰ պաշտպանում է կյանքի, ազատության, արդար դատաքննության, տեղաշարժվելու ազատության, մտքի, խղճի, խաղաղ հավաքների ազատության, ընտանիքի և անձի անձեռնմխելիության իրավունքները: Դաշնագրով արգելվում են ստրկությունը, խոշտանգումները, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը և պատիժը, խտրականությունը, կամայական ձերբակալումը և պարտքի համար ազատագրվումը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը¹¹ ներառեց կրթության, սննդի, բնակարանի, առողջապահության, ինչպես նաև աշխատանքի, աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքները: Այս դաշնագիրն ստորագրած պետությունն իր ռեսուրսների սահմաններում պարտավորություն է ստանձնում քայլեր ձեռնարկել դաշնագրով պաշտպանվող իրավունքների ամբողջ ծավալով պրոգրեսիվ իրականացումն ապահովելու նպատակով:

ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված հաջորդ փաստաթուղթը 1969 թ-ից իրավական ուժ ստացած Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան է¹²: Կոնվենցիայով արգելվում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ

¹⁰ <http://www2.ohchr.org/english/law/ccpr.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թ.:

¹¹ <http://www2.ohchr.org/english/law/cescr.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թ.:

¹² <http://www2.ohchr.org/english/law/cerd.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թ.:

հայտարարելու, դրանց ճանաչումը, իրականացումը կամ օգտագործումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների:

Հաջորդը Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան¹³ է, որը իրավական ուժ է ստացել 1981 թ. և կոչված է ապահովելու կանանց՝ քաղաքական և հասարակական կյանքին մասնակցելու, ինչպես նաև կրթություն ստանալու, առողջությունը պահպանելու և աշխատանք ունենալու հավասար իրավունքները և արգելել խտրականության բոլոր ձևերը ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեն իր 19 ընդհանուր մեկնաբանությամբ գենդերի հիմքի վրա հիմնված բռնությունը դիտարկեց որպես կոնվենցիայի մաս և արգելեց այն:

Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի շարքում կարևոր է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի¹⁴ դերը, որն իրավական ուժ է ստացել 1987 թ-ից: Կոնվենցիան սահմանում է «խոշտանգում» տերմինը և կոնվենցիային անդամ պետություններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել խոշտանգումները կանխելու, քննելու, պատասխանատվության ենթարկելու, պատժելու և փոխհատուցելու համար պետության իրավասության տակ գտնվող բոլոր տարածքներում, ինչպես նաև ապահովել, որ խոշտանգումների համար մեղավոր անձինք օրենքով սահմանված կարգով պատժվեն:

Երեխայի իրավունքների մասին¹⁵ կոնվենցիան իրավական ուժ է ստացել 1990 թ.: Ըստ կոնվենցիայի՝ «երեխա» է համարվում 18 տարին չլրացած ցանկացած անձ, ում նկատմամբ կիրառվող օրենքով նրա չափահասությունը ավելի վաղ վրա չի հասնում: Կոնվենցիան նպատակ ունի պաշտպանել երեխաներին նրանց բարեկեցությանը վտանգող ցանկացած գործողությունից, ներառյալ տնտեսական շահագործումը, թրաֆիքինգը, թմրադեղերի ապօրինի օգտագործումը, բոլոր տեսակի սեռական շահագործումները և բռնությունները: Կոնվենցիան անդամ պետությանը պարտավորեցնում է հաշվի առնել երեխայի լավագույն շահերը, բացառել խտրականությունը և հարգանք դրսևորել երեխայի ցանկությունների նկատմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության հաջորդ առանցքային փաստաթուղթը Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների ան-

¹³ <http://www2.ohchr.org/english/law/cedaw.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թ.:

¹⁴ <http://www2.ohchr.org/english/law/cat.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թ.:

¹⁵ <http://www2.ohchr.org/english/law/crc.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թ.:

դամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան է¹⁶, որն օրինական ուժ է ստացել 2003 թ.:

2006 թ. ՄԱԿ-ի շրջանակներում ընդունվել են երկու նոր փաստաթղթեր, որոնցից առաջինը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին¹⁷ կոնվենցիան է: Կոնվենցիային անդամ պետությունները պարտավոր են խտրական վերաբերմունք չդրսևորել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել նման խտրականությունը վերացնելու համար: Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներից են որոշում ընդունելու, ամուսնանալու, ընտանիք ունենալու, աշխատելու և կրթություն ստանալու իրավունքները:

Մարդու իրավունքների հաջորդ փաստաթուղթը Բոլոն անձանց բռնի անհետացումներից պաշտպանության մասին կոնվենցիան է¹⁸, որն ուժի մեջ է մտել 2010 թ. դեկտեմբերի 23-ին:

Մարդու իրավունքների պաշտպանության հիշատակված փաստաթղթերին մասնակցող պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքին հետևելու համար ստեղծվում են հատուկ մոնիտորինգային մարմիններ: Անդամ պետությունը պարտավոր է իր ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ պարբերական զեկույցներ ներկայացնել ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին: Այս մարմինները պարբերական այցելություններ են կատարում անդամ պետություններ և զեկույցներ կազմում մոնիտորինգի արդյունքների մասին:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 28-րդ հոդվածի հիման վրա ստեղծվեց Մարդու իրավունքների կոմիտեն¹⁹, որը բաղկացած է 18 փորձագետներից, ովքեր ընտրվում են անդամ պետությունների կողմից՝ իրենց քաղաքացիներից, և իրենց գործառույթներն իրականացնում են անհատական կարգով: Կոմիտեն տարեկան անցկացնում է երեք նստաշրջան, որի հիմնական խնդիրներից մեկը անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային զեկույցների քննարկումն է, որոնք բովանդակում են դաշնագրով ճանաչվող իրավունքների կենսագործման բնագավառում ձեռք բերված առաջադիմության մասին տեղեկություններ:

¹⁶ <http://www2.ohchr.org/english/law/cmw.htm>. Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի միացել:

¹⁷ <http://www2.ohchr.org/english/law/disabilities-convention.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թ.:

¹⁸ <http://www2.ohchr.org/english/law/disappearance-convention.htm>. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2011 թ.:

¹⁹ «Մարդու իրավունքներ», ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ընտրանի, Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ, Երևան, 2009 թ., էջ 23:

Այդ զեկույցների քննարկման ժամանակ կոմիտեն հատուկ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների ներպետական պաշտպանության դատական և վարչական մեխանիզմների, մարդու իրավունքների խախտումների վերացման և կրած վնասի հատուցման կարգի, մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների, մարդու իրավունքների իրականացման վրա ներպետական հսկողության մեխանիզմների առկայության վրա և այլն:

Բացի այդ, Միջազգային դաշնագրի կամընտրական արձանագրությանը համապատասխան՝ կոմիտեն կարող է նաև քննարկել դաշնագրով նախատեսված իրավունքների խախտման վերաբերյալ այն քաղաքացիների հաղորդագրություններն ու բողոքները, որոնց քաղաքացիական պատկանելության պետության վրա տարածվում է կոմիտեի իրավասությունը²⁰: Դաշնագրի կամընտրական արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ կոմիտեն ընդունում, քննում է այն բողոքները, որոնց հեղինակները հաստատում են, որ հանդիսանում են մարդու իրավունքների ոտնահարման գոհեր:

Առաջին փուլում կոմիտեի կողմից որոշվում է բողոքի քննության թույլատրելի հարցը. դրական որոշման արդյունքում բողոքը ներկայացվում է այն պետությանը, որի դեմ հարուցված է այն: Այդ պետությունը վեց ամսվա ընթացքում կոմիտեին բողոքի կապակցությամբ ներկայացնում է գրավոր բացատրություն: Քաղաքացու կողմից բերված բողոքն ու գրավոր բացատրությունը համատեղ քննարկվում են կոմիտեի նիստում, որտեղ կողմերը կարող են բանավոր ելույթներով ներկայացնել գործի փաստացի հանգամանքները: Արդյունքում կոմիտեի կողմից ընդունվում է որոշում, որը կոչվում է եզրահանգում:

Չնայած եզրահանգումները չունեն պարտադիր իրավաբանական ուժ, սակայն կոմիտեն կարող է իրականացնել դրանց կենսագործման ուղղությամբ համապատասխան միջոցներ²¹: Օրինակ՝ կոմիտեն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ներկայացվող տարեկան զեկույցներում կարող է ներկայացնել «սև ցուցակում» ընդգրկված դաշնագրային պարտավորությունների կատարումից խույս տված պետությունների ցանկը: Ինչ վերաբերում է միջպետական վեճերին, ապա կոմիտեն ընդամենը կարող է ստանձնել դրանց կապակցությամբ ընկերական լուծման միջնորդի դերը²²:

²⁰ Human Rights in the Developed World; Accessed February 10 2010; American Journal of International Law.

²¹ «Մարդու իրավունքներ», ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ընտրանի, Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ, Երևան, 2009 թ., էջ 23:

²² «ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող հիմնական մարմինները», Accessed February 18 2010; Available from <http://www.un.am/>.

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն հետևում է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի²³ դրույթների իրականացմանը²⁴: Իր կառուցվածքով, կազմով և գործունեության ձևով կոմիտեն նման է Մարդու իրավունքների կոմիտեին: Այն բաղկացած է 18 անդամներից, որոնք հանդես են գալիս անհատական կարգով: Դաշնագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ կոմիտեն ուսումնասիրում է անդամ պետությունների զեկույցները՝ դաշնագրով նախատեսված իրավունքների կենսագործման բնագավառում ձեռք բերված առաջադիմության համատեքստում: Ի տարբերություն Մարդու իրավունքների կոմիտեի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն դեռ չի քննարկում քաղաքացիների անհատական բողոքները:

Մարդու սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները չեն հանդիսանում բացարձակ իրավունքներ, և շատ հաճախ պետությունները մի շարք օբյեկտիվ պատճառներով (օրինակ՝ տնտեսական շրջափակում, բնական և այլ պաշարների անբավարարություն, պատերազմական իրավիճակ, բնակչության անգրագիտության բարձր չափանիշ, գործազրկության բարձր տոկոս, աշխարհաքաղաքական առանձնահատկություններ և այլն) ի վիճակի չեն լինում դրանք իրականացնել: Այդ է պատճառը, որ Դաշնագիրը անդամ պետություններին պատավորեցնում է ոչ թե կատեգորիկ ձևով ապահովել մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, այլ ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները այդ իրավունքների իրականացման բնագավառում առաջադիմության հասնելու համար: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն հիմնականում նախապատրաստում է ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի որոշումների նախագծերը:

Ռասայական խտրականությունների վերացման կոմիտեն կոնվենցիոն վերահսկողության առաջին մարմինն է, որի ստեղծումը (1969 թ.) նախադեպ հանդիսացավ նմանատիպ մյուս իրավապաշտպան կառույցների ստեղծման համար²⁵: Կոմիտեն կոչված է հետևելու «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի իրականացմանը: Կոմիտեն լիազորված է հիմնելու մշտական աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ, որոնք քննում են կոնվենցիայի դրույթների ոտնա-

²³ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրին կից արձանագրությունը ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2008 թվականի Դեկտեմբերի 10-ին:

²⁴ Human Rights in the Developed World; Accessed February 10 2010; American Journal of International Law.

²⁵ «ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող հիմնական մարմինները», Accessed February 16 2010; Available from <http://www.un.am/>.

հարման կապակցությամբ ոչ միայն անդամ պետությունների միջպետական վեճերը, այլ նաև քաղաքացիների անհատական բողոքները: Անհատական բողոքների քննությունը թույլատրվում է բացառապես ներպետական պաշտպանության միջոցների սպառման դեպքում: Քաղաքացիների անհատական բողոքները կոմիտեն քննում է գաղտնի կերպով և ներկայացնում է այն պետությանը, որի դեմ բերված է բողոքը՝ չնշելով քաղաքացու անունը: Պետության կողմից ներկայացված բացատրություններից հետո կոմիտեն ձևակերպում է իր առաջարկություններն ու եզրակացությունները վեճի վերաբերյալ: Կանանց նկատմամբ խտրականության ձևերի վերացման կոմիտեն ստեղծվել է 1982 թ. «Կանանց նկատմամբ խտրականության ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի²⁶ 17-րդ հոդվածին համապատասխան: Այն բաղկացած է 23 փորձագետներից, ովքեր ընտրվում են անդամ պետությունների կողմից չորս տարի ժամկետով: Վերջիններս պետք է օժտված լինեն բարոյական բարձր հասկանիչներով և մեծ հեղինակություն ունենան մարդու իրավունքների բնագավառում իրենց ունեցած գիտելիքներով: Կոմիտեի անդամների ընտրության ժամանակ հաշվի է առնվում մանդատների արդար աշխարհագրական բաշխման սկզբունքը: Կոնվենցիայի 18-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են ներկայացնել զեկույցներ կոնվենցիայի դրույթների իրագործմանն ուղղված օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցների ձեռնարկման վերաբերյալ:

Խոշտանգումների դեմ կոմիտեն ստեղծվել է 1987 թ. «Խոշտանգումների, դաժան, անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և պատժի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի²⁷ 17-րդ հոդվածի համապատասխան²⁸: Այն բաղկացած է 10 փորձագետներից, ովքեր մարդու իրավունքների բնագավառում հեղինակություն վայելող անձինք են և ընտրվում են անդամ պետությունների կողմից ներկայացված թեկնածուների թվից չորս տարի ժամկետով: Այս մարմնի առանձնահատկությունն այն է, որ նա անմիջականորեն ստանում է ոչ կառավարական և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների կողմից տրված բողոքներն ու հաղորդագրությունները: Կոմիտեն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբ-

²⁶ «Կանանց նկատմամբ խտրականության ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիային կից արձանագրությունը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է 1999 թվականի Հոկտեմբերի 6-ին: Ուժի մեջ է մտել 2000 թվականի Դեկտեմբերի 22-ին:

²⁷ «Խոշտանգումների, դաժան, անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և պատժի վերացման մասին» կոնվենցիային կից արձանագրությունը ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2002 թվականի Դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հունիսի 22-ին, <http://www2.ohchr.org/english/law/cat-one.htm>:

²⁸ “Human Rights Bodies”; Accessed February 01 2010; Available from <http://www.ohchr.org/EN/HRBodies/Pages/HumanRightsBodies.aspx>.

լեային ամենամյա զեկույց է ներկայացնում իր կողմից կատարված աշխատանքների մասին: Կոմիտեի աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը համարվում է անդամ պետությունների կողմից կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ զեկույցների քննարկումը (հոդված 19): Ամեն չորս տարին մեկ անդամ պետությունները ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջոցով ներկայացնում են զեկույց կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ:

Ի տարբերություն մյուս կոնվենցիոն մարմինների՝ կոմիտեն խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կապակցությամբ անդամ պետությունների տարածքում, վերջիններիս համաձայնությամբ, կարող է նախաձեռնել սեփական հետաքննություն (արտագնա առաքելություն)²⁹: Դրա նպատակն է տեղում վկաներից ու ակնատեսներից ցուցումներ վերցնել մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների կապակցությամբ: Արդյունքում կոմիտեն տալիս է եզրակացություն, որն էլ ներկայացվում է համապատասխան իրավախախտ պետությանը:

- Երեխայի իրավունքների կոմիտեն ստեղծվել է 1991 թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի³⁰ հիման վրա: Այն բաղկացած է 10 փորձագետներից, ովքեր ունեն բարոյական բարձր հատկանիշներ և մարդու իրավունքների բնագավառում մեծ հեղինակություն: Վերջիններս ընտրվում են անդամ պետությունների կողմից՝ իրավական համակարգերի և տարածաշրջանային արդար ներկայացուցչության սկզբունքով: Կոմիտեի անդամների լիազորությունների ժամկետը չորս տարի է: Նրանք գործում են անհատական կարգով: Այս մարմնի գործունեության առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն մյուս կոնվենցիոն մարմինների, կոմիտեն սերտ համագործակցում է ՄԱԿ-ի մյուս հաստատությունների հետ, և վերջինիս աշխատանքում ապահովված է հրապարակայնության բարձր մակարդակ: Կոմիտեի հիմնական գործառնությունն անդամ պետությունների կողմից «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի

²⁹ «ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող հիմնական մարմինները», Accessed February 01 2010; Available from <http://www.un.am/>.

³⁰ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի»-ն կից ընդունվել են երկու արձանագրություններ: 2000 թվականի Մայիսի 25-ին ընդունվել են «Զինված հակամարտություններում երեխաների ներգրավման մասին» (ուժի մեջ է մտել 2002 թվականի Հունիսի 12-ին) և «Մանկավաճառության» երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» (ուժի մեջ է մտել 2002 թվականի Հունվարի 18-ին) կամընտիր արձանագրությունները:

դրույթների իրականացման մասին զեկույցների քննարկումն է, որոնք ներկայացվում են հինգ տարին մեկ անգամ:

Այսպիսով՝ մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության կոնվենցիոն կամ պայմանագրային մեխանիզմը կարելի է ամփոփ ներկայացնել հետևյալ կերպ.

- Պայմանագրային մեխանիզմներով վերահսկվում է մարդու իրավունքների դաշտին վերաբերող հիմնական միջազգային պայմանագրերի կենսագործումը:
- Ստեղծված տարբեր կոմիտեները կազմված են անկախ փորձագետներից, ովքեր գործում են անհատապես և ոչ որպես իրենց կառավարությունների ներկայացուցիչներ, թեև ընտրվում են անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից:
- Անդամներն ընտրվում են աշխարհագրական արդարացի բաշխման սկզբունքով՝ այդպիսով երաշխավորելով հավասարակշիռ ներկայացուցչությունն ու իրազեկությունը հիմնական իրավական համակարգերում:
- Պայմանագրերի կատարումը վերահսկող մարմինների հիմնական գործառույթներն են՝ մասնակից պետությունների ներկայացրած զեկույցների ուսումնասիրումը և մարդու իրավունքների խախտումների մասին գանգատները քննության առնելը:
- Պայմանագրերի հատուկ դրույթների մեկնաբանում կարելի է գտնել գանգատների վերաբերյալ «կարծիքներում», ինչպես նաև պետությունների ներկայացրած զեկույցների առնչությամբ ընդունված «եզրափակիչ դիտողություններում» կամ «եզրափակիչ մեկնաբանություններում»:
- Բացի այդ, պայմանագրերը վերահսկող մարմինները ձևակերպում և ընդունում են «ընդհանուր մեկնաբանություններ» և «ընդհանուր հանձնարարականներ», որոնց միջոցով ներկայացնում են տարբեր հարցերի վերաբերյալ իրենց ըմբռնումն ու փորձը: Ներկայումս գոյություն ունեն մեծ թվով ընդհանուր մեկնաբանություններ և հանձնարարականներ, որոնք ծառայում են իբրև պայմանագրերի մեկնաբանման արժեքավոր աղբյուրներ:

ՄԱԿ-ում, վերը նշված միջազգային պայմանագրերով ստեղծված մարմիններին զուգահեռ, գոյություն ունեն Կանոնադրական մարմիններ, որոնք ստեղծվել են ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա:

2006 թ. մարտի 15-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ստեղծեց Մարդու իրավունքների խորհուրդ, որը մինչ այդ նույն նպատակով ստեղծված հանձնաժողովի իրավահաջորդն է: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը

բաղկացած է 47 անդամ պետություններից, որի անդամները ընտրվում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի անդամների մեծամասնության կողմից ուղղակիորեն և անհատապես՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Ընդ որում՝ խորհրդում անդամությունը հիմնված է աշխարհագրական հավասար և արդարացի բաշխման վրա. աֆրիկյան խումբ՝ 13, ասիական խումբ՝ 13, արևելյան եվրոպական խումբ՝ 6, լատինաամերիկյան և կարիբյան խումբ՝ 8, արևմտյան եվրոպական և այլ խումբ՝ 7 անդամ: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը 3 տարի է, նրանք չեն կարող երկու անգամից ավելի անընդմեջ վերընտրվել:

Մարդու իրավունքների խորհրդում անդամությունը բաց է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների համար: Խորհրդի անդամներ ընտրելիս անդամ պետությունները պետք է հաշվի առնեն, թե առաջադրված թեկնածուներն ինչ ավանդ ունեն մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման ոլորտում: Նրանք պետք է խստագույնս համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման բարձրագույն չափանիշներին և պաշտոնավարման ընթացքում նրանց գործունեությունը պետք է պարբերաբար գտնվի համապարփակ հսկողության ներքո: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր անդամների 2/3-ի մեծամասնության քվեով կարող է դադարեցնել խորհրդի անդամի լիազորությունները:

Խորհուրդը պատասխանատվություն է կրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համապարփակ հարգման և պաշտպանության համար³¹: Վերջինիս գործունեությունը պետք է լինի արդար ու հավասար, իսկ վերաբերմունքը՝ առանց որևէ տարբերության³²: Խորհուրդն արձագանքում և միջոցներ է ձեռնարկում մարդու իրավունքների խախտման դեպքերի կապակցությամբ՝ ներառյալ կոպիտ և պարբերաբար ոտնահարումները: Դրանց կապակցությամբ ընդունում է համապատասխան հանձնարարականներ:

Մարդու իրավունքների խորհուրդը կոչված է աջակցելու ՄԱԿ-ի համակարգում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում արդյունավետ համագործակցությանը³³: Վերջինս իր գործունեությունն իրականացնելիս պետք է ղեկավարվի համապարփակու-

³¹ “The Law of International Human Rights Protection”; Walter Kalin and Jorg Kunzil; Oxford University Press; p. 13.

³² Международные механизмы защиты прав человека; И. Ю. Лищина; Харьков; 2001; ст. 34.

³³ «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը Մարդու իրավունքների հանձնաժողովի իրավահաջորդ», Accessed February 24 2010; Available from <http://www.un.am/>.

թյան, օբյեկտիվության, անկողմնակալության, կառուցողական միջազգային երկխոսության և համագործակցության սկզբունքներով՝ նպատակ հետապնդելով ակտիվացնել մարդու քաղաքացիական, տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների խրախուսումն ու պաշտպանությունը՝ ներառյալ նաև զարգանալու իրավունքը:

Մարդու իրավունքների խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառնությունները.

ա) խրախուսում է մարդու իրավունքների ուսուցումն ու կրթությունը, ինչպես նաև նյութատեխնիկական օժանդակությունն է ցուցաբերում և խորհրդատվական ծառայություններ մատուցում անդամ պետություններին.

բ) ծառայում է որպես կենտրոն մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին առնչվող բոլոր հիմնահարցերի վերաբերյալ երկխոսության անցկացման համար.

գ) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային խորհրդատվություն է մատուցում մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքի հետագա զարգացման վերաբերյալ.

դ) աջակցում է ՄԱԿ-ի անդամ պետություններին՝ կատարելու մարդու իրավունքների ոլորտում ստանձնած բոլոր պարտավորությունները և հետևելու ՄԱԿ-ի խորհրդածոդովներից ու գազաթաժոդովներից բխող նպատակներին ու հանձնարարականներին.

ե) օբյեկտիվ և ճշգրտված տեղեկատվության հիման վրա իրականացնում է համապարփակ պարբերաբար դիտարկումներ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ այն հաշվով, թե վերջիններս ինչ միջոցներ են ձեռնարկում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խրախուսման ու պաշտպանության ուղղությամբ.

զ) երկխոսության ու համագործակցության միջոցով աջակցում է մարդու իրավունքների ոտնահարումների կանխմանը և արագորեն արձագանքում մարդու իրավունքների ոտնահարման արտակարգ դեպքերին.

է) մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում սերտորեն համագործակցում է կառավարությունների, տարածաշրջանային կազմակերպությունների, մարդու իրավունքների ազգային հաստատությունների և քաղաքացիական հասարակության հետ.

ը) ընդունում է հանձնարարականներ մարդու իրավունքների ու ազատությունների խրախուսմանն ու պաշտպանությանն առնչվող հարցերով.

թ) տարեկան զեկույց է ներկայացնում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային:

Մարդու իրավունքների խորհուրդը ստանձնել է Մարդու իրավունքների հանձնաժողովի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնա-

կատարի գրասենյակին առնչվող աշխատանքի պատասխանատվությունը, որի վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան որոշում էր կայացրել իր 1993 թ. դեկտեմբերի 20–ի 48/141 բանաձևով: Բացի այդ, խորհրդին են փոխանցվել նաև Մարդու իրավունքների հանձնաժողովի բոլոր այն մանդատները, մեխանիզմները, գործառույթներն ու լիազորությունները, որոնք անհրաժեշտ են ամրապնդելու հատուկ ընթացակարգերի համակարգը, փորձագետների կողմից խորհրդատվությունների իրականացումը և բողոքների քննության ընթացակարգը: Վերջինս պարտավոր է կատարելագործել և արդյունավետ դարձնել այդ գործառույթներն ու մանդատները:

Խորհուրդը կանոնավոր կերպով գումարում է տարեկան ոչ պակաս, քան երեք նստաշրջան, ներառյալ գլխավոր նստաշրջանը, որոնց տևողությունն ընդհանուր առմամբ պետք է լինի ոչ պակաս, քան 10 շաբաթ: Անհրաժեշտության դեպքում խորհուրդը կարող է գումարել հատուկ նստաշրջան՝ անդամների առնվազն 1/3–ի նախաձեռնությամբ:

Փաստահավաք ու հետաքննական մեխանիզմները հավաքական անվանումով կոչվում են «հատուկ ընթացակարգեր», որոնք ստեղծվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների նախկին հանձնաժողովի կողմից և շարունակվում են Մարդու իրավունքների խորհրդում: Խորհրդի կամ Տնտեսցիտրիի լիազորած «հատուկ զեկուցողները», «հատուկ ներկայացուցիչները» կամ «անկախ փորձագետները» վերահսկում են մարդու իրավունքների ոտնահարումներն առանձին պետություններում կամ քննարկում են մարդու իրավունքների համընդհանուր խնդիրները: «Հատուկ ընթացակարգերի» ուժը նրանց անկախության մեջ է: Ինքնուրույնությունը պահպանելու համար փորձագետները չեն վարձատրվում իրենց աշխատանքի համար:

Բացի ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային փաստաթղթերից, կան նաև տարածաշրջանային մեխանիզմներ:

1949 թ. մայիսի 5-ին Եվրոպական 11 երկրների կառավարություններ որոշում կայացրին հիմնել Եվրոպայի խորհուրդը: Այն դարձավ առաջին մայրցամաքային կառույցը, որը հատուկ ստեղծվեց մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Այդ կառույցի հիմնական նպատակն էր ժողովրդավարության ամրապնդումը, մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովումը, սոցիալական, մշակութային և իրավական ոլորտներում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների առջև ծառայած խնդիրների

համատեղ լուծումը³⁴: Այդ միջազգային տարածաշրջանային կազմակերպությունը բավականին ակտիվ դեր ունի մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործընթացում:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտն ամբողջական դարձնելու նպատակով Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը 1950 թ. նոյեմբերի 4-ին ընդունեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան³⁵ (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա): Այն հիրավի Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար կարծես միջպետական «սահմանադրություն» լինի, որի հիմնական նպատակն է ձեռք ձեռքի տված ընդհանուր ջանքերով Եվրոպայում իրականացնել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Կեսդարյա գործողության ընթացքում կոնվենցիան համարվել է 14 լրացուցիչ արձանագրություններով, որոնց մի մասը ընդարձակել է փաստաթղթում ամրագրված իրավունքների և ազատությունների բովանդակությունը, իսկ մյուս մասը կատարելագործել է մարդու իրավունքների պաշտպանության ընթացակարգերը: Կոնվենցիան վավերացվել է Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունների կողմից և կոչված է պաշտպանելու մարդու իրավունքներն ու ազատությունները պետությունների ոչ իրավաչափ գործողություններից³⁶: Կոնվենցիայի արժեքը ոչ թե պայմանավորված է հռչակված իրավունքներով, այլ այդ իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմներով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայով նախատեսվում են մարդու իրավունքների պաշտպանության երկու պաշտոնական իրավական կառույցներ՝ Մարդու իրավունքների հանձնաժողովը և Եվրոպական դատարանը, որոնց կողմից իրականացվում է մարդու իրավունքների իրական և օբյեկտիվ պաշտպանություն, և որոնց արդյունավետությունը միջազգային ծավալներով անգերեզանցելի է:

1998 թ. կոնվենցիայի վերահսկողական մեխանիզմների վերակազմավորման արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը դադարեցրեց իր գործունեությունը և մարդու իրավունքների պաշտպանության միակ մարմինը մնաց Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարվում է անկախ

³⁴ "International Human Rights and Humanitarian Law; Treaties, Cases and Analysis" Martin/Schnably/Wilson/Simon/Tushet; Cambridge University Press; p. 21.

³⁵ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2002 թ. ապրիլի 26-ին:

³⁶ Human Rights Protection Systems; Accessed February 21 2010; Available from <http://www.huriresearch.org/>.

միջազգային դատական մարմին: Դատարանի իրավասության մեջ մտնում են այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և նրան կից արձանագրությունների մեկնաբանություններին և կիրառությանը:

Դատարանը կարող է գանգատներ ընդունել ոչ միայն անդամ պետություններից, այլև ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են կոնվենցիայով կամ նրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ անդամ պետության կողմից թույլ տրված խախտման գոհ: Ընդ որում՝ կոնվենցիան անդամ պետություններին պարտավորեցնում է որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը: Որպես պատասխանող կողմ հանդես են գալիս միայն պետությունները:

Դատարանը ցանկացած գործ քննելիս առաջին հերթին փորձում է վեճը լուծել բարեկամական կարգավորման միջոցով³⁷: Հաջողության դեպքում դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որում ներկայացվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը: Եթե վեճը հնարավոր չի լինում լուծել բարեկամական կարգավորման ընթացակարգով, ապա դատարանը ձեռնամուխ է լինում գործի քննությանը: Դիմումատուի կողմից ներկայացված փաստարկներն ուսումնասիրելուց հետո դատարանն այն ուղարկում է պատասխանող կողմ հանդիսացող պետությանը, որը պետք է դատարանին ներկայացնի բերված փաստարկների կապակցությամբ իր գրավոր առարկությունները:

Վերջին տարիներին Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ձևավորված պրակտիկայի համաձայն³⁸՝ դատարանը որոշումները կայացնում է դիմումատուի կողմից բերված փաստարկների ու պատասխանող կողմի գրավոր առարկությունների գնահատման հիման վրա, որի արդյունքում հիմնականում կողմերի համար անհրաժեշտություն չի առաջանում Ստրասբուրգում անձամբ մասնակցելու դատաքննությանը³⁹:

Չնայած նրան, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներպետական մակարդակում պետությունների համար չունի պարտադիր իրավաբանական ուժ, այդուամենայնիվ, ներպետական մարմինները կրում

³⁷ “The Law of International Human Rights Protection”; Walter Kalin and Jorg Kunzli; Oxford University Press; p. 45.

³⁸ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», գիտական խմբագիր՝ Գ. Հարությունյան, Երևան, 2005, էջ 31:

³⁹ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը», գիտական խմբագիր՝ Գ. Հարությունյան, Երևան, 2005, էջ 27:

են այն հաշվի առնելու և դրան հետևելու պարտավորություն: Մա նշանակում է ոչ թե անվերապահորեն, որպես վարքագծի պարտադիր կանոն հիմք ընդունել Եվրոպական դատարանի նախադեպային նշանակության վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները, այլ մարդու իրավունքների ներպետական պաշտպանության գործառույթն օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործունեության մակարդակում իրականացնել այդ իրավական դիրքորոշումներին համահունչ՝ ապահովելով մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափանիշներ:

ՀՀ Մահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հայաստանի Հանրապետության Դատական Օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով.. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը ոչ միայն ուղղակիորեն պաշտպանում է անհատի իրավունքներն ու ազատությունները, այլ նաև ազգային դատարանների որոշումների, վճիռների ու դատավճիռների վերանայման միջոցով պետություններին պարտավորեցնում է վերանայել և կատարելագործել ազգային օրենսդրության համապատասխան բնագավառները⁴⁰:

Սակայն դա չի նշանակում, որ Եվրոպական դատարանը կարող է բարձրագույն աստիճանի հանդիսանալ անդամ պետությունների դատական իշխանությունների համար կամ վերացնել անդամ պետությունների պետական իշխանության մարմինների ակտերը, կամ էլ ազգային օրենսդրության նկատմամբ իրականացնել վերացական վերահսկողություն: Վերջինս նյութական կամ բարոյական վնասի ֆինանսական փոխհատուցման ձևով գործը շահած պահանջատիրոջը շնորհում է «արդար բավարարում»:

Միաժամանակ պետք է նշել, որ դատարանի որոշումներն իրավաբանորեն պարտադիր են միայն պատասխանող կողմ հանդիսացող պետության

⁴⁰ International Human Rights Protection; Accessed February 21 2010; Available from http://www.cdp-hrc.uottawa.ca/eng/doc/inter-web/sitesint_e.php.

համար: Իր երկարատև գործունեության ընթացքում անդամ պետությունների կողմից դատարանի որոշման չկատարման որևէ փաստ չի արձանագրվել: Դատարանի որոշումների չկատարումը կարող է հանգեցնել Եվրոպայի խորհրդի անդամության կասեցմանը կամ, վերջին հաշվով, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի որոշմամբ՝ Եվրոպայի խորհրդի կազմից պետության հեռացմանը: Դա բացատրվում է նրանով, որ մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգում գործող իրավապաշտպան ինստիտուտները անկախ են պետությունների ինքնիշխանության ազգային համակարգից: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, մարդու իրավունքները դասելով համամարդկային արժեքների շարքը, գիտակցաբար հրաժարվել են իրենց որոշ լիազորություններից՝ հոգուտ միջազգային աստիճանների դրանով իսկ վերջիններիս հնարավորություն ընձեռելով իրականացնելու անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետությունների ոտնձգություններից՝ իրավախախտ պետությունների նկատմամբ համապատասխան սանկցիաներ կիրառելու ճանապարհով:

1975 թվականի օգոստոսի 1-ին եվրոպական 33 երկրների, ինչպես նաև Միացյալ Նահանգների և Կանադայի ղեկավարներն, իրենց ստորագրություններով ամրագրեցին Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդածոդովի Հելսինկյան Եզրափակիչ ակտը, որը սկիզբ դրեց անվտանգության ու համագործակցության ապահովման նոր կառույցի: Այն սկզբում կոչվեց Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդածոդով (ԵԱՀԽ), այնուհետև՝ 1995 թ. հունվարից, վերանվանվեց՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ): Ներկայումս ԵԱՀԿ-ն ունի 57 մասնակից պետություն⁴¹:

Հելսինկյան գործընթացի շնորհիվ մասնակից պետությունները ստացան մշտական հաղորդակցության հուսալի միջոց ամրապնդելու խաղաղությունն ու կայունությունը⁴²: Հելսինկյան եզրափակիչ ակտում մասնակից պետությունները համաձայնեցին առաջնությունը տալ հետևյալ տասը սկզբունքներին՝ պետությունների ինքնիշխան հավասարության և ինքնիշխանությանը հատուկ իրավունքների հարգման, ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու, սահմանների անխախտելիության, պետությունների տարածքային անբողջականության, վեճերի խաղաղ կարգավորման, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման՝ ներառյալ մտքի, խղճի, կրոնի կամ դավանանքի ազատու-

⁴¹ <http://www.osce.org/>.

⁴² Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն. Պատմությունը, գործունեությունը, հեռանկարները: Երկրորդ հրատարակություն, Երևան, 2006, էջ 29:

թյան, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքների, պետությունների համագործակցության և միջազգային իրավունքով ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքները:

ԵԱՀԿ մասնակից բոլոր պետություններն ունեն հավասար կարգավիճակ և Կազմակերպության ներսում որոշումներն ընդունվում են կոնսենսուսի սկզբունքով: Չնայած նրան, որ ԵԱՀԿ հիմնադրույթները քաղաքական պարտավորություններ են և իրավաբանական պարտադիր ուժ չեն ենթադրում, ԵԱՀԿ շրջանակներում ընդունված գրեթե յուրաքանչյուր փաստաթղթի տրվում է իրավաբանական ձև, իսկ դրա բովանդակության մեկնաբանությունը ելնում է միջազգային իրավական սկզբունքներից և միջազգային պայմանագրային իրավունքի նորմատիվային մեթոդաբանությունից⁴³: Այսպես՝ Հելսինկյան Եզրափակիչ ակտը միջազգային-իրավական տեսանկյունից եզակի կարգավիճակ ունի. չլինելով միջազգային պայմանագիր և չունենալով պարտադիր իրավաբանական ուժ, իրականում կոնսենսուսով հավանության արժանանալուց հետո դարձավ վստահելի հենք իրավաբանական բանավեճերի կարգավորման համար և մեծապես նպաստեց ժամանակակից միջազգային իրավունքի զարգացմանը⁴⁴:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության անվանումը հուշում է, որ ԵԱՀԿ-ի հիմնական մտահոգությունը անվտանգությունն է⁴⁵: ԵԱՀԿ-ն միջազգային այլ կազմակերպություններից հիմնական տարբերիչ առանձնահատկությունը անվտանգության խնդիրների նկատմամբ համապարփակ մոտեցումներն են՝ քաղաքական և ռազմական, տնտեսական, և բնապահպանական և մարդկային չափման ոլորտներում կամ «զամբյուղներում»: Այսպես՝ ԵԱՀԿ մասնակից պետությունների կողմից ստանձնած մարդկային չափման պարտավորությունների մեջ են մտնում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգումը, պաշտպանությունն ու իրականացումը, ժողովրդավարության և օրենքի գերակայության սկզբունքների իրականացմանը նպաստելն ու աջակցելը, ժողովրդավարական հաստատությունների հիմնումը, որն իրականացվում է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) աջակցությամբ:

ԵԱՀԿ կողմից մի շարք գործիքներ են օգտագործվում մասնակից պետությունների՝ մարդու իրավունքների կապակցությամբ ստանձնած պարտավո-

⁴³ Международные механизмы защиты прав человека; И. Ю. Лицина; Харьков; 2001; ст. 67.

⁴⁴ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն. Պատմությունը, գործունեությունը, հեռանկարները: Երկրորդ հրատարակություն, Երևան, 2006, էջ 24:

⁴⁵ "International Human Rights and Humanitarian Law; Treaties, Cases and Analysis"; Martin /Schnably/ Wilson/Simon/Tushet; Cambridge University Press; p. 15.

րությունների կատարման վիճակի դիտարկումներ իրականացնելու համար: Այդ գործիքներից մեկը «Մարդկային չափման մեխանիզմ» է, որը կարող է ժամանակավորապես կյանքի կոչվել առանձին մասնակից պետության կամ պետությունների խմբի կողմից: Այն բաղկացած է երկու գործիքներից՝ Վիեննայի մեխանիզմ, որը հաստատված է 1989 թ. Վիեննայի եզրափակիչ փաստաթղթով, և Մոսկովյան մեխանիզմ, որը հաստատվել է 1991 թ. Մարդկային չափման խորհրդածողովի Մոսկվայի հանդիպմանը, ընդ որում Մոսկովյան մեխանիզմն ըստ էության Վիեննայի մեխանիզմի զարգացումն է⁴⁶:

Վիեննայի մեխանիզմը թույլ է տալիս մասնակից պետությանը սահմանված ընթացակարգերին համապատասխան բարձրացնել այլ ԵԱՀԿ պետություններում մարդկային չափմանը վերաբերող իրավիճակներ կամ հարցեր: Մոսկովյան մեխանիզմը, առավել զարգացնելով նախորդը, թույլ է տալիս մասնակից պետություններին ստեղծել տվյալ հարցի շուրջ անկախ փորձագետների առաքելություններ, որոնք պետք է աջակցեն «Մարդկային չափման» կոնկրետ խնդիրների լուծմանը՝ տվյալ պետության կամ ԵԱՀԿ մասնակից այլ պետության տարածքում⁴⁷:

Առ այսօր Մոսկովյան մեխանիզմը օգտագործվել է բազմիցս, այդ թվում՝

- Եվրամիության 12 երկրների և Միացյալ Նահանգների կողմից Խորվաթիայում և Բոսնիա-Հերցեգովինայում անգեն քաղաքացիական բնակիչների նկատմամբ բռնությունների կիրառման զեկույցների կապակցությամբ՝ 1992 թ.,

- Էստոնիայի կողմից՝ Էստոնական օրենսդրությունը ուսումնասիրելու և մարդկային իրավունքների համընդհանուր սկզբունքների հետ դրաներդաշնակությունը պարզելու կապակցությամբ և այլն:

Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ Սահմանադրության և օրենքների մտտեցումները

ՀՀ Սահմանադրությունը նույնպես մարդու իրավունքները ճանաչում և պաշտպանում է որպես բարձրագույն արժեք:

Սահմանադրության 2-րդ գլուխը (14-48-րդ հոդվածներ) ամբողջությամբ նվիրված է մարդու իրավունքներին: Այն քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային իրավունքների և հիմնարար ազատությունների մասով հիմնականում ընդօրինակել է միջազգային փաստաթղթերում մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան դրույթների

⁴⁶ <http://www.osce.org/odihr/43666>.

⁴⁷ <http://www.osce.org/odihr/43666>.

բովանդակությունները, ինչը ՀՀ Սահմանադրությունը ներդաշնակում է մարդու իրավունքների միջազգային զարգացման գործընթացներին:

Այս իմաստով հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, և եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել: Հետևաբար, վավերացված միջազգային պայմանագրերն ունեն գերակայություն ՀՀ օրենքների նկատմամբ:

Մարդու իրավունքների առանձին տեսակների վերաբերյալ ՀՀ-ն ունի նաև առանձին օրենքներ, որոնք առավել մանրամասն են կարգավորում իրավունքների իրականացման և պաշտպանության ընթացակարգերը: Այդ օրենքներից են ՀՀ ընտրական օրենսգրքը, «Ժողովներ, հավաքներ, հանրահավաքներ և ցույցեր անցկացնելու մասին», «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» և այլ ՀՀ օրենքներ, որոնց կանդիդատանք մարդու իրավունքների առանձին տեսակների ուսումնասիրության փուլերում:

3. Ձինվորական ծառայություն և մարդու իրավունքներ, զինվորական համազգեստով քաղաքացիներ

Ի՞նչ է զինվորական ծառայությունը, և ովքե՞ր են համարվում զինծառայողներ:

Այս հարցերի պատասխանը տալիս է «Ձինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «զինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության տեսակ է»: Նույն իրավանքումը տալիս է նաև երկրորդ հարցի պատասխանը. «Ձինծառայող համարվում են զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիները և ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտները»: Մինևույն ժամանակ, ՀՀ զինված ուժերում ծառայում են ժամկետային զինծառայողներ և հատուկ քաղաքացիական ծառայողներ⁴⁸:

Ձինվորական ծառայությունը առանձնանում է պետական ծառայության այլ տեսակներից նրանով, որ զինվորական ծառայողները կոչված են զինված ուժերի կազմում անմիջականորեն իրականացնել ՀՀ անվտանգու-

⁴⁸ «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 1: «Ձինծառայող» հասկացությունը սահմանվում է նաև «Ձինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, որի համաձայն՝ զինծառայողներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

թյան շահերի պաշտպանությունը, ինչպես նաև կարևոր դեր են կատարում մարդու իրավունքների պաշտպանության գործում:

ՀՀ զինված ուժերի զինծառայողներ են սպաները, ենթասպաները, ռազմաուսումնական հաստատությունների ուսանողները, սերժանտները, ավագները և զինվորները, որոնք զինվորական ծառայություն են կատարում:

Ինչպես և մի շարք իրավական համակարգերում, Հայաստանի Հանրապետությունում նույնպես ընդունված է զինծառայողներին որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելու սկզբունքը: Այս սկզբունքը նպաստում է, որ զինծառայողները զինվորական ծառայության պահանջների շրջանակներում կարողանան օգտվել այլ քաղաքացիների ունեցած ընդհանուր քաղաքացիական և սահմանադրական իրավունքներից:

Մասնավորապես, զինծառայողներն օգտվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներից և ազատություններից՝ հաշվի առնելով զինվորական ծառայության պայմաններից բխող սահմանափակումները: Չինծառայողների վրա դրվում են սահմանադրական, այլ համաքաղաքացիական պարտականություններ, ինչպես նաև ընդհանուր, ծառայության և հատուկ պարտականություններ՝ սահմանված զինվորական ծառայության պայմաններով⁴⁹: Չինծառայողներին՝ որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելը ակնհայտորեն բխում է զինված ուժերը հասարակության մեջ ինտեգրելու նպատակից՝ ի տարբերություն այն մոտեցման, թե զինված ուժերը մեկուսացված են քաղաքական և հասարակական կյանքից: Չինված ուժերի մարտունակության առաջնային հրամայականն է թիմային համախմբվածության և հրամանատարների ու նրանց ենթակաների միջև վստահության և հավատարմության պահպանումը: Մա առաջացնում է այնպիսի արժեքների ու չափանիշների անհրաժեշտություն, որոնք ավելի խիստ են, քան առհասարակ հասարակության մեջ ընդունվածները⁵⁰: Եթե զինված ուժերը ցանկանում են արդյունավետորեն ծառայել իրենց հասարակությանը, ապա դրանում տեղ չի գտնվի ճնշումների, հակասոցիալական վարքի դրսևորումների, իրավախախտումների, խտրականության, հետապնդումների և վարքի այլ անընդունելի դրսևորումների համար:

Ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական կազմը կարող է հանդես գալ զորամասերում տեղի ունեցող խախտումների պայքարի առաջին զծում:

⁴⁹ Նույն տեղում, հոդված 7:

⁵⁰ British Army, “Values and Standards of the British Army” (Բրիտանական բանակ, «Բրիտանական բանակի արժեքներն ու չափորոշիչները»), մարտ, 2000 թ., տե՛ս http://www.army.mod.uk/servingsoldier/usefulinfo/valuesgeneral/values/ss_hrpers_values_comd_w.html:

Նրանց ղեկավարումը կարևորագույն նշանակություն ունի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու համար: Այս առումով հրամանատարները պարտավոր են ակտիվ լինել (նախաձեռնող դեր ունենալ զինվորականների միջև փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտ ձևավորելու համար) և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրենց ենթակաների անօրինական գործողությունները կանխելու համար:

Որպես պետական ապարատի ներկայացուցիչներ՝ զինծառայողները պարտավոր են իրենց պարտականություններն իրականացնելու ընթացքում հարգել մարդու իրավունքները և պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Բայց զինծառայողները թե՛ գորամասերում, թե՛ մարտական պայմաններում իրենց առջև դրված խնդիրներն իրականացնելիս միայն այն դեպքում կպահպանեն նշված իրավունքները, եթե իրենց սեփական իրավունքները ապահովված լինեն:

2006 թ. ԵՄ Խորհրդարանական վեհաժողովի կողմից հաստատվել է անդամ պետությունների կողմից զինծառայողների մարդու իրավունքների ապահովման կարևորությունը. «...զինված ուժերի անձնակազմից մարդասիրական իրավունքի նորմերի ու մարդու իրավունքների պահպանում չի կարելի ակնկալել, եթե մարդու իրավունքները երաշխավորված չեն հենց զինված ուժերի շարքերում: Հետևաբար, էական է, որ զինված ուժերի ներսում Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված ուղեցույցները՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, զուգակցվեն մասնակից պետությունների այնպիսի քաղաքականության հետ, որն ուղղված լինի զինվորականների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը⁵¹:

Զինծառայողների իրավունքների համատեքստում առանձնակի նշանակություն ունեն մարդու իրավունքների սահմանափակումների բնույթն ու աստիճանը: Զինծառայողների համար մեծ է արտակարգ իրավիճակներում կենտրոնական դեր ստանձնելու հավանականությունը, որի պայմաններում մարդու իրավունքների (այդ թվում նաև իրենց իսկ իրավունքների) գործողությունը կարող է կասեցվել: Միաժամանակ որոշ հանգամանքներ, որոնց պայմաններում գործում են զինված ուժերը, կարող են զինծառայողների իրավունքների ընդունելի սահմանափակման հիմք հանդիսանալ անգամ ավելի հանդարտ պայմաններում: Հիմնական խնդիրն այն է, թե որ իրավունքները կարող են սահմանափակվել, ինչ հանգամանքներում, դատավարական ինչպիսի երաշխիքների առկայությամբ և ինչ չափով:

⁵¹ Եվրոպայի խորհուրդ, Խորհրդարանական վեհաժողով, թիվ 1742 (2006) հանձնարարական:

Միջազգային իրավունքի նորմերով ամրագրվող մարդու իրավունքները կարելի է դասակարգել երեք խմբի.

1. իրավունքներ, որոնցից վերապահումներ անելն արգելվում է (անվերապահելի կամ բացարձակ իրավունքներ),

2. իրավունքներ, որոնցից վերապահումներ կարելի է անել արտակարգ իրավիճակների ժամանակ (մասամբ սահմանափակման կամ վերապահման ենթակա իրավունքներ),

3. իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով՝ հանրային որոշ հստակեցված շահերի համաձայն:

Զինվորական ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ միջազգային իրավունքը նախատեսում է զինծառայողների քաղաքական իրավունքների սահմանափակումների հնարավորություն՝ հատկապես զինվորական կարգապահության, ազգային անվտանգության, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանության անհրաժեշտությամբ պայմանավորված: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը էնգելի գործով ամրագրել է. «Արտահայտվելու ազատությունը, ինչպես որ այն երաշխավորված է 10-րդ հոդվածով, զինծառայողների նկատմամբ կիրառելի է ճիշտ այնպես, ինչպես պայմանավորվող պետությունների իրավագործության ներքո գտնվող ցանկացած անձի նկատմամբ: Այդուամենայնիվ, զինված ուժերի պատշաճ գործունեությունը դժվար է պատկերացնել առանց իրավական այնպիսի նորմերի, որոնք մշակվում են զինծառայողների կողմից զինվորական կարգապահությունը խախտելը կանխելու համար»⁵²:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավաչափ է նաև զինվորականների կողմից քաղաքական կուսակցությանն անդամակցելը կամ որևէ քաղաքականության գործունեությամբ զբաղվելու արգելքը, քանի որ դրանք հետապնդում են իրավաչափ նպատակներ, մասնավորապես՝ ազգային անվտանգության և հասարակական անվտանգության պահպանումը և անկարգությունների կանխումը⁵³:

Եվրոպական կոնվենցիան իրավաչափ է համարում նաև զինծառայողների՝ ցույցերի և հավաքների մասնակցելու իրավունքի սահմանափակումները՝ համաչափության չափանիշներին բավարարելու պայմաններում: Միաժամանակ կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Սույն հոդվածը չի խոչընդոտում սահմանափակումներ նախատեսել զին-

⁵² Engel and Others v. the Netherlands, 8 June 1976, § 100 Series A no. 22.

⁵³ Rekvényi v. Hungary, 20 May 1999, Vol. 30, 2000, p. 519. Սույն գործում հարցը վերաբերում էր ոստիկանության աշխատակիցների իրավունքների սահմանափակումների իրավաչափությանը: Սակայն դատարանն ամրագրել է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև զինծառայողների նկատմամբ:

ված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»:

ՀՀ-ում զինծառայողների համար նախատեսված իրավունքների սահմանափակումները նախատեսվում են «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինծառայողն իրավունք չունի.

1) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

2) լինել Ազգային ժողովի պատգամավոր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնել ընտրովի կամ այլ պաշտոններ,

3) անդամակցել որևէ քաղաքական կուսակցության, կրոնական կամ արհեստակցական միության,

4) ոչ ծառայողական նպատակների համար զինված ուժերում և այլ զորքերում օգտագործել նյութական արժեքներ, տեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցներ,

5) կազմակերպել գործադուլներ կամ մասնակցել դրանց,

6) պաշտոնական դիրքն օգտագործել ի շահ քաղաքական կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության,

7) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,

8) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար,

9) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ժամկետային պարտադիր զինծառայողների համար նախատեսված են այլ սահմանափակումներ ևս: Այսպես՝ նրանք զրկված են տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու իրավունքից⁵⁴:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը սահմանում է զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները մի քանի նորմատիվ իրավական ակտերում: Զինծառայողներին տրվում են «Զինապարտության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին», «Զինվորական ծառայություն ան-

⁵⁴ ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 2:

ցնելու մասին» ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված իրավունքներ, երաշխիքներ և փոխհատուցում⁵⁵:

Ելնելով համագգեստով քաղաքացիների սկզբունքից՝ բոլոր զինծառայողները, անկախ կոչումից և պաշտոնից, կրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները: Ձինծառայողները կարող են ենթարկվել կարգապահական, վարչական, քաղաքացիաիրավական, նյութական և քրեական պատասխանատվության⁵⁶: Օրենսդրությամբ նախատեսված է նաև զինծառայողների նկատմամբ հասարակական ներգործության միջոցների կիրառման հնարավորություն զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտման հետ կապված զանցանքների համար⁵⁷: Թույլ տրված իրավախախտման համար զինծառայողը, որպես կանոն, ենթարկվում է մեկ տեսակի պատասխանատվության, սակայն իրավախախտման համար կարգապահական պատասխանատվության ենթարկվելը չի ազատում քրեական պատասխանատվությունից, եթե արարքում առկա են հանցագործության հատկանիշներ, ինչպես նաև զինծառայողները չեն ազատվում իրավախախտմամբ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունից՝ անկախ պատասխանատվության կամ հասարակական ներգործության որևէ միջոցի ենթարկված լինելու հանգամանքից⁵⁸:

⁵⁵ Որպես օրինակ կարելի է մատնանշել «Ձինծառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքը՝ ընդունված 1998 թ. մայիսի 27-ին, որով ամրագրվում են զինծառայողների ինչպես քաղաքական և քաղաքացիական, այնպես էլ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները՝ միաժամանակ մեկտեղելով նաև զինծառայողների ինչպես հիմնական, այնպես էլ պաշտոնեական և հատուկ պարտականությունների վերաբերյալ դրույթները: Այսպես՝ օրենքն ամրագրում է զինծառայողների ազատության, պատվի և արժանապատվության պաշտպանությունը, տեղաշարժվելու ազատության և բնակության վայր ընտրելու իրավունքը, խոսքի ազատությունը, ժողովներին, հանրահավաքներին, ցույցերին, երթերին և պիկետներին մասնակցելու իրավունքը, խղճի և կրոնի ազատությունը, պետական գործերին և հասարակական միավորումների կառավարմանը մասնակցելու իրավունքը, աշխատանքի իրավունքը, ծառայողական ժամանակը և հանգստի իրավունքը, դրամական բավարարումը, հավելավճարները, հագուստի տրամադրումը, օթևանի տրամադրումը, առողջության պահպանման և բուժօգնության իրավունքը, կրթության իրավունքը և մշակույթի բնագավառի իրավունքները, տրանսպորտից օգտվելը, անօրինական հրամանների գանգատարկման իրավունքը, դատական վարույթների շրջանակներում առկա իրավունքները, սոցիալական ապահովության իրավունքները, արտակարգ իրավիճակների պայմաններում զինվորական պարտականություններ կատարելու համար հավելյալ արտոնությունները, հիմնական պարտականությունները, պաշտոնեական և հատուկ պարտականությունները:

⁵⁶ Նույն տեղում, հոդվածներ 25-29:

⁵⁷ Նույն տեղում, հոդված 24:

⁵⁸ Նույն տեղում, հոդված 30:

Հարցեր քննարկման համար

- Արդարացվա՞ծ են արդյոք զինձառայողների քաղաքական իրավունքների սահմանափակումները:
- Ինչո՞վ է պայմանավորված զիված ուժերում հավասարության իրավունքի կարևորությունը:

Մոդուլ 2: Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտականությունը

Տևողությունը՝ 5 ժամ

Բովանդակություն

1. Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտականության բովանդակությունը
2. Կյանքի իրավունքի հասկացությունը և բովանդակությունը

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|---|--|------------------------|
| Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտականության բովանդակությունը | Պրեզենտացիա | 20 րոպե |
| Կյանքի իրավունքի հասկացությունը և բովանդակությունը | Պրեզենտացիա Ինտերակտիվ խաղեր (քննարկում, դերային խաղ, ուղղորդված քննարկում) | 1 ժամ 40 րոպե 3 ժամ |

Դասախոսության նյութ

1. Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտականության բովանդակությունը

Պետությունն անմիջական պարտավորություն ունի ապահովելու, որ պետության շրջանակներում գտնվող յուրաքանչյուր անձ կարողանա իրագործել իր մարդու իրավունքները և ազատությունները: Մանչանակում է, որ պետությունը պետք է ապահովի և պաշտպանի յուրաքանչյուր անձի իրավունքները և ազատությունները՝ անկախ նրա ազգությունից, քաղաքացիությունից կամ այլ հատկանիշներից:

Մարդու իրավունքների իրականացման առնչությամբ պետության պարտականությունները ներառում են՝

1.1. Հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ

Դա նշանակում է, որ պետությունը չպետք է միջամտի և խոչընդոտի այդ իրավունքների իրականացմանը: Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը պետությանը պարտավորեցնում է ձեռնպահ մնալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն մարդու իրավունքների իրականացմանը միջամտելուց: Սա անմիջական պարտավորություն է, որ միջազգային պայմանագրերով և ներպետական օրենքներով պետությունը ստանձնում է իր իրավասության ներքո գտնվող մարդկանց նկատմամբ: Այս պարտականությունը ներառում է նաև հարգանք այն ջանքերի նկատմամբ, որոնք անձը գործադրում է իր մարդկային իրավունքների իրականացման նպատակով: Պետությունը չպետք է խոշտանգի մարդկանց, ենթարկի անմարդկային վերաբերմունքի, անտեղի արգելի արտահայտվելու ազատությունը, կամայականորեն փակի դպրոցները, ապօրինի կերպով՝ բռնի վտարի մարդկանց իրենց կացարաններից, գրկի նրանց իրենց սեփական գույքից և այլն:

1.2. Մարդու իրավունքների պաշտպանությունը

Դա նշանակում է, որ պետությունը պարտավոր է արդյունավետ իրավական կարգավորմամբ կանխել մարդու իրավունքների իրականացման ընթացքին այլ անձանց կամայական միջամտությունը, իսկ միջամտության դեպքում՝ դրանից պաշտպանելու արդյունավետ միջոցներ ձեռնարկել: Այլ կերպ ասած՝ պետությունը պարտավոր է կանխել մարդու իրավունքների խախտումները, հետաքննել կատարված դեպքերը, պատժել իրավունքները խախտողներին և ապահովել, որպեսզի անձը, ում իրավունքը խախտվել է, համարժեք հատուցում ստանա իրավունքի խախտմամբ առաջացած վնասների համար: Սա պետության անմիջական պարտականություն է:

1.3. Հնարավորություն ընձեռել այդ իրավունքները իրականացնելու համար, ինչպես նաև աջակցել այն անձանց, ովքեր ինքնուրույն չեն կարող օգտվել իրենց մարդու իրավունքներից

Սա նշանակում է, որ պետությունը պետք է կատարի օրենսդրական, վարչական, բյուջետային, դատական այնպիսի քայլեր, որոնք բավարար պայմաններ կստեղծեն մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Օրինակ՝ պետությունը պետք է բոլոր հնարավոր միջոցներով ապահովի, որպեսզի մեղադրյալը հասկանա իրեն ներկայացվող մեղադրանքը կամ անհրաժեշտության դեպքում կարողանա օգտվել դատապաշտպանի օգնությունից:

Պետությունը մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու համար պայմաններ ապահովելու իր պարտականությունները կատարում է իր տարածքային իրավասության սահմաններում: Սա-

կայն երբեմն այդ պարտականության կատարումը չի կարող սահմանափակվել պետության տարածքային սահմաններով: Այսպես՝ այն դեպքում, երբ պետությունն իր զինված ուժերի միջոցով հսկողություն է իրականացնում իր աշխարհագրական տարածքից դուրս գտնվող տարածքի նկատմամբ, ապա այդ տարածքներում գտնվող անձանց հանդեպ նույնպես կրում է նրանց մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու պարտականությունը:

2. Կյանքի իրավունքի հասկացությունը

Կյանքի իրավունքը մարդու ապրելու իրավունքն է: Այն մարդու հիմնարար իրավունք է, քանի որ միայն կենդանի մարդը կարող է մասնակցել հասարակական կյանքին, ունենալ և իրականացնել իրավունքներ, կրել պարտականություններ: Այդ պատճառով կյանքի իրավունքը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մարդու իրավունքների շարքում:

Պետության անվերապահ պարտականությունն է պաշտպանել իր իրավասության տարածքում գտնվող մարդկանց կյանքը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձի մահը վրա է հասնում պատերազմական գործողությունների հետևանքով, ինչը կարգավորվում է միջազգային մարդասիրական իրավունքի՝ պատերազմներ վարելու կանոնների վերաբերյալ նորմերով:

Մարդու կյանքի իրավունքի պաշտպանության առումով պետությունն ունի նյութական և դատավարական պարտավորություններ: Նյութական պարտավորությունները իրենց հերթին լինում են պոզիտիվ և նեգատիվ:

- Իր պաշտոնատար անձանց կողմից ապօրինի սպանություն կատարելուց զերծ մնալու պարտականությունը (նեգատիվ պարտավորություն).
- կյանքի պաշտպանությանը միտված քայլեր ձեռնարկելու պարտականությունը, մասնավորապես, որպեսզի կանխվեն կյանքի շրջանցելի կորստի դեպքերը (պոզիտիվ պարտավորություններ, որոնք պահանջում են իշխանություններից՝ ձեռնարկել ողջամիտ քայլեր).
- կասկածելի մահվան դեպքերի քննության պարտականություն (դատավարական ասպեկտ): Եթե, այդուհանդերձ, անձը զրկվել է կյանքից, ապա պետությունը ունի դատավարական պարտականություն իրականացնել հետաքննություն, հայտնաբերել մարդու մահվան մեջ մեղավոր անձանց և օրենքով սահմանված կարգով պատժել մեղավորին:

Պետության կողմից ուժի կիրառման հետևանքով անձի՝ կյանքից զրկվելը, օրինակ, կարող է լինել ոստիկանական գործողությունների հետևանք, ուստի ոստիկանության գործողությունները պետք է մանրամաս-

նորեն պլանավորված լինեն, հնարավորինս բացառեն մահացու ուժի կիրառումը, իսկ կիրառման անհրաժեշտության դեպքում այն հասցնեն նվազագույնի: Անգամ այն դեպքում, երբ մահացու ուժի կիրառումը այլընտրանք չունի, դրա կիրառումը պետք է լինի համաչափ և անհրաժեշտ այն օրինական նպատակին հասնելու համար, որի համար իրականացվում է գործողությունը:

2.1. Անազատության մեջ գտնվող անձի կյանքը

Պետության տարածքում կալանքի տակ գտնվող անձի մահվան դեպքում պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները մահվան պատճառները պարզելու համար, իսկ բռնի մահվան դեպքում՝ նաև հանցագործներին հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով պատժելու համար: Կալանքի տակ գտնվող անձն ամբողջությամբ գտնվում է անազատության մեջ և պետության անմիջական հսկողության ներքո: Պետությունը պետք ապահովի, որ կալանքի տակ գտնվող անձը պաշտպանված լինի նաև կալանքի տակ գտնվող այլ անձանց հնարավոր հարձակումներից: Նման պայմաններում անձի մահվան դեպքում ապացուցման պարտականությունն ընկնում է պետության վրա: Այսինքն, եթե պետությունը չներկայացնի կալանքի տակ գտնված անձի մահվան հիմնավոր պատճառաբանություն, ապա կհամարվի անձի կյանքի իրավունքը խախտած:

Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Տանլին ընդդեմ Թուրքիայի⁵⁹ գործով 22-ամյա առողջ երիտասարդը մահացել էր կարճատև կալանքի տակ գտնվելու ընթացքում: Թուրքիան պնդում էր, որ երիտասարդը բնական մահով է մահացել, սակայն այդ մասին որևէ ակնհայտ ու համոզիչ ապացույց չէր ներկայացրել, որի հետևանքով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել էր, որ Թուրքիան խախտել է տվյալ անձի կյանքի իրավունքը:

Պետությունը պարտավոր է ապահովել նաև անազատության մեջ գտնվող անձի կյանքի պաշտպանությունը, այդ թվում՝ ինքնասպանության փորձերից: Այն դեպքերում, երբ իշխանությունները կարող են ողջամտորեն կանխատեսել կալանքի տակ գտնվող ինքնասպանության հնարավորությունը, նրանք պարտավոր են իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կկանխեն ինքնասպանությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Բեքերն ընդդեմ Թուրքիայի գործով Մուստաֆա Բեքերը հայտնաբերվել էր

⁵⁹ Tanlı v. Turkey, no. 26129/95, ECHR 2001-III.

ընկած գորամասում՝ ձախ քունքային շրջանում հրազենային վնասվածքով:
Նա հիվանդանոցի ճանապարհին մահացել էր:

Քննությամբ պարզվել էր, որ Մուստաֆան հրազենը գողացել էր ծառայակցի պահարանից՝ փայտով կոտրելով դրա կողպեքը: Կրակոցի ժամանակ սենյակում գտնվող չորս ծառայակիցները հարցաքննվել են, նրանք բոլորը հայտնել են, որ չեն տեսել կրակոցի պահը: Ներկաներից մեկը, ով գտնվել է Մուստաֆայից հինգ մետր հեռավորության վրա, հայտնել է, որ չի տեսել կրակոցը, քանի որ շոկի մեջ փակել է դեմքը ձեռքերով: Քրեական գործով քննությունը դադարեցվել է այն հիմքով, որ Մուստաֆան ինքնասպան է եղել՝ կրակելով աջ քունքին, քանի որ իր մայրը դեմ է եղել իր ամուսնությանը: Վարույթն իրականացնող մարմինը հրաժարվել է հրապարակել քննության հետ կապված որևէ փաստաթուղթ: Դիմումատուի՝ գործի քննությունը վերսկսելու վերաբերյալ դիմումը անհետևանք է մնացել:

Դատարանը սույն գործով փաստել է, որ պետության անմիջական վերահսկողության տակ գտնվող տարածքում մահվան կապակցությամբ պետությունը պետք է ողջամիտ բացատրություն տա պատահարի վերաբերյալ: Սակայն իշխանությունների կողմից կատարված քննությունն անարդյունավետ էր և թողնում էր բազում անպատասխան հարցեր, և դատարանը անընդունելի է համարել Մուստաֆայի կողմից կատարված ինքնասպանությունը: Գործի քննության ընթացքում տեղ գտած թերությունները ըստ դատարանի կարող է վկայել ծանր հանցագործության պարտական մասին:

Դատարանը որոշել է, որ կառավարությունը ողջամիտ բացատրություն չի տվել Մուստաֆա Բեքերի մահվան կապակցությամբ, և հետևաբար, պետությունը պատասխանատու է կյանքի իրավունքի խախտման համար:

2.2. Անհետացումներ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Թիմուրթասան ընդդեմ Թուրքիայի գործով⁶⁰ դիմողի որդին ձերբակալվել է թուրքական անվտանգության ուժերի կողմից, որից հետո ավելի քան վեց տարի որդուց տեղեկություններ չեն ստացվել: Հաշվի առնելով նաև այն ժամանակը, որ անցել է ձերբակալությունից հետո, դատարանը համարեց, որ դիմողի որդին մահացած է, և Թուրքիայի կողմից խախտվել է դիմողի որդու կյանքի իրավունքը:

Պետության կողմից անձի անհետացման փաստը քննելուց խուսափելը նույնպես կարող է հանգեցնել կյանքի իրավունքի խախտման, քանի որ դա բխում է պետության պոզիտիվ պարտականությունից:

⁶⁰ Timurtas v. Turkey, no. 23531/94, ECHR 2000-VI.

Թիմուրթասն ընդդեմ Թուրքիայի գործում «դատարանը կյանքի իրավունքի խախտում արձանագրեց դիմողի որդու անհայտ կորչելու կապակցությամբ, ով կալանավորվել էր անվտանգության ուժերի կողմից, և նրա մասին այլևս ոչինչ հայտնի չէր եղել վեց ու կես տարի»:

2.3. Բժշկական օգնության տրամադրում

Կյանքի իրավունքի պաշտպանությունը պետություններից պահանջում է համապատասխան մակարդակի բժշկական օգնության տրամադրում իր ընդդատության տակ գտնվող անհատներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Իլհանն ընդդեմ Թուրքիայի գործով բանակայինները 6 ժամով ուշացրել էին մի անձի հիվանդանոց տեղափոխումը, ում նրանք ծանր մարմնական վնասվածքներ էին պատճառել, ինչն անդրադարձել էր նրա գլխուղեղի վրա: Հաշվի առնելով պատճառված վնասվածքների ծանրությունը, այդ թվում՝ նրան բուժօգնություն տրամադրելու պահի էական հետաձգումը՝ դատարանն արձանագրեց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, եթե դեպքն ի վերջո ավարտվում է մահվան ելքով, ապա կիրառելի է դառնում կյանքի իրավունքի խախտումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Անգուելովն ընդդեմ Բուլղարիայի գործով դատարանն ուսումնասիրեց կալանքի տակ պահվող մի կասկածյալի բուժօգնություն տրամադրելու ուշացումները: Երբ նրանք հասկացել էին, որ տուժողի վիճակը վատթարանում է, շտապ բուժօգնության մեքենա կանչելու փոխարեն կապվել էին տղային ձերբակալած գործընկերների հետ: Պարեկային ծառայության մեջ գտնվող այդ սպաները վերադառնում են ոստիկանության բաժին, որպեսզի ճշտեն վիճակը: Այնուհետև սպաներից մեկը շտապ բուժօգնության մեքենան հեռախոսով կանչելու փոխարեն մեքենայով գնում է հիվանդանոց, ինչն առաջացնում է մոտ երկու ժամվա ձգձգում և ավարտվում է մահվան ելքով: Դատարանը այդ գործով եզրակացրեց, որ խախտվել է կյանքի իրավունքը՝ պայմանավորված բուժօգնություն տրամադրելու ձգձգումների հետ:

2.4. Մահապատիժ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթերի ընդունողները չեն քննարկել մահապատիժը վերացնելու հարցը, իսկ ՄԻԵԿ-ում կյանքի իրավունքը սահմանվել է այնպիսի վերապահումներով, որոնք հնարավոր են դարձրել

մահապատժի կիրառումը⁶¹: Սակայն դրանից ընդամենը մի քանի տասնամյակ անց այդ մտեցումները վերանայվեցին: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից թիվ 6 և 13 արձանագրությունների ընդունմամբ վերացվեց մահապատիժը Եվրոպայի խորհրդի շրջանակներում նախ՝ խաղաղ, հետո՝ պատերազմական դրությունում: Խոշտանգումների արգելքը բացարձակ է⁶², իսկ մահապատժի միջոցով մարդուն կյանքից զրկելը ոչ այլ ինչ է, քան խոշտանգում կամ անմարդկային վերաբերմունք: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները ավելի են զարգացրել մահապատժի արգելքի մեկնաբանությունը և դրանում ներառել են նաև այն, որ արգելվում է անձին վտարել պետությունից իր քաղաքացիության պետություն, եթե այնտեղ նրա կատարած հանցանքի համար մահապատիժ կարող է նշանակվել:

Հայաստանի Հանրապետությունը այն պետություններից է, որտեղ ներկայումս մահապատիժը վերացված է, և ոչ ոք չի կարող ենթարկվել նման պատժի ոչ խաղաղ, ոչ էլ պատերազմական ժամանակներում՝ անկախ իրավիճակից ու հանգամանքներից:

2.5. Կյանքի իրավունքի պաշտպանությունը վնասարար շրջակա միջավայրի վտանգներից

Կյանքի իրավունքի պաշտպանությունը ներառում է նաև կյանքին վտանգ սպառնացող շրջակա միջավայրի առկա վտանգներից պաշտպանությունը:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի գործով դիմողի կացարանը, որը գտնվել է աղբանոցի հարևանությամբ, վնասվել է մեթանի պայթյունից, որի արդյունքում ընտանիքի 9 անդամներ զոհվել են: Դատարանը որոշում ընդունեց, որ իշխանությունները պետք է կանխատեսեին նման վտանգի հնարավորությունը և հնարավոր վտանգը կանխելու միջոցներ ձեռնարկեին, վտանգի մասին տեղեկացնեին բնակիչներին, սակայն անգործության են մատնվել, ուստի այդ անձանց կյանքի իրավունքի խախտման փաստը հաստատվեց:

⁶¹ Միջազգային պայմանագիր կնքելիս պետությունները կարող են վերապահումներ անել, ինչը նշանակում է, որ խնդրո առարկա իրավունքը իրավական պարտադիր ուժ չունի:

⁶² Եվ այն համարվում է միջազգային իրավունքի պարտադիր նորմ, ինչը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք է՝ ընդունված պետությունների միջազգային հանրության կողմից, և այդ նորմից որևէ շեղում կամ սահմանափակում թույլատրելի չէ:

Ամրագրումը միջազգային և ներպետական նորմերում

Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու, ինչպես նաև կյանքի իրավունքի վերաբերյալ դրույթները ներպետական օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված են հետևյալ կերպ.

ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածով յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

Սահմանադրության 15-րդ հոդածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք ունի:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից:

2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենածանր հանցագործությունների համար, հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում սույն դաշնագրի և Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթներին:

Այդ պատիժը կարող է իրականացվել միայն ի կատարումն իրավասու դատարանի կայացրած վերջնական դատավճռի:

3. Այն դեպքում, երբ կյանքից զրկելը ցեղասպանության հանցագործություն է, պետք է նկատի ունենալ, որ սույն դաշնագրի մասնակից պետություններին սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս որևէ կերպ շեղվել Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթների համաձայն ստանձնած ցանկացած պարտավորությունից:

4. Մահապատժի դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի հայցելու ներում կամ դատավճռի մեղմացում: Համաներումը, ներումը կամ դատավճռի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

5. Մահապատիժ չի նշանակվում տասնութ տարեկանից ցածր անձանց կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն դաշնագրի մասնակից որևէ պետության կողմից մահապատժի վերացումը հետաձգելու կամ թույլ չտալու համար:

Ինտերակտիվ խաղեր

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ է պետության պոզիտիվ պարտականությունը:
2. Ի՞նչ է պետության նեգատիվ պարտականությունը:
3. Ի՞նչ է պետության դատավարական պարտականությունը:
4. Արդյոք ինքնասպանությունը իրավունք է, թե՞ կյանքի իրավունքի խախտում:
5. Որո՞նք են պետության իրավասության շրջանակները:

Դերային խաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դատախազի միջոցով: Լսարանը բաժանվում է զույգ թվով խմբերի՝ առավելագույնը հինգ մասնակից կազմով: Յուրաքանչյուր խումբ հանդես է գալիս կա՛մ դիմումատուի, կա՛մ կառավարության անունից: Կողմերը գործը պետք է ներկայացնեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Դատարանի դերում հանդես է գալիս դասախոսը:

Խմբերին տրամադրվում է մեկ ժամ ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 20 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար:

Դիմատու կողմը պետք է ներկայացնի երիտասարդի շահերը՝ պնդելով, որ խախտվել է նրա կյանքի իրավունքը:

Կառավարությունը պետք է հերքի խախտման փաստը:

Բանավոր ելույթները ներկայացնելուց հետո կողմերը կարող են հարցեր տալ միմյանց: Հարց ու պատասխանին հատկացվող ժամանակը չպետք է գերազանցի 10 րոպեն:

Դասախոսը հետևում է, որ հարցերը լինեն առարկայական, և իրավունք ունի օգնել կողմերին՝ ճիշտ ձևակերպել հարցերը : Դասախոսին իրավունք է վերապահվում նաև ըստ անհրաժեշտության հանել հարցերը:

Երկու կողմերի տեսակետների ներկայացումը և հարցերի քննարկումը ավարտելուց հետո դասախոսը ներկայացնում է դատարանի վճիռը: Տվյալ դեպքում դասախոսը հայտնում է, որ սա իրական գործ է, որ լսվել և լուծվել է ՄԻԵԿ-ի կողմից (Brady v. UK, n.55151/00, Bubbins v.UK, n. 50196/99):

Առաջարկվող փաստեր

Տարբերակ 1

Փողոցներում հասարակական կարգը հսկող ոստիկանները ահազանգ են ստանում, որ հարևան շենքի բնակարաններից մեկում գողություն է կատարվում: Նրանք շտապում են դեպքի վայր և ակնատես են լինում, թե ինչպես երկու երիտասարդ բնակարանից դուրս են հանում տարբեր կենցաղային իրեր: Նկատելով ոստիկաններին՝ նրանք փորձում են փախչել: Երիտասարդներից մեկը, ում ձեռքին մետաղյա ձող կար, շրջվում է դեմքով դեպի ոստիկանները: Տեսնելով երիտասարդի ձեռքի անձանոթ առարկան՝ ոստիկաններից մեկն իր ատրճանակից կրակ է բացում և սպանում երիտասարդին:

Տարբերակ 2

Փողոցներում հասարակական կարգը հսկող ոստիկանները ահազանգ են ստանում, որ հարևան շենքի բնակարաններից մեկում գողություն է կատարվում: Նրանք շտապում են դեպքի վայր և ակնատես են լինում, թե ինչպես երկու երիտասարդ բնակարանից դուրս են հանում տարբեր կենցաղային իրեր: Նկատելով ոստիկաններին՝ նրանք փորձում են փախչել: Երիտասարդներից մեկը, ում ձեռքին խաղալիք զենք կար, շրջվում է դեմքով դեպի ոստիկանները: Տեսնելով երիտասարդի ձեռքի զենքը՝ ոստիկաններից մեկն իր ատրճանակից կրակ է բացում և սպանում երիտասարդին:

Մահապատժի հարցի վերաբերյալ ուղղորդված քննարկում

Դասախոսը առաջարկում է ուսանողներին կողմ և դեմ փաստարկներ հայտնել մահապատժի վերաբերյալ, որոնք գրի է առնում գրատախտակին:

Ներկայացված յուրաքանչյուր փաստարկի վերաբերյալ վիճելի հարց է բարձրացնում և ուղղում այն ուսանողին, ով տվյալ փաստարկը բերել է: Նպատակը ուսանողի կողմից իր իսկ ներկայացրած փաստարկի բազմակողմանի քննարկումն է:

Օրինակ՝ «Մահապատիժը հանցագործությունների կանխարգելման միջոց է» փաստարկի վերաբերյալ դասախոսը կարող է հարց բարձրացնել դատական սխալների հետևանքով անմեղ մարդկանց մահապատժի ենթարկելու փաստի վերաբերյալ:

Մոդուլ 3: Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը. ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը

**Տևողությունը՝ 3 ժամ 30 րոպե
Բովանդակություն**

1. Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը
2. Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|--|---------------------------------|------------------------|
| Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը | Պրեզենտացիա Ինտերակտիվ խաղեր | 1 ժամ 1 ժամ 20 րոպե |
| Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի գործի ներկայացում | Քննարկում | 30 րոպե |
| Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը | Պրեզենտացիա | 40 րոպե |

Դասախոսության նյութ

1. Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը

1.1. Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի հասկացությունը

Խոշտանգումը դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առավել խիստ և դիտավորությամբ կատարվող ձևն է:

Խոշտանգում է համարվում ցանկացած գործողություն, որով անձին դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից, կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ:

Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկն է: Այդ արգելքը բացարձակ է: Ի տարբերություն մարդու և քաղաքացու որոշ այլ իրավունքների՝ այս արգելքը չի ենթադրում որևէ բացառություն: Այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ: Դրա շրջանցումը չի կարող արդարացվել և հիմնավորվել պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության կամ հանցավորության դեմ պայքարից թելադրվող անհրաժեշտությամբ: Խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն արգելվում է՝ անկախ գոհի վարքագծից:

Հարկ է նշել, որ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջև կան որոշակի տարբերություններ: Խոշտանգումը միայն այն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն է, որը կիրառվում է դիտավորությամբ և պատճառում է լուրջ և դաժան տառապանքներ: Խոշտանգմանը, բացի դրան բնորոշ դիտավորության և դաժանության հատկանիշից, հատուկ է նաև նպատակայնության տարրը: Ինչպես արդեն նշվեց, խոշտանգում է համարվում այն գործողությունը, որով դիտավորությամբ անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից տեղեկություններ կորզելու, պատժելու կամ վախեցնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է առանձնացնել խոշտանգմանը վերագրվող հետևյալ հատկանիշները, որոնցով այն տարբերակվում է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից.

- Խոշտանգումը գոհին պատճառում է առավել ուժեղ ցավ և տառապանք:
- Խոշտանգումը դիտավորությամբ կատարվող գործողություն է:
- Խոշտանգումը հետապնդում է անձից որոշակի տեղեկություն կամ խոստովանություն կորզելու նպատակ:

Միաժամանակ հարկ է նշել, որ համանման գործողությունները մի դեպքում կարող են որակվել որպես «խոշտանգում», մյուս դեպքում՝ որպես «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք»: Սա նշանակում է, որ դրանց միջև սահմանը հստակ չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հանգամանքները:

Եթե խոշտանգումն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից տարբերակելու որոշակի չափանիշներն առկա են միջազգային իրավունքի նորմերում և Եվրոպական դատարանի վճիռներում⁶³, ապա անմարդկային

⁶³ Aksoy v. Turkey, Judgment of 18 December 1996.

կամ նվաստացնող վերաբերմունքի տարբերակման խնդիրն ավելի բարդ է: Շատ դեպքերում անմարդկային վերաբերմունքը նաև նվաստացնող վերաբերմունք է⁶⁴: Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով կիրառված հարցաքննության մեթոդները Եվրոպական դատարանը համարել է ոչ միայն անմարդկային, այլև նվաստացնող, քանի որ դրանց կիրառումը գոհերի մեջ առաջացնում էր վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող էր ստորացնել նրանց և կոտրել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը⁶⁵:

Չնայած անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի միջև հստակ տարբերության բացակայությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը և դատարանը փորձել են տալ դրանց սահմանումները և առանձնացնել դրանց տարբերակիչ հատկանիշները: Հանձնաժողովի սահմանման համաձայն՝ «Անմարդկային վերաբերմունք» հասկացությունը ներառում է այնպիսի վերաբերմունք, որով դիտավորությամբ պատճառվում է ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Վերաբերմունքը կամ պատիժը կարող է նվաստացնող համարվել, եթե այլոց առջև ստորացնում է անձին կամ նրան ստիպում է գործել իր կամքին կամ գիտակցությանը հակառակ»:

Ըստ դատարանի սահմանման՝ «Նվաստացնող կարող է համարվել այն վերաբերմունքը, որը գոհերի մեջ առաջացնում է վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող է ստորացնել նրանց և կոտրել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը»⁶⁶:

«Անմարդկային» և «նվաստացնող» հասկացությունների բովանդակությունը բացահայտված է Եվրոպական դատարանի մի շարք վճիռներում, որոնցում այդ հասկացություններն իրենց հետագա զարգացումն են ապրել⁶⁷:

Խոշտանգումների և արգելված վերաբերմունքի այլ ձևերի տարբերակումը հիմնականում կախված է պատճառված տառապանքի ծանրության տարբեր աստիճաններից:

Խոշտանգման դեպքում անհրաժեշտ է ապացուցել կոնկրետ նպատակի առկայությունը, իսկ վերաբերմունքի այլ ձևերի դեպքում նման պահանջ չկա: Անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կարող է առաջանալ գործողություններ չձեռնարկելու, ոչ թե դիտավորյալ կատարված գործողությունների հետևանքով:

⁶⁴ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ Հունական գործով 1969 թ. նոյեմբերի 5-ի գեկույց:

⁶⁵ Ireland v. the United Kingdom, Judgment of 18 January 1978.

⁶⁶ Քենան ընդդեմ Միացյալ Թագավորության և Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով վճիռները:

⁶⁷ Kurt v. Turkey, Judgment of 25 May 1998, Cyprus v. Turkey, Judgment of 10 May 2001.

1.2. Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի գործի ներկայացում⁶⁸

2000 թ. դեկտեմբերին դիմողը հետազոտվել է երկու բժշկական հանձնաժողովների կողմից և ճանաչվել պիտանի զինվորական ծառայության համար: Ծառայության երկրորդ ամսից՝ 2001 թ. փետրվարից, տառապել է ծնկի ցավերից: Ծնկի վիճակի կապակցությամբ նրա անմիջական պետը նրան ազատել է ֆիզիկական վարժանքներից և շարային վարժություններից: Պարզվել է նաև, որ ծնկի վիճակից ելնելով՝ դիմողը մի քանի անգամ բուժում է ստացել գորամասի բուժկետում:

2001 թ. մարտին կրտսեր սերժանտ Չ-ն դիմողի անմիջական պետի ներկայությամբ հրամայել է դիմողին և այլ զինվորների՝ կատարել ծնկի 350 վարժություն՝ որպես պատիժ բարաքները չմաքրելու համար: Դիմողն ուժասպառ է եղել վարժության ընթացքում և տարվել հոսպիտալ՝ շտապ բուժօգնություն ստանալու նպատակով: Զինծառայողը տեղափոխվել է քաղաքացիական հիվանդանոց, որտեղ ստացել է բուժում, ինչից հետո ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար, գորացրվել՝ ճանաչվելով երկրորդ կարգի հաշմանդամ:

Սույն գործով դատարանը փաստել է, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածը խստիվ պահպանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակ իմաստով արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և տուժողի վարքագծից: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի սահմաններում վատ վերաբերմունքը պետք է ունենա լրջության նվազագույն մակարդակ: Այդ նվազագույնի գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունը, որոշ դեպքերում՝ գոհի սեռը, տարիքը և առողջական վիճակը:

Կիրառված խոշտանգումն ու անմարդկային վերաբերմունքը ցանկացած դեպքում պետք է դուրս գան օրինական վերաբերմունքի կամ պատժի հետ կապված տառապանքի և նվաստացման անխուսափելի տարրերի սահմաններից: Պարտադիր զինվորական ծառայությունը հաճախ ներառում է այնպիսի տարր, ինչպիսին է անձին ազատությունից զրկելու միջոցը: Այդուհանդերձ, շատ գործողություններ, որոնք կարող են առաջացնել բանտարկյալների նկատմամբ նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունք, չեն կարող անցնել վատ վերաբերմունքի սահմանը, երբ դրանք իրականացվում են զինված ուժերում՝ պայմանով, որ դրանք կատարեն հատուկ առա-

⁶⁸ Chember v. Russia, no. 7188/03, ECHR 2008.

քելություն զինված ուժերում, երբ, օրինակ, դրանք հանդիսանում են կռվի դաշտի համար սահմանված վարժանքների մի մասը:

Այդուհանդերձ, պետությունը պարտավոր է ապահովել, որ անձը զինվորական ծառայություն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնագզացողությունը համարժեքորեն պահպանված են՝ տրամադրելով նրան համապատասխան բժշկական օգնություն: Պետության առաջնային պարտականությունն է նվազագույնի հասցնել առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլև մարդկային տարրի պատճառով, երբ պետությունը քաղաքացիներին գորակոչում է զինվորական ծառայության:

Համաձայն դատարանի մոտեցման՝ վերաբերմունքը համարվում է «անմարդկային», եթե այն կանխամտածված է, կատարվում է ժամկետով և պատճառում է կա՛մ փաստացի մարմնական վնասվածքներ, կա՛մ ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Այն հարցը, թե արդյոք վերաբերմունքի նպատակը եղել է անձին տառապանք պատճառելը, հաշվի է առնվում հետագայում, սակայն նման որևէ նպատակի բացակայությունն արդյունքում չի կարող բացառել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը:

Այսպես՝ հիշյալ սկզբունքները կոնկրետացնելով գործի փաստերին՝ դատարանը որոշում է, որ դիմողին հրամայված է եղել կատարել հատուկ հանձնարարություն՝ կքանիստ վարժություններ՝ որպես պատիժ բարաքները ոչ պատշաճ մաքրելու համար: Այդ հրամանը տրվել է նրա ժամանակավոր հրամանատարի կողմից, սակայն դրան լռելյայն համաձայնել է վերադաս հրամանատարը, ով ներկա է եղել և չի առարկել հրամանին: Հետևաբար, այդ վերաբերմունքը դիմողի նկատմամբ իրականացվել է դիտավորությամբ: Դիմողն ուժասպառ է եղել և չի կարողացել կառավարել ոտքերը: Չնայած որ նա և՛ զինվորական, և՛ քաղաքացիական հիվանդանոցում ստացել է բժշկական օգնություն, հասցված վնասվածքը հանգեցրել է առողջության երկարատև քայքայման: Դիմողն ազատվել է զինվորական ծառայությունից և դարձել է երկրորդ կարգի հաշմանդամ:

Դատարանը որոշել է, որ տվյալ գործով դիմողը ենթարկվել է ֆիզիկական վարժությունների հարկադիր կատարման, որոնք նրան հասցրել են ֆիզիկական ուժասպառության: Այս պատիժն իրականացվել է դիտավորու-

թյամբ դիմողի հրամանատարների կողմից, որոնք հստակ իմացել են նրա առողջական խնդիրների մասին, ինչպես նաև այն իրականացվել է առանց որևէ ծառայողական անհրաժեշտության, որը կարողարացներ այդ գործողությունները: Այսինքն՝ նման հանգամանքներում այդ պատիժը դիմողին պատճառել է ֆիզիկական մեծ տառապանք և անցել լրջության նվազագույն աստիճանի սահմանները:

Հետևաբար, դիմողը ենթարկվել է անմարդկային պատժի՝ հանգեցնելով կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:

1.3. Ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիություն

Գործողությունը որպես «խոշտանգում կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» դիտելու համար բավարար է, որ այդ վերաբերմունքը ունենա խստության նվազագույն աստիճան: Այս սկզբունքային մոտեցումը պայմանավորված է նրանով, որ խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի օբյեկտը՝ անձի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիությունը, մարդուն ներհատուկ կարևորագույն արժեքներից մեկն է, որը ոչ մի պարագայում չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության: Ահաբեկչության և հանցավորության դեմ պայքարն անգամ չի կարող հիմք համարվել անձի ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության դեմ ոտնձգելու համար: Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության⁶⁹ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իռլանդացի կասկածյալներին հարցաքննելու մի շարք մեթոդներ, ինչպիսիք են անընդհատ աղմուկի մեջ պահելը, քնից զրկելը, ուտելիքից և ջրից զրկելը, դիտել է որպես անմարդկային և նվաստացնող վերաբերմունք:

Վերաբերմունքի խստության նվազագույն աստիճանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տարբեր է, քանի որ կախված է բազմաթիվ հանգամանքներից, ներառյալ՝ նման վերաբերմունքի կիրառման տևողությունից: Այսպես՝ Ակսոյն ընդդեմ Թուրքիայի⁷⁰ գործով տուժողը ենթարկվել է այսպես կոչված «Պաղեստինյան կախադանի»՝ նրան մերկացրել են, ձեռքերը միասին կապել հետևում և կապված ձեռքերից կախել, որի հետևանքով անձը պարալիզվել է: Սա դատարանը դիտել է որպես խոշտանգման արգելքի խախտում: Դեպքը տեղի է ունեցել ազատությունից զրկելու վայրում:

Ազատագրվման վայրի պայմանները նույնպես կարող են բերել արգելքի խախտման: Այդպիսի պայմաններ կարող են համարվել ջեռուցման, օդափոխության, լուսավորության, սննդի և ջրի, բժշկական սպասարկման, գերբնա-

⁶⁹ Ireland v. the United Kingdom, 18 January 1978 Series A no. 25.

⁷⁰ No. 21987/93, 18.12.1996, 1997 23 EHRR.

կեցման և այլ հանգամանքները: Այսպես՝ Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի⁷¹ գործով տուժողը պահվել է 8 անձի համար նախատեսված 17-21 քմ տարածք ունեցող խցում՝ 18-24 այլ ազատագրկված անձանց հետ միասին: Այդ անձինք հարկադրված են եղել քնել հերթով: Խցի լուսավորությունն անընդհատ միացված է եղել, ինչն անքնություն է պատճառել, օդափոխությունը բավարար չի եղել, զուգարանը առանձնացված չի եղել խցի բնակելի մասից: Տուժողը պահվել է սիֆիլիսով, տուբերկուլյոզով, այլ վարակիչ հիվանդություններով տառապող անձանց հետ, ինչի հետևանքով ինքն էլ է վարակվել տարբեր հիվանդություններով: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանը համարել է, որ նման նվաստացնող պայմանները տուժողին մտավոր տառապանքներ են պատճառել՝ ստորացնելով նրա մարդկային արժանապատվությունը:

Պետությունը նաև խոշտանգումները, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը կանխելու, իսկ կատարման դեպքերում՝ արդյունավետ հետաքննություն իրականացնելու, մեղավորներին հայտնաբերելու և պատժելու միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն ունի: Պետության ձեռնարկած միջոցառումները պետք է արդյունավետ լինեն և ծառայեն իրենց նպատակին:

Ամրագրումը միջազգային և ներպետական նորմերում

Խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելքը միջազգային իրավունքի հիմնարար և հանրաճանաչ նորմ է, որն անվերապահորեն ընդունելի է բոլոր պետությունների կողմից և այդ արգելքից որևէ վերապահում երբևէ անթույլատրելի է: Խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելքը իր արտացոլումն է գտել ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավունքում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Խոշտանգումից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1975 թ. դեկտեմբերի 9-ի հռչակագրի համաձայն՝ «Խոշտանգումը դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առավել խիստ և դիտավորությամբ կատարվող ձևն է»:

⁷¹ No. 27095/95, 15.07.02, 2003 36 EHRR 34.

Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984 թ. դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «խոշտանգում» է համարվում «ցանկացած գործողություն, որով անձին դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից, կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի»:

Ինտերակտիվ խաղեր

Խաղային ուսուցումը իրականացվում է գործի ուսումնասիրության միջոցով: Լսարանը բաժանվում է զույգ թվով խմբերի՝ առավելագույնը հինգ մասնակից կազմով: Յուրաքանչյուր խմբի տրվում է ստորև ներկայացված փաստերից մեկը: Խմբերից յուրաքանչյուրը պետք է հիմնավորի կամ «խոշտանգումը», կամ «անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը»:

Խմբերին տրվում է 45 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար:

Դասախոսը կարող է հարցեր ուղղել ներկայացնողներին:

Կողմերի դիրքորոշումները լսելուց հետո դասախոսը ներկայացնում է դատարանի իրական գնահատականը և դրա հիմնավորումները:

Փաստերի առաջին խումբը

Ձերբակալված անձը մի քանի օրերի ընթացքում բազմիցս ծեծի է ենթարկվել խոստովանություն կորզելու և տեղեկություններ ստանալու նպա-

տակով: Ծեծի մանրամասները և տևողությունը ներկայացնել ըստ Ալ Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության գործի⁷²:

Պատասխան՝ Խոշտանգում, քանի որ տեղեկություններ կամ խոստովանություն ստանալու նպատակ է հետապնդվել:

Փաստերի երկրորդ խումբը

Ոստիկանության սպան ծեծի է ենթարկել տուժողին: Ծեծի մանրամասները և տևողությունը ներկայացնել ըստ Էգմեզն ընդդեմ Կիպրոսի⁷³:

Պատասխան՝ անմարդկային և նվաստացնող վերաբերմունք, քանի որ տեղեկություններ կամ խոստովանություն ստանալու նպատակ չի եղել:

2. Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը. ստրկության և հարկադիր աշխատանքի հասկացությունը

Ստրկությունը բացարձակապես արգելված է: Այս կանոնը միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմ է, որի նկատմամբ որևէ վերապահում կամ բացառություն թույլատրելի չէ: Ստրկությունն այնպիսի վիճակ է, որի դեպքում մարդը անազատ է. նա ոչ թե իրավունքի սուբյեկտ է, այլ օբյեկտ: Իրավունքի օբյեկտ լինելը նշանակում է, որ մեկ այլ անձն է ստրուկի նկատմամբ իրավունքների կրողը և կարող է տնօրինել, օգտագործել ստրուկին, նրա աշխատանքը: Մինչդեռ մարդկային արժանապատվությունը, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը, պահանջում է, որ մարդը լինի ազատ և լինի իրավունքների կրող ու իրագործող:

Ստրկությունը չթույլատրելու հարցում պետությունն իր իրավասության սահմաններում պոզիտիվ պարտականություն ունի, ինչը նշանակում է, որ նա չպետք է թույլ տա, որ մարդիկ հայտնվեն ստրկության վիճակում, իսկ ստրկության մեջ հայտնվելու պարագայում կատարի արդյունավետ հետաքննություն, բացահայտի և պատժի մեղավորներին:

2.1. Եթե ստրկության արգելքից որևէ բացառություն չի կարող լինել, ապա հարկադիր աշխատանքի արգելքը բացարձակ չէ և կարելի է շեղումներ թույլ տալ

Հարկադիր աշխատանքն այն է, երբ անձը հարկադրված է ապրել մեկ այլ անձի սեփականության տարածքում և պարտավոր է աշխատանք կատարել նրա համար: Սիլիադինն ընդդեմ Ֆրանսիայի⁷⁴ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարան էր դիմել Տոգոյի քաղաքացի, ով 16 տարեկա-

⁷² Al-Adsani v. the United Kingdom [GC], no. 35763/97, ECHR 2001-XI.

⁷³ Egmez v. Cyprus, no. 30873/96, ECHR 2000-XII.

⁷⁴ No. 73316/01; European Court Information Note No 62, March 2004.

նում եկել է Ֆրանսիա, որտեղ նրան ստիպել են կատարել տարբեր աշխատանքներ: Նրան ստիպել են կատարել տնային աշխատանքներ, խնամել երեխաներին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 10-ը: Եվ այդ ամենի համար նրան չեն վճարել: Նա չի ունեցել ոչ աշխատանքի թույլտվություն, ոչ բնակության իրավունք և ոչ էլ անձնագիր: Այս գործը մտել է դատարանի հարկադիր աշխատանքի արգելքի հիմքով:

Հարկադիր է այն աշխատանքը, որն անձը կատարում է իր կամքին հակառակ:

2.2. Հարկադիր աշխատանքի և պարտադիր զինվորական ծառայության տարբերությունը

Միջազգային և ներպետական իրավական ակտերով բացատրություններ են սահմանվում հարկադիր աշխատանքի արգելքից: Այդպիսի բացատրություն է զինվորական ծառայությունը, որի պարագայում ծառայության հետ կապված աշխատանքն անձի համար կարող է լինել ոչ կամավոր, չվճարվող, սակայն չհամարվի հարկադիր աշխատանք: Բայց այդ աշխատանքը պետք է բացառապես կապված լինի զինվորական ծառայության հետ, որն ունի հանրային նշանակություն: Օրինակ՝ որևէ հրամանատարի սեփական տան համար կամ նրա սեփական հողամասում ստորադաս զինծառայողի կողմից աշխատանքի կատարումը կարող է դիտվել որպես հարկադիր աշխատանք, քանի որ դա չունի հանրային նշանակություն, կատարվում է ի շահ մասնավոր անձի և զինվորական ծառայության պարտականության մաս չէ:

Զինվորական ծառայությունից զատ, հարկադիր աշխատանքի արգելքից որպես բացատրություններ կարող են սահմանվել ազատագրկման վայրերում կատարվող աշխատանքի, ազատագրկումից պայմանական ազատվելու դեպքում պահանջվող աշխատանքի կատարումը, պարտադիր զինվորական ծառայության փոխարեն այլընտրանքային աշխատանքի կատարումը, արտակարգ իրավիճակներում կատարված աշխատանքը, ինչպես նաև այն աշխատանքը, որի կատարումը քաղաքացիական պարտականությունների կատարման մաս է կազմում:

Ամրագրումը միջազգային և ներպետական նորմերում

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազատության վիճակում. ստրկությունը և ստրկավաճառությունը իրենց բոլոր տարատեսակներով արգելվում են»: Նույն Հռչակագրի 6-րդ հոդվածը սահմանում է, որ ամեն ոք, ուր էլ որ լինի, իրավասուրյեկտ ճանաչվելու իրավունք ունի:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ դաշնագրի 8-րդ հոդվածի համաձայն՝

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունը արգելվում են իրենց բոլոր ձևերով:

2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:

3. ա) Ոչ ոք չպետք է բռնադատվի հարկադիր կամ պարտադիր աշխատանքի:

բ) Այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքների հետ, կետ 3 (ա)-ն խոչընդոտ չի հանդիսանում տաժանակիր աշխատանքների նշանակած իրավասու դատարանի դատավճռով այդպիսի պատժի իրականացման համար:

գ) Մույն կետում «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» տերմինի մեջ չեն ընդգրկվում.

- iii) ա) ենթակետում հիշատակվող որևէ աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը.

- ռազմական բնույթի որևէ ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ ճանաչվում է քաղաքական ու կրոնական-էթնիկական շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ այդ շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված որևէ ծառայություն.

- որևէ ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին ու բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում.

- որևէ աշխատանք կամ ծառայություն, որը մտնում է սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

3. Մույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում.

ա) ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջում է կատարել սույն կոնվենցիայի հոդված 5-ի դրույթներին համաձայն կալանքի տակ

գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,

բ) զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով, պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակվող ծառայությունը,

գ) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանը սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

դ) սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կան ծառայություն:

Հարկադիր աշխատանքը արգելվում է նաև ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով:

Մոդուլ 4: Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Տևողությունը՝ 4 ժամ 15 րոպե
Բովանդակություն

1. Մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը
2. Անձնական ազատությունը և զինվորական ծառայությունը

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|---|------------------------|--------------------------|
| Մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը | Պրեզենտացիա | 2 ժամ |
| Անձնական ազատությունը և զինվորական ծառայությունը | Պրեզենտացիա Դասախաղ | 45 րոպե 1 ժամ 30 րոպե |

Դասախոսության նյութ

1. Մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը մարդու ամենահիմնարար իրավունքներից է:

«Ազատության» մասով այս իրավունքը վերաբերում է անձնական ազատությանը՝ դրա դասական իմաստով, այսինքն՝ անձի ֆիզիկական ազատությանը: Այն երաշխավորում է պետության կամայական ոտնձգությունների հետևանքով ձերբակալումից, կալանավորումից կամ այլ կերպով ազատությունից ֆիզիկապես զրկելուց անձի պաշտպանությունը:

«Անձնական անձեռնմխելիության» մասով այս իրավունքն անքակտելի է ազատության իրավունքից և փաստորեն հավասարեցվում է վերջինիս⁷⁵: Անձնական անձեռնմխելիության իրավունքը ներառում է երաշխիք, համաձայն որի առանձին անձինք պետք է ձերբակալվեն և կալանավորվեն միայն

⁷⁵ Էրոուսմիտն ընդդեմ Միացյալ Թագավորության. Comm. Report 12.10.78, para. 64.

օրենքով նախատեսված հիմքերով և ընթացակարգին համապատասխան: Անձնական անձեռնմխելիության իրավունքը չի վերաբերում, օրինակ, իրավաբանական, տնտեսական կամ հոգեբանական անձեռնմխելիությանը⁷⁶:

Այս իրավունքի խնդիրն է բացառել ցանկացած կամայական ձեռքարկում, կալանավորում կամ այլ կերպով ազատությունից ֆիզիկապես զրկում՝ առանց օրինական թույլտվության և պատշաճ դատական վերահսկողության երաշխավորման:

Այս իրավունքի պաշտպանության պահանջներն ու մեխանիզմներն առավել ծավալուն և խորությամբ արտացոլված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածում, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային որոշումներում:

Կոնվենցիայի 1-ին կետի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձեռքարկումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձեռքարկումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդու-

⁷⁶ «Ազատության» և «անձեռնմխելիության» կապի ու հարաբերակցության մասին ավելի հանգամանալից տե՛ս *Bozano v. France*, Judgment of 18 December 1986, *Timurtas v. Turkey*, Judgment of 13 June 2000 գործերով վճիռներում, ինչպես նաև՝ *Донна Гомьен, Девид Харрис, Лео Зваак. Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. М.1998, с.162.*

րին, գինեմուլներին կամ թմրամուլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, բացի ազատությունից զրկելու վերաբերյալ վերը նշված դեպքերի պայմաններից ու հիմքերից, ենթադրում է նաև ձերբակալման կամ կալանավորման դեպքում հետևյալ երաշխիքները (կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-5-րդ կետեր).

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Հարկ է նշել, որ ազատությունից զրկելու վերաբերյալ վերը նշված դեպքերը, դրանց պայմաններն ու հիմքերը վերջնական ու սպառիչ են և պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով⁷⁷:

⁷⁷ Այս դեպքերի, դրանց հիմքերի ու պայմանների սպառիչ ու վերջնական լինելու, ինչպես նաև դրանց կիրառության պարամետրերի ու պայմանների մասին մանրամասն տե՛ս՝ Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների գործով վճիռը, 56-59-րդ կետեր (Engel and Others v. the Hetherlands, Judgment of 8 June 1976), Էրկալոն ընդդեմ Նիդեռլանդների գործով վճիռը, 50-րդ կետ (Erkalo v. the Netherlands, Judgment of 2 September 1998), Կուինն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռը, 42-րդ կետ (Quinn v. France, Judgment of 22 March 1995) և Կուրտն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռը, 122-րդ և 123-րդ կետեր (Kurt v. Turkey, Judgment

Այս իրավունքը վերլուծելիս պետք է տարբերել դրա իրականացման համար անհրաժեշտ երկու տեսակի երաշխիքային պահանջներ: Առաջինը վերաբերում է ձեռքբերման կամ կալանավորման օրինականությանը. պետությունները կարող են անձին գրկել ազատությունից միայն նշված վեց դեպքերում, այն էլ՝ որոշակի պայմաններ պահպանելու պարագայում: Երկրորդը վերաբերում է ձեռքբերված կամ կալանավորված անձանց դատավարական երաշխիքներին. ազատությունից գրկելու յուրաքանչյուր դեպքում պետք է նախատեսվեն երաշխիքներ, որոնք ամրագրված են վերը նշված 2-5-րդ կետերում, որոնք գլխավորապես կոչված են ապահովելու ազատությունից գրկելու օրինականության մասին որոշման (վերը նշված «ա»-«գ» կետերում նշված պահանջներին համապատասխանելու առումով) անհավաստի և պատշաճ կերպով ընդունումը:

Թեև ազատության իրավունքը չի ներառում ազատ տեղաշարժի իրավունքը, այնուամենայնիվ, հնարավոր են դեպքեր, երբ որոշակի պայմաններում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը համարվի ազատության իրավունքի խախտում: Մասնավորապես, այդպիսիք կարող են լինել «բաց բանտում», կարգապահական գումարտակում կամ հոգեբուժական հիվանդանոցում որոշակի պայմաններով անձին պահելու դեպքերը⁷⁸:

Հետաքրքիր են նաև բանտում՝ ազատությունից արդեն գրկված պայմաններում ազատության սահմանափակման ավելի խիստ միջոցներ կիրառելու և անձին ավելի սահմանափակ պայմաններում պահելու դեպքերը: Թեև դրանք, որպես կանոն, չեն կարող համարվել անձին ազատությունից գրկելու դեպքեր, սակայն կարող են լինել այնպիսի բացառիկ հանգամանքներ, որոնք կարող են համարվել ազատության իրավունքի միջամտություն⁷⁹:

1.1. Անձին ազատությունից գրկելը մասնավոր անձանց կողմից

Հարկ է նշել, որ իշխանական լիազորություն չունեցող անձանց կողմից որևէ անձի ազատությունից գրկելիս պետության պոզիտիվ պարտավորությունների բնույթի վերաբերյալ պարզ և բավարար պատկերացումներ չկան:

of 25 May 1998), Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, 118-րդ կետ (Chahal v. the United Kingdom, Judgment of 15 November 1996), Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի գործով վճիռը, 14-րդ կետ (Lawless v. Ireland, Judgment of 1 July 1961), Գուզարդին ընդդեմ Իտալիայի գործով վճիռը, 98-րդ կետ (Guzzardi v. Italy, Judgment of 6 November 1980):

⁷⁸ Guzzardi v. Italy, Judgment of 6 November 1980, De Wilde, Ooms and Versyp v. Belgium, Judgment of 18 June 1971, Ashingdane v. the United Kingdom, Judgment of 28 May 1985, Nielsen v. Denmark, Judgment of 28 November 1988, Amur v. France, Judgment of 25 June 1996, ինչպես նաև Նիելսենն ընդդեմ Դանիայի. Comm. Report 12.03.87, 103-129 կետեր:

⁷⁹ Bollan v. the United Kingdom (App. 42117/98), admissibility decision of 4 May 2000.

Թեև այս իրավունքի խախտման հետ կապված հիմնախնդիրների մեծամասնությունն առաջանում է դատավորների և պետական ծառայողների գործողությունների և որոշումների հետևանքով, այնուամենայնիվ, իշխանական լիազորություն չունեցող անձանց՝ կալանքի իրականացման հետ կապված գործողությունները նույնպես պետք է սահմանփակվեն և զսպվեն:

Ասվածը հիմնավորվում է Եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումներով:

Նիելսենն ընդդեմ Դանիայի գործում դիմողը՝ 12-ամյա տղան, իր մոր պահանջով տեղավորվել էր հոգեբուժական հիվանդանոցում: Դատարանը որոշեց, որ քանի որ հոսպիտալացումը (հիվանդանոցում տեղավորելը) մոր ծնողական իրավունքի արտահայտությունն էր, որը երաշխավորվում էր Կոնվենցիայի 8-րդ հոդվածով և արդարացվում էր դիմողի հոգեկան վիճակով, և քանի որ նրա ազատության սահմանափակումներն զգալիորեն չէին տարբերվում նրանցից, որոնք կարող էին կիրառվել երեխայի նկատմամբ սովորական հիվանդանոցում, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ազատությունից զրկում տեղի չի ունեցել:

Կոնիարսկան ընդդեմ Միացյալ Թագավորության⁸⁰ գործի վերաբերյալ ընդունելիության որոշման մեջ դատարանը դիմողի 17-ամյա աղջկա դրությունը, որն ախտորոշվել էր որպես հոգեկան անհավասարակշիռ (պսիխոպատիկ) և տեղավորվել էր տեղական իշխանության հսկողությամբ ապահովված շենքում, տարբերակեց վերոնշյալ Նիելսենն ընդդեմ Դանիայի գործում դիմող Նիելսենի դրությունից այն հիմնավորմամբ, որ Կոնիարսկայի կալանքը որոշվել էր դատարանների կողմից, որոնք նրա նկատմամբ ծնողական իրավունքներ չունեին:

Ենթադրվում է, որ այս հիմնավորումը բացառում է պետության, ծնողների կողմից անարդարացի կերպով ազատությունից զրկելուց երեխաներին պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը:

Նշված տարբերության հիմքերից ելնելով՝ կարող է նույնիսկ ենթադրվել, որ 5-րդ հոդվածի 1-ին կետը չի ներառում մասնավոր անձանց կողմից իրականացվող որևէ անձի ազատությանը միջամտությունների մեջ պաշտպանություն իրականացնելու պետության ցանկացած պոզիտիվ պարտավորություն:

Հարկ է նշել, որ պետական ծառայողները չեն կարող համապատասխան գործողություններ չիրականացնել այն դեպքում, երբ ազատությունից զրկելը չի համապատասխանում 5-րդ հոդվածի պահանջներին: Եվրո-

⁸⁰ Koniarska v. the United Kingdom (App. 336770/96), admissibility decision of 12 October 2000.

պական դատարանը Ռիերա Բլումը և այլք ընդդեմ Իսպանիայի⁸¹ գործով վճռում որոշեց, որ դիմողների ազգականներին, որոնք, ինչպես ենթադրվում էր, դարձել էին կրոնական աղանդի անդամներ, պահել էին հյուրանոցում՝ հոգեբույժի և հոգեբանի օգնությամբ «ապաժրագրավորելու» նպատակով: Այդ գործողություններն առաջարկվել էին նախնական դատական քննության ընթացքում, երբ դիմողները գտնվում էին կալանքի տակ: Սակայն ո՛չ տվյալ երկրի դատարանը, ո՛չ դիմողների ազգականները չունեին օրենքով նախատեսված որևէ լիազորություն այդ գործողությունների իրականացման համար: Քանի որ դիմողների ընտանիքների գործողությունները չէին կարող իրականացվել առանց իշխանությունների գործուն մասնակցության, դատարանը որոշեց, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածով պաշտպանվող այս իրավունքի խախտում:

Ըստ դատարանի՝ պետական մարմինները լուր համաձայնությամբ և հանդուրժողաբար չպետք է վերաբերվեն մասնավոր անձանց կողմից կատարվող և ազատությունից զրկմանը հանգեցրած գործողություններին, որոնք հակասում են կոնվենցիայի 5-րդ հոդվածին, ինչպես նաև պետական մարմինները չպետք է խրախուսեն մասնավոր անձանց կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որոնցից իրենք նույնպես պետք է ձեռնպահ մնան:

1.2. Ազատությունից զրկելու օրինականությունը

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ազատությունից զրկելը, որը չի մտնում կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա»–«գ» ենթակետերում թվարկված վեց կատեգորիաների մեջ, անօրինական է: Օրինականության պահանջը ենթադրում է, որ ազատությունից զրկումը պետք է իրականացվի ներպետական իրավունքին և կոնվենցիային համապատասխան և չլինի կամայական:

Օրինականության հասկացությունը, որը 5-րդ հոդվածի հիմնական բովանդակությունն է, նրանում ամրագրված է հետևյալ երկու ձևակերպումներով:

Առաջինը «օրենքով սահմանված կարգով» ձևակերպումն է, որը վերաբերում է գլխավորապես դատավարական հարցերին և հանդես է գալիս այն միջոցների մասին ընդհանուր դրույթում, որոնց օգնությամբ իշխանության մարմինները կարող են անձին զրկել ազատությունից, այսինքն՝ 5-րդ հոդ-

⁸¹ Riera Blume and Others v. Spain, Judgment of 9 March 1999.

վածի 1-ին կետի «ա»–«գ» ենթակետերում նախատեսված դեպքերում: Երկրորդը «օրենքով նախատեսված կարգով» ձևակերպումն է:

Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան՝ «օրենք» բառն անհրաժեշտ է մեկնաբանել ոչ միայն որպես գրված իրավունք, այլ նաև չգրված իրավունք:

Դատարանի կարծիքով՝ «օրենքով սահմանված» արտահայտությունից բխում են հետևյալ երկու պահանջները: Առաջին՝ «օրենքը» պետք է լինի մատչելի՝ քաղաքացիները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Երկրորդ՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, ստույգ, որը քաղաքացիներին թույլ կտա դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը: Քաղաքացին պետք է հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում օգտվելով խորհուրդներից, հանգամանքների ողջամիտ հաշվառմամբ, որքան հնարավոր է ճշգրտությամբ կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել իր գործողությունը⁸²:

Օրինականության առումով օրենքը պետք է ունենա նաև որոշակի որակ: Այստեղ հարկ է նշել, որ դատարանի պրակտիկայում համեմատաբար սակավադեպ են այն գործերը, որոնցում կասկածի տակ է դրվում օրենքի էությունը, որի համաձայն անձը զրկվել է ազատությունից: Իրադրությունն այլ է, երբ խոսքը վերաբերում է ազատությունից զրկելու դեպքում կիրառվող դատավարական իրավունքին: Այն դեպքում, երբ դատարանը քննության է առնում այն հարցը, թե արդյոք կալանավորման համար կոնվենցիայում թվարկված մեկ կամ ավելի հիմքերը հանդիսանում են ներպետական մարմինների կողմից համապատասխան միջոցների ընդունման համար հիմք, այդ պահանջի բավարարումից հետո նա ուսումնասիրում է «օրինականության» մասին հարցը միայն կիրառվող ընթացակարգերի կապակցությամբ: Որոշակի դեպքերում օրինականության հարցը կարող է կախված լինել նրանից, թե արդյոք բավարարված են ներպետական իրավունքի պահանջները, թե ոչ:

Ազատությունից զրկելու համար ներպետական իրավունքով նախատեսված հիմքերի առկայության պահանջը տարածվում է ազատությունից զրկելու ամբողջ ժամանակահատվածի վրա: Նախկինում գոյություն ունեցած, սակայն հետագայում դադարած այդպիսի հիմքերով անձին ազատությունից զրկելը համարվում է ազատության իրավունքի խախտում⁸³:

⁸² Sunday Times v. the United Kingdom, Judgment of 26 April 1979.

⁸³ Quinn v. France, Judgment of 22 March 1995.

Ինչպես արդեն վերը նշվեց, դատարանի նախադեպային իրավունքի համաձայն ազատությունից զրկելը պետք է լինի «օրինական» և կատարվի «օրենքով սահմանված կարգով»: Նախ և առաջ, սա նշանակում է, որ կոնկրետ ձերբակալումը կամ կալանավորումը պետք է կատարվի ներպետական իրավունքի դատավարական և նյութական նորմերին համապատասխան: Օրինակ, երբ ձերբակալման համար պահանջվում է օրդեր (հրաման, կարգադրություն), այն պետք է կազմվի ստույգ, այլապես ձերբակալումը, 5-րդ հոդվածի համաձայն, չի համարվի օրինական: Նմանատիպ կերպով, եթե ուժ է գործադրվում ձերբակալումն իրականացնելու համար, գործադրվող ուժի աստիճանը չպետք է գերազանցի այն սահմանը, որը թույլատրվում է ներպետական իրավունքով նախատեսված հանգամանքներում:

Ներպետական իրավունքի հետ համապատասխանությունը քննության առնելը Եվրոպական դատարանի դերի և իրավասության մեջ չի մտնում: Դատարանի կարծիքով՝ այն վերապահված է ներպետական դատարաններին՝ օժանդակության սկզբունքին համապատասխան: Դատարանը միաժամանակ գտնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ներպետական իրավունքը հաշվի չառնելը հանգեցնում է կոնվենցիայի խախտմանը, և դատարանը բավարարված կլինի, եթե ներպետական իրավունքը պահպանված լինի⁸⁴:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ազատությունից զրկելը «օրինական» համարելու համար բավարար չէ, որպեսզի այն կատարված լինի ներպետական իրավունքին համապատասխան: Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, ինչպես վերև արդեն նշվեց, օրենքը պետք է լինի մատչելի, կանխատեսելի և բավարար հստակությամբ ձևակերպված, ինչպես նաև բովանդակի կամայականության դեմ այլ երաշխիքներ:

Եվրոպական դատարանը որպես կարևոր ելակետային դրույթ նշում է այն, որ մատչելիության պահանջը չի պահպանվում, երբ անձն ազատությունից զրկվում է չհրապարակված իրավական նորմի հիման վրա:

Ներպետական մակարդակով ազատությունից զրկելու օրենսդրական հիմքը 5-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված դրույթների հետ անհամապատասխանության դեպքում միանշանակորեն համարվում է «անօրինական»: Հարկ է նշել, որ համաձայն դատարանի նախադեպային իրավունքի՝ չի թույլատրվում կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց նկատմամբ, եթե կալանքը չի հե-

⁸⁴ Benham v. the United Kingdom, Judgment of 10 June 1996, Winterwerp v. the Netherlands, Judgment of 24 October 1979, Steel and Others v. the United Kingdom, Judgment of 23 September 1998.

տապնդում գործ հարուցելու նպատակ: Այդ կերպ ազատությունից զրկելը թեև համարվում է օրինական ներպետական մակարդակով, սակայն հակասում է 5-րդ հոդվածի 1-ին կետին:

Գործնականում հնարավոր է, որ առաջանա այնպիսի իրավիճակ, երբ ազատությունից զրկելը թույլատրող ներպետական օրենքը լիովին համապատասխանի Եվրոպական կոնվենցիայի չափանիշներին, սակայն կոնկրետ հանգամանքներում դրա կիրառումը դատարանի կողմից որակվի որպես կամայական: Նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ ներպետական համապատասխան մարմինների կողմից որոշակի լիազորություններ կիրառվում են այնպիսի հանգամանքներում, երբ ազատությունից զրկելն ամենևին էլ անհրաժեշտ չէ կամ հետապնդում է ոչ իրավաչափ նպատակ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Եվրոպական դատարանի դիրքորոշումն այս հարցում բավականին հստակ է, համաձայն դրա՝ օրինակ լիազորությունների կիրառումը ոչ իրավաչափ նպատակին հասնելու համար հակասում է կոնվենցիային⁸⁵:

Մեկուսացման «օրինականության» անհրաժեշտ տարր է կամայականության բացակայությունը: Անձի մեկուսացումն այնպիսի լուրջ միջոցառում է, որն արդարացված է միայն այն դեպքում, երբ այլ, պակաս խիստ միջոցառումներն անբավարար են համարվել անհատի կամ հասարակական շահը պաշտպանելու համար, որը կարող է պահանջել տվյալ անձի մեկուսացում: Մա նշանակում է, որ բավարար չէ, որ ազատությունից զրկելը կատարվում է ներպետական իրավունքի համաձայն. այն նաև պետք է անհրաժեշտ լինի տվյալ հանգամանքներում⁸⁶:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ձերբակալմանն առնչվող տվյալների գրանցման բացակայությունը համարվում է ազատությունից զրկելու օրինականությանը և կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակներին հակասող: Դատարանն իր վճիռներում բազմիցս նշել է ազատությունից զրկելու ցանկացած դեպքի վերաբերյալ ստույգ և հուսալի տվյալների գրանցման կարևորությունը⁸⁷: Այս կապակցությամբ դատարանն իր մտահոգությունն է հայտնել հատկապես այն գործերով վճիռներում, որոնցում զանգասներ էին ներկայացվել իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ձերբակալվելուց հետո կոնկրետ անձանց անհայտացման վերաբերյալ որևէ տեղեկատվության բացակայության առնչու-

⁸⁵ Witold Litva v. Poland, Judgment of 4 April 2000.

⁸⁶ Tsitlis and Kouloumpas v. Greece, Judgment of 29 May 1997.

⁸⁷ Angelova v. Bulgaria, Judgment of 13 June 2002.

թյամբ⁸⁸: Անձանց կալանքի տակ պահելու մասին պաշտոնական գրառման բացակայությունը զգալի դժվարություններ է առաջացնում տեղի ունեցած իրադարձությունների բացահայտման համար և, անշուշտ, նպաստում է որևէ անձի ազատությունից զրկելու համար պատասխանատու անձանց՝ պատասխանատվությունից խուսափելուն: Ազատությունից զրկելու դեպքերում տվյալների սիստեմատիկ գրանցումը ձերբակալման պահից մինչ կալանավորման մի վայրից մյուսը տեղափոխելը կամայական վերաբերմունքի դեմ անհրաժեշտ երաշխիք է: Անձին ազատությունից զրկելու դեպքում ձերբակալման ժամանակի և վայրի, ձերբակալված անձի անվան, ձերբակալման պատճառների և ձերբակալող անձի անվան վերաբերյալ տվյալների գրանցումը միանգամայն կարևոր պահանջ է նաև այն դեպքում, երբ գոյություն չունի այնպիսի լուրջ վտանգ, ինչպիսին ձերբակալումից հետո անձանց անհայտացումն է: Կուրտն ընդդեմ Թուրքիայի գործով վճռում դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները, համաձայն որոնց՝ դիմող Յուզեիբ Կուրտի՝ զինվորների և գյուղի պահակախմբի կողմից ձերբակալությունը փաստաթղթերով չէր ձևակերպվել և նրա գտնվելու վայրի կամ ճակատագրի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը բացակայում էր, որոշեց, որ տվյալ փաստը, ինքնաստիճան, հարկ է դիտել որպես իշխանությունների շատ լուրջ զանցառություն, քանի որ տվյալ հանգամանքը թույլատրում էր Յուզեիբ Կուրտին անօրինական կերպով ազատությունից զրկելու մեջ մեղավոր անձանց թաքցնել հանցագործությանն իրենց մասնակցությունը, թաքցնել հանցանշանները և խուսափել ձերբակալված անձի ճակատագրի համար պատասխանատվությունից: Դատարանի կարծիքով՝ ձերբակալման ժամանակի և վայրի, ձերբակալված անձի անվան, ձերբակալման պատճառների և ձերբակալող անձի վերաբերյալ տվյալների բացակայությունը պետք է համարվի կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակների հետ անհամատեղելի:

Ամրագրումը միջազգային և ներպետական օրենքներում

Մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքն ամրագրված է.

- 1948 թ. մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձեռնմխելիության իրավունք», իսկ 9-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, ձերբակալման կամ արտաքսման»:

⁸⁸ Kurt v. Turkey, Judgment of 25 May 1998.

- 1966 թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 9-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգի համապատասխան, որոնք սահմանված են օրենքով»:
- Դաշնագրի համակարգում գործող Մարդու իրավունքների կոմիտեն 1982 թ. 16-րդ նիստում ընդունված N 8 ընդհանուր մեկնաբանության մեջ⁸⁹ նշում է, որ դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է ազատությունից զրկելու բոլոր դեպքերի նկատմամբ՝ լինեն դրանք քրեական գործեր, թե այլ բնույթի գործեր, ինչպիսիք են, օրինակ, հոգեկան հիվանդությունը, թափառաշրջիկությունը, թմրամոլությունը, դաստիարակչական նպատակները, ներգաղթի վերահսկողությունը և այլն:
- 1950 թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի կամ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածում, որի տեքստը մեջբերվեց վերևում:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում.

- 1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.
- 2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.
- 3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.
- 4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

⁸⁹ Kurt v. Turkey, Judgment of 25 May 1998.

- 5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով.
- 6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով.
- 7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին: Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցում պահանջել: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկել վերադաս դատական ատյանում: Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարել իր քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

2. Ազատություն և զինվորական ծառայություն

Ազատության և զինվորական ծառայության հարաբերակցության առումով դիտարկման առարկա կարող է լինել ազատության իրավունքի տեսակետից ֆիզիկական ազատության և զինվորական ծառայությամբ պայմանավորված դրա սահմանափակումների հարաբերակցության խնդիրը:

Քանի որ ազատության սահմանափակումը նույնական է անձին ֆիզիկական ազատությունից մասամբ կամ ամբողջությամբ այս կամ այն կերպ զրկելու հետ, կոնկրետ անձի ազատության սահմանափակումների ընկալման և գնահատման համար էական կարևորություն է ձեռք բերում նրա կարգավիճակը: Ազատությունից այդ անձի զրկված լինելու խնդիրը հնարավոր կլինի պարզել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները սահմանող հանրաձանաչ նորմերի ու սկզբունքների տեսակետից նրա կարգա-

վիճակին բնորոշ ազատության սահմանափակման վերաբերյալ իրավական նորմերի իրավաչափության գնահատման հիման վրա:

Այս հարցադրումը նախ և առաջ վերաբերում է այն անձանց, ովքեր ծառայության մեջ են գտնվում բանակում, և նրանց հարկադրում են գտնվել որևէ վայրում՝ կարգապահական ռեժիմ կիրառելու միջոցով:

Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների գործով⁹⁰ դիմողներ Էնգելը Վան դեր Վիելը, Յան դե Վիտը, Յոհաննես Դոնը և Վիլեմ Շուլը պնդում էին, որ կարգապահական պատիժը և իրենց նկատմամբ կիրառված հարկադրական միջոցը հակասում են կոնվենցիայի 5-րդ հոդվածի առաջին կետին:

Սույն գործով դատարանի վճռում նշվում է, որ կոնվենցիայի նախապատրաստման և ընդունման ժամանակ մասնակից պետությունների մեծամասնությունն իր զինված ուժերի համակարգում ուներ համապատասխան զինվորական կարգապահական գումարտակներ, որոնցում կարող էին զինծառայողների որոշ իրավունքներ և ազատություններ սահմանափակել, ինչը չէր կարող կիրառվել քաղաքացիական անձանց նկատմամբ: Հետևաբար, այդպիսի համակարգի առկայությունը ինքնըստինքյան չէր հակասում նրանց պարտավորություններին:

Քննության առարկա գործով դատարանը ձևակերպեց հետևյալ դիրքորոշումը.

- Կոնվենցիան կիրառելի է ոչ միայն քաղաքացիական անձանց, այլև զինծառայողների նկատմամբ: Այն իր 1-ին և 14-րդ հոդվածներում ամրագրում է, որ պայմանավորվող պետությունների իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք պետք է առանց խտրականության օգտվի կոնվենցիայի 1-ին բաժնում սահմանված իրավունքներից... Այնուամենայնիվ, կոնվենցիայի նորմերը սույն գործով մեկնաբանելիս և կիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի զինվորական կյանքի առանձնահատկությունները և առանձին զինծառայողների համար դրա ունեցած ազդեցությունը:
- Կարգապահական պատիժը կամ միջոցը կարող է հանդիսանալ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,:
- Որոշելու համար, թե արդյոք որևէ մեկը «զրկվել է ազատությունից», 5-րդ հոդվածի իմաստով, մեկնակետ պետք է հանդիսանա կոնկրետ իրադրությունը: Զինվորական ծառայությունն այն տեսքով, որ գոյություն ունի մասնակից պետություններում, ոչ մի դեպքում չի հանդիսանում կոնվենցիայի իմաստով ազատությունից զրկում և դա հատուկ նշված, վերապահված է 4-րդ հոդվածի 3

⁹⁰ Engel and Others v. the Netherlands, Judgment of 8 June 1976.

(բ) կետում: Զինձառայողների տեղաշարժի ազատության բավականին լայն սահմանափակումները պայմանավորված են զինվորական ծառայության հատուկ պահանջներով, դրան ուղեկցող մյուս սահմանափակումները չեն ընկնում 5-րդ հոդվածի գործողության ներքո:

- Յուրաքանչյուր մասնակից պետություն լիազորված է սահմանել զինվորական կարգապահության իր սեփական համակարգը և այդ հարցում օգտվում է հայեցողության որոշակի ազատությունից: Շրջանակները, որոնցից մասնակից պետությունը չի կարող դուրս գալ, ինչպես դա պահանջում է կոնվենցիայի 5-րդ հոդվածը, միատեսակ չեն զինձառայողների և քաղաքացիական անձանց համար: Կարգապահական պատիժը կամ միջոցը, որոնք կարող են դիտվել որպես ազատությունից զրկում՝ դրանք քաղաքացիական անձի նկատմամբ կիրառելու դեպքում, կարող են չունենալ նույն բնույթը, երբ կիրառվում են զինձառայողի նկատմամբ: Այդուհանդերձ, վերջին դեպքում նույնպես 5-րդ հոդվածը կարող է կիրառվել, երբ դրանք ընդունում են սահմանափակումների ձև, որոնք ակնհայտորեն շեղվում են մասնակից պետությունների զինված ուժերում առկա սովորական կենսապայմաններից: Ըստ դատարանի՝ որոշելու համար, թե արդյոք դա իսկապես այդպես է, անհրաժեշտ է ուշադրության առնել գործոնների մի ամբողջ շարք, ինչպիսիք են տվյալ պատժի կամ կարգապահական միջոցի բնույթը, երկարատևությունը, հետևանքները և դրանց կատարման եղանակը:

Դատարանի վճռում նշված վերոհիշյալ դրույթների համատեքստում ուշագրավ են Հայաստանի Հանրապետության նախկին օրենսդրությանը համապատասխան զինձառայողներին կարգապահական կալանքի ենթարկելու միջոցով ազատությունից զրկելու դեպքերը դրանց «բնույթի, երկարատևության, հետևանքների և կատարման եղանակի» տեսակետից: Անձին կալանքի ենթարկելու ձևով ֆիզիկական ազատությունից զրկելը ոչ թե քրեական հանցագործություն, այլ ընդամենը կարգապահական զանցանք կատարելու համար պահպանվել էր միայն զինված ուժերում՝ զինձառայողների նկատմամբ, ինչի հիմնավորումը բանակի մարտունակությունը ապահովելու նպատակով զինվորական կարգապահությունն ավելի խիստ միջոցներով պահպանելու փաստարկն էր:

Զինվորական ծառայության ներկայիս քաղաքակրթական ու մշակութային-գաղափարական պայմաններում անխուսափելիորեն և անհրաժեշտաբար հարկ է հաշվի առնել այն հիմնարար հանգամանքը, որ բանակը հա-

մալրված է «զինվորականները համազգեստով քաղաքացիներ են» գաղափարով այս կամ այն չափով տոգորված զինվորականներով: Իսկ քաղաքացիները հասկանում են, որ իրենք հավասար հիմունքներով օժտված են միջազգային և ներպետական իրավունքով երաշխավորված իրավունքներով ու ազատություններով, որոնց սահմանափակումները պետք է բխեն կենսական անհրաժեշտությունից և բավարար կերպով հիմնավորված լինեն գործող օրենքներով: Նման քաղաքակրթական համատեքստում առավել սուր էր ընկալվում քաղաքացիների առանձին խմբի, տվյալ դեպքում՝ զինծառայողների այնպիսի հիմնարար իրավունքի սահմանափակումը, ինչպիսին նրանց կարգապահական զանցանքի համար ազատությունից զրկելն էր: Բնական է, որ ինքնաբերաբար առաջացավ այդպիսի խտրական և խիստ սահմանափակման կենսական անհրաժեշտության ու այն օրենսդրորեն հիմնավորելու խնդիրը: Խնդիրն ավելի սուր բնույթ կստանա, եթե այն դիտարկենք զինծառայողի կյանքի համար իրական վտանգ պարունակող զինվորական ծառայության և այդպիսի վտանգից զերծ քաղաքացիական անձի գործունեության հարաբերակցության հարթության մեջ:

Կաղապարային մտածելակերպից և տրամաբանությունից ձերբազատվելու պարագայում կարող ենք առնվազն փաստել, որ կարգապահական կալանքի ենթարկելու միջոցով զինվորական կարգապահությունը պահպանելու մեթոդի արդյունավետությունը վիճելի է մասնավորապես այն պատճառով, որ իրենց կյանքը վտանգի ենթարկող զինծառայողների շրջանում կարող է առաջացնել այդպիսի վտանգից զերծ քաղաքացիական անձանց համեմատ անհիմն կերպով «օրինականացված» խտրականության ու խիստ վերաբերմունքի ենթակա լինելու, և, դրանով հանդերձ, խոցելի սոցիալական խավին պատկանելու վերաբերմունք, ինչը, ազդելով նրանց բարոյահոգեբանական վիճակի վրա, կարող է հանգեցնել զինվորական ծառայության շարժառիթավորման անկման ու դրանով պայմանավորված՝ բանակի մարտունակության նվազեցման:

Կարգապահական կալանքը, որպես ժամանակակից քաղաքակրթական պատկերացումներին ու չափանիշներին չհամապատասխանող պատիժ, հակառակ արդյունք է տալու պատժի հիմնական նպատակներից մեկի՝ սոցիալական արդարության վերականգնման առումով, քանի որ կարող է ընկալվել որպես սոցիալական անարդարության դրսևորում: Փաստորեն, կառաջանար մի իրավիճակ, երբ մարտունակության ամրապնդմանը միտված միջոցը՝ կարգապահական կալանքը, կարող էր թուլացնել այդ մարտունակությունը և դառնալ ոչ միայն ինքնանպատակ, այլև վնասակար:

Պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ զինծառայողներին կարգապահական կալանքի տակ պահելու ժամանակ բավականաչափ ռե-

սուրս էր վատնվում, ինչպես նաև ծառայակիցների մի մասը ստիպված էին լինում մյուսների նկատմամբ «ոստիկանական» գործողություններ կատարել, ինչը օբյեկտիվորեն նրանց միջև հարաբերությունների այնպիսի ենթաշերտ կարող էր ձևավորիել, որը որոշակիորեն կարող էր վնասել բանակի հոգեբանական ամբողջականությանը և նվազեցնել նրա մարտունակությունը: Չպետք է մոռանալ նաև, որ ոչ վաղ անցյալում շատ պետությունների բանակներում կարգապահական զանցանքների համար նախատեսված էին նաև մարմնական պատիժներ, որոնց նպատակը նույնպես «կարգապահության ամրապնդումն» էր:

Ոչ պակաս խնդրահարույց է ժամկետային զինծառայողների նկատմամբ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կիրառելու խնդիրը: ՀՀ քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած ժամկետային ծառայության զինծառայողներին կարգապահական գումարտակում պահելը երեք ամսից երեք տարի ժամկետով կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները և դատապարտյալի անձնավորությունը, նպատակահարմար գտնի առավելագույնը երեք տարի ժամկետով ազատագրկման փոխարեն կիրառել կարգապահական գումարտակում պահելը՝ նույն ժամկետով»: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ և 50-րդ հոդվածների՝ «կարգապահական գումարտակում պահելը» քրեական պատժի հիմնական տեսակ է:

Միաժամանակ հարկ է հաշվի առնել, որ «կարգապահական գումարտակում պահելը» զինվորական ծառայության ձև է. կարգապահական գումարտակը զինված ուժերի ստորաբաժանում է, որտեղ իրականացվում է զինվորական ծառայություն՝ ավելի խիստ սահմանափակումների պայմաններում: Կարգապահական գումարտակում զինվորական ծառայության ժամկետը լրացուցիչ ժամկետ է, այն չի հաշվանցում ծառայության սահմանված ժամկետը, այլ գումարվում է դրան: Փաստորեն, կարգապահական գումարտակում ծառայելու ժամկետը ավելի խիստ սահմանափակումների պայմաններում զինվորական ծառայության ժամկետը երկարաձգելու ձև է:

Ասվածից միանգամայն ակնհայտ է դառնում, որ ՀՀ քրեական օրենսգրքի իմաստից բխում է զինվորական ծառայության շարժառիթավորման և դրանով պայմանավորված շատ գործոնների, այդ թվում՝ մարտունակության համար խիստ վտանգավոր մի գաղափար՝ «Զինվորական ծառայությունը պատիժ է»:

Ինտերակտիվ խաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դասախաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի կառավարության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 45 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն:

Կողմերի դիրքորոշումները լսելուց հետո դասախոսը ներկայացնում է դատարանի իրական գնահատականը⁹¹ և դրա հիմնավորումները: Առկա է անձին ազատությունից զրկելու փաստ՝ համաձայն կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի:

Գործի փաստերը

Անձը փոստային բաժանմունքում աղմուկ է բարձրացրել, որից հետո փոստային բաժանմունքի աշխատակիցները ոստիկան են կանչել, որոնք էլ անձի հարբած լինելու կասկածանքով նրան տեղափոխել են սթափարան: Անձը սթափարանում հարկադրաբար պահվել է 6 ժամ 30 րոպե:

Արդյո՞ք անձին սթափարանում պահելը կարելի է համարել ազատությունից զրկում:

⁹¹ Witold Litwa v Poland, N26629/95, 04.04.2000.

Մոդուլ 5: Արդար դատաքննության իրավունք

Տևողությունը՝ 4 ժամ 40 րոպե

Բովանդակություն

1. Արդար դատաքննության իրավունքի հասկացությունը
2. Արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|---|-------------|---------------|
| Արդար դատաքննության իրավունք | Մտքերի գրոհ | 20 րոպե |
| | Պրեզենտացիա | 1 ժամ 30 րոպե |
| | Դատախաղ | 1 ժամ 20 րոպե |
| | Խնդիր | 30 րոպե |
| Արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք | Պրեզենտացիա | 1 ժամ |

Ինտերակտիվ խաղ

Մտքերի գրոհի կազմակերպում

Մինչ դասախոսությանն անցնելը դասախոսը կազմակերպում է ունկնդիրների մտքերի գրոհ: Գրոհի համար առաջադրվում է հարց. «Ինչպիսի՞ն պետք է լինի դատաքննությունը՝ արդար համարվելու համար»:

Տրվում է 5 րոպե մտածելու համար, հետո ունկնդիրները հայտնում են իրենց կարծիքները, որոնք գրանցվում են գրատախտակին: Երբ կարծիքները սկսում են կրկնվել, մտքերի գրոհը դադարեցվում է: Դասախոսը ամփոփում է և բարձրաձայն կարդում արդար դատաքննության վերաբերյալ բոլոր կարծիքները: Այնուհետև հայտարարում է, որ ներկայացնելու է արդար դատաքննությունը՝ ինչպես այն ընկալվում և կիրառվում է, դրա բոլոր հատկանիշները, և դասի ընթացքում պարզելու են, թե որքանով են մտքերի գրոհի ժամանակ հայտնված կարծիքները համընկնում տեսական և կիրառական մեկնաբանությունների հետ:

Դասախոսության նյութ

1. Արդար դատաքննության իրավունք. ընդհանուր նկարագրություն

Ժողովրդավարական հասարակություն հատկանիշներից են իրավունքի և օրենքի գերակայության սկզբունքները: Իրավունքի գերակայությունը առաջին հերթին մարդու իրավունքների գերակայությունն է, որն իր մեջ ներառում է իրավական որոշակիության սկզբունքը: Սրանց լույսով էլ քննարկվում և բացահայտվում է արդար դատաքննության իրավունքը: Պետությունները պարտավորություն են կրում ապահովելու արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացումը:

Արդար դատաքննության իրավունքը վերաբերում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերին: Քաղաքացիականի և քրեականի տարբերակումը կարևոր նշանակություն ունի:

«Քաղաքացիական» և «քրեական» գործերի հասկացությունները ինքնավար են, ուստի այդ հասկացությունների ներպետական բաժանումները և տարբերակումները ոչ միշտ կարող են վճռական նշանակություն ունենալ:

Կոնկրետ գործի քրեական լինելու հանգամանքը գնահատելիս հաշվի է առնվում ներպետական օրենքով արարքի դասակարգումը, քննարկման առարկա ընթացակարգի բնույթը և պատժի խստության բնույթն ու աստիճանը: Քրեական գործերով արդար դատաքննության իրավունքով սահմանված երաշխիքները անձի համար կիրառելի են՝ սկսած այն պահից, երբ անձը կասկածվում է քրեական արարքի կատարման մեջ, և այդ երաշխիքները կիրառելի են դատավարության բոլոր հետագա փուլերում՝ մինչև վերջնական դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելը:

1.1. Դատարանի մատչելիությունը

Դատարանի մատչելիությունը արդար դատաքննության իրավունքի անբաժան տարրերից է: Անհատը պետք է հնարավորություն ունենա դիմելու դատարան՝ իր քաղաքացիական իրավունքի կամ պարտականության հարցը վճռելու համար: Այս իրավունքի արդյունավետ իրականացումը համապատասխան պարտականություն է դնում պետության վրա: Այդպիսի պարտականություններից կարող է լինել քաղաքացիական գործերով իրավական օգնության տրամադրումը: Պետությունն ազատ է իր հայեցողությամբ ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն դատարանի մատչելիությունը, սակայն կարող են լինել նաև սահմանափակումներ, որպիսիք պետք է լինեն համաչափ և հետապնդեն իրավաչափ նպատակ: Դատարանի մատչելիության իրավունքը ներառում է ոչ միայն հայց հարուցելու իրավունքը, այլև վեճի կապակցությամբ վերջնական որոշում ստանալու իրավունքը:

Վերջնական որոշումն իր հերթին պետք է պարտադիր ուժ ունենա և հնարավոր լինի իրականացնել: Եթե անձն իր քաղաքացիական իրավունքի իրականացման վերաբերյալ վերջնական դատական ակտ ունի, որը հնարավոր չէ իրականացնել, ապա խախտվում է դատարանի մատչելիության սկզբունքը: Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի⁹² գործով Բուրդովի օգտին եղել է դատարանի վճիռ ռադիոակտիվ ճառագայթման ենթարկված լինելու համար հատուցում ստանալու վերաբերյալ, սակայն հատուցման վճարումը ուշացվել է: Պետության ֆինանսական դժվարությունները որպես նման հատուցումները տրամադրելու արդարացում երբեք ընդունելի չեն համարվում:

Վերջնական և իրացվելի որոշում ստանալու իրավունքը սերտորեն առնչվում է օրենքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների հետ:

1.2. Արդարացի լսումներ

Յուրաքանչյուր գործով արդար դատաքննության իրականացումը դիտվում է ընթացակարգերի ամբողջության մեջ: Որոշ ոչ էական խախտումներ կարող են անտեսվել, երբ ընդհանուր ընթացակարգերն արդար են եղել, սակայն չի անտեսվի այն խախտումը, որը հանգեցրել է արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացմանը: Արդարացի լսումները դիտարկվում են հետևյալ հարցերի վերաբերությամբ՝ ապացույցների թույլատրելիություն, իր անձի դեմ ցուցմունքներ տալուց ազատ լինելու և լռելու իրավունք, կողմերի հավասարություն:

Ապացույցների թույլատրելիությունը առաջնային կարգով ներպետական օրենսդրությամբ կարգավորման ենթակա հարց է և դիտարկվում է դատական ընթացակարգերի՝ ընդհանուր առմամբ արդար լինելու լույսով:

Իր անձի դեմ ցուցմունք տալուց ազատ լինելու և լռելու իրավունքը էական է արդար դատաքննության համար: Սա նշանակում է, որ իշխանությունները պետք է ապացույցներ ձեռք բերեն առանց անձի վրա ճնշում գործադրելու և իր կամքին հակառակ ցուցմունք տալուն հարկադրելու, ինչը կարող է ձախողել գործի արդար դատաքննության իրականացումը: Այս իրավունքը կհամարվի խախտված, եթե ոստիկանությունը օգտագործի գաղտնի գործակալների՝ անձից տեղեկություններ կորզելու համար: Օրինակ՝ ապացույցներ կորզելու նպատակով ոստիկանական գործակալի ներդրումը նույն բանտային խցում և հետագայում անձից գործակալի միջոցով ստացած տեղեկությունները որպես ապացույց դատարանում օգտագործելը

⁹² Burdov v Russia, No 59498/00.

ուղղակիորեն խախտում է լռելու իրավունքը⁹³: Տվյալ դեպքում անձի ցուցմունքները չեն տրվել նրա նախաձեռնությամբ և կամքով, այլ արդյունք են ոստիկանական գաղտնի գործակալի հետևողական հարցադրումների և տեղեկություններ կորզելու ջանքերի, ինչը հոգեբանական ճնշում է անձի վրա, որն էլ ստիպել է վերջինիս իր կամքին հակառակ տեղեկություններ տրամադրել:

Լռելու իրավունքը բացարձակ իրավունք չէ, սակայն անձի լռությունը չի կարող նաև օգտագործվել նրա դեմ: Լռությունն անգամ որպես մեղքի անուղղակի ապացույց դիտելիս կխախտվի արդար դատաքննության իրավունքը: Առավել ևս արդարացի լսումների իրավունքը կխախտվի, եթե լռությունը հիմք համարվի անձին դատապարտելու համար:

Կողմերի հավասարությունը արդար դատաքննության իրավունքի հիմնարար տարրերից է, որը կիրառելի է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով: Մա մեկնաբանվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, որը նրան նվազ բարենպաստ վիճակում չի դնում հակառակ կողմի համեմատությամբ: Օրինակ՝ ապացույցների բացահայտման փուլում յուրաքանչյուր կողմ պետք է հնարավորություն ունենա իմանալու և իր մեկնաբանությունը կամ կարծիքը ներկայացնելու դատաքննությանը ներկայացված բոլոր ապացույցների վերաբերյալ:

Հրապարակային քննության իրավունքը և վճռի հրապարակման իրավունքը նույնպես արդար դատաքննության իրավունքի կարևոր տարրերն են, սակայն այս իրավունքները կարող են սահմանափակվել ներպետական օրենքով սահմանված որոշակի դեպքերում: Հրապարակային քննության իրավունքը ներառում է բանավոր լսումների անցկացման իրավունք՝ առնվազն մեկ դատական ասյանում: Քրեական գործերով մեղադրյալն իրավունք ունի ներկա լինել առաջին ասյանի դատարանում քննությանը, սակայն որոշ հանգամանքներում գործը կարող է քննվել նաև մեղադրյալի բացակայությամբ: Մյուս ասյաններում մեղադրյալի ներկայության անհրաժեշտության հարցը պայմանավորված է այդ ասյաններում գործի քննության բնույթով ինչպես նաև նրանով, թե ինչպես են ներկայացված և պաշտպանված մեղադրյալի իրավունքները:

Ողջամիտ ժամկետում լսումների իրավունքը վերաբերում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերին: Ժամանակի հաշվարկը սկսվում է վեճի հարուցման պահից և ավարտվում մինչև վերջնական որոշման օրինական ուժի մեջ մտնելը: Քրեական գործերով ժամկետը հաշվվում

⁹³ Allan v UK, No48539/99, 05.11.02, para. 50.

Է սկսած այն պահից, երբ անձին մեղադրանք է ներկայացվել, կամ երբ նա ձերբակալվել է: Չկան հստակ սահմանված ժամկետներ, որոնք բոլոր դեպքերում ողջամիտ են համարվում, այլ յուրաքանչյուր դեպքում դրա տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործի բարդությունը, ինչ աստիճանի է յուրաքանչյուր կողմի մասնակցությունը ընթացակարգերի երկարաձգման հարցում, և դիմողի համար ինչ հարց է լուծվում: Ռոբինսոն ընդդեմ Միացյալ Թագավորության⁹⁴ գործով ավելի քան 4 տարի տևած ծախսերի հատուցման հայցը պետական մարմնի պատճառով հետաձգման հիմքով համարվել է ողջամիտ ժամկետում արդարացի լսումների իրավունքի խախտում: Մեկ այլ գործով⁹⁵ քրեական դատավարությունը տևել է ավելի քան չորս տարի և ինը ամիս, ինչը դիտվել է որպես ողջամիտ ժամկետում արդարացի լսումների իրավունքի խախտում:

Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանը պետք է օժտված լինի կատարման համար պարտադիր որոշումներ կայացնելու իրավունքով: Դատավորների անկախության հարցը քննելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. դատավորի նշանակման եղանակը, որպես դատավոր գործելու ժամկետը, արտաքին ճնշումների գոյությունը, և այն, թե արդյոք դատարանը առերևույթ անկախ է: Դատարանը պետք է անկախ լինի ինչպես քննվող գործի կողմերից, այնպես էլ գործադիր իշխանության մարմնից:

Դատարանը պետք է վստահություն ներշնչի ինչպես կողմերին, այնպես էլ հասարակությանը: Դատարանի անկողմնակալությունը արտահայտվում է սուբյեկտիվ ու կանխակալ մոտեցումից կամ կարծիքից ազատ և օբյեկտիվ տեսանկյունից անաչառ լինելով:

1.3. Անմեղության կանխավարկած

Անմեղության կանխավարկածը նշանակում է, որ անձն անմեղ է հանցանքի կատարման մեջ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղքը հաստատված չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:

Անմեղության կանխավարկածը պահանջում է, որ դատարանի անդամները դատավարությունն սկսեն և իրականացնեն առանց մեղադրյալի վերաբերյալ կանխակալ կարծիքի, թե նա հանցանք է գործել: Հանցագործության կատարման ապացուցման բեռը և պարտականությունը կրում է մեղադրող կողմը՝ դատախազը, և որևէ չփարատված կասկած մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի:

⁹⁴ Robbins v. UK, No 22410/93, 23.09.99, 1998 26 EHRR 527.

⁹⁵ Cherakrak v France, No 34075/96, 02.08.00.

Արդար դատաքննության իրավունքը կխախտվի, եթե անձն առանց ապացույցների մեղավոր համարվի հանցագործության կատարման մեջ և դատապարտվի:

Անմեղության կանխավարկածը պահանջում է, որ դատավորները և դատախազները նույնիսկ մինչ դատավարությունն սկսելը ձեռնպահ մնան հանցագործության կատարման մեջ անձի մեղավորության մասին հրապարակային հայտարարություններ անելուց: Նույնիսկ այն դեպքում, երբ անձն ընդամենը ձերբակալվել է, և նրան դեռևս մեղադրանք չի առաջադրվել, անմեղության կանխավարկածը պետք է կաշկանդի այդ անձի մեղավորության վերաբերյալ հրապարակային արտահայտություններ անելուց:

Ամրագրումը միջազգային և ներպետական իրավական նորմերում

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիման վրա իրավունք ունի պահանջելու, որ իր գործը հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից»:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագրի 14-րդ հոդվածի համաձայն՝

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք: Մամուլին ու հասարակությանը կարող է թույլ չտրվել մասնակցել ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը, կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը այն չափով, որ չափ, դատարանի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ ցանկացած դատական որոշում պետք է հրապարակային լինի, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան, կամ գործը վերաբերում է ամուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով:

3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

ա) Շտապ կարգով և մանրակրկիտ, այն լեզվով, որը նա հասկանում է, պետք է տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին:

բ) Բավարար չափով ժամանակ ու հնարավորություններ ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հարաբերությունների մեջ մտնելու համար:

գ) Դատվի առանց չարդարացված հապաղման:

դ) Դատվի իր ներկայությամբ և պաշտպանի իրեն անձամբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. եթե նա չունի պաշտպան, տեղեկացված լինի այդ իրավունքի մասին և ունենա իր համար նշանակված պաշտպան ցանկացած դեպքում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, նրա համար անհատույց բոլոր այն դեպքերում, եթե նա բավականաչափ միջոցներ չունի այդ պաշտպանին վճարելու համար:

ե) Հարցաքննել նրան հակացուցող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննվեն, ունենալ իր վկաներին կանչելու և հարցաքննելու իրավունք՝ այն նույն պայմաններով, որ գոյություն ունեն նրան հակացուցող վկաների համար:

զ) Օգտվել թարգմանի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

է) Չպետք է պարտադրվի իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, կամ նրան ներկայացվում է ցանկացած քրեական մեղադրանք, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դոմբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից

ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ երբ դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) ունենալու բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»:

Ինտերակտիվ խաղ

Դատախաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դատախաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի կառավարության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 45 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն:

Գործի փաստերը

Անձը ձերբակալվել է պետության խորհրդարանի անդամի սպանության կասկածանքով, սակայն նրան դեռևս մեղադրանք չի առաջադրվել: Ձերբակալման օրը ոստիկանության բարձրաստիճան մի սպա և մի նախարար համատեղ մամուլի ասուլիս են հրավիրում և հայտարարություն տարածում, որ ձերբակալված անձը ներգրավված է խորհրդարանի անդամի սպանության մեջ: Հետագայում դատաքննությամբ պարզվում է, որ այդ անձը սպանության մեջ ներգրավված չի եղել, և նրան արդարացնում ու ազատում են կալանքից:

Հարց

Արդյո՞ք ոստիկանության բարձրաստիճան սպան և նախարարը տվյալ անձի մեղավորության մասին հայտարարություն կատարելով խախտել են անձի արդար դատաքննության կամ արդարացի լսումների իրավունքը: Եթե այո՝, ինչո՞ւ, եթե ո՞չ, ինչո՞ւ:

Ամփոփելով դիրքորոշումները և փաստարկները՝ դասախոսը ներկայացնում է իսկական դատական գործը⁹⁶ և դատարանի որոշումը, ըստ որի սպայի և նախարարի արարքը գնահատվել է որպես անձի անմեղության կանխավարկածի, հետևաբար՝ նաև արդար դատաքննության իրավունքի խախտում:

⁹⁶ Allen de Ribemont v France, No15175/89, 10.02.95, Series A, No 308, 1995 20 EHRR 557.

Քրեական գործերով անձի ունեցած իրավունքները չեն սահմանափակվում անմեղության կանխավարկածով: Այդ իրավունքների մեջ են ներառված.

- մեղադրանքի մասին անհապաղ տեղեկանալու իրավունքը: Արդար դատաքննությունը պահանջում է, որ անձը անհապաղ տեղեկացվի իրեն առաջադրվող մեղադրանքի մասին, որը ներառում է հակաօրինական արարքի նկարագրումը և դրա իրավական գնահատականը: Այս իրավունքի կարևորությունը հիմնավորվում է նրանով, որ անձը նախ պետք է իմանա իրեն ներկայացված մեղադրանքի մասին, ապա նախապատրաստի իր պաշտպանությունը:
- Բավարար ժամանակ, հնարավորություններ և իրավական ներկայացուցչություն ունենալու իրավունքը նշանակում է, որ անձին պետք է բավարար ժամանակ հատկացվի իր պաշտպանությունը նախապատրաստելու և իրականացնելու համար: Պաշտպանությունը կարող է իրականացվել անձամբ կամ իրավաբան ներկայացուցչի միջոցով:
- Վկաների հարցաքննությանը մասնակցելու և վկաներին հարցաքննելու իրավունքը նշանակում է, որ անձը ինչպես մեղադրանքի կողմի վկաներին հարցաքննելու, այնպես էլ անձամբ վկաներ հրավիրելու և հարցաքննելու իրավունք ունի: Հարցաքննությունը հնարավորություն է տալիս ստուգելու վկայի ցուցմունքների արժանահավատությունը:
- Եթե անձը չի տիրապետում կամ լավ չի տիրապետում այն լեզվին, որն օգտագործում է դատարանը, ապա նա թարգմանչի օգնությամբ գործի նյութերին ծանոթանալու և հանդես գալու իրավունք ունի:

Խնդիր

Խաղային ուսուցումը կատարվում է խնդրի և քննարկման ձևով:

Դասախոսը ներկայացնում է խնդիրը: Մասնավորապես՝ կարգապահական տույժերի տեսակները, դրանց կիրառման պայմաններն ու կարգը մինչև «ՀՀ ՋՌԻ կարգապահական կանոնագիրք»՝ օրենքի ընդունումը սահմանված էր ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությամբ, որը ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվել և օրինական ուժ է ստացել 1996 թ. օգոստոսի 12-ից:

Համաձայն այդ կանոնադրության՝ մեկուսացումը՝ որպես կարգապահական պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել ինչպես շարքային զինծառայողների նկատմամբ, այնպես էլ ենթասպաների ու սպաների

նկատմամբ: Կարգապահական մեկուսացումը կարող է տևել մինչև 10 օր՝ պայմանավորված զինվորական կոչումով: ՀՀ վերապահում էր կատարել կոնվենցիայի 5-րդ հոդվածից, այն է՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքից:

Դասախոսը ձևակերպում է նաև քննարկման ենթակա հարցը, այն է. «Արդյո՞ք հրամանատարի կողմից կարգապահական մեկուսացում տույժի կիրառումը խախտում է արդար դատաքննության իրավունքը: Եթե այո՝ ո՞ր ասպեկտը, ի՞նչ հիմնավորմամբ»: Այնուհետև խմբերին տրվում է 15 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր խումբ 5 րոպեում ներկայացնում է իր դիրքորոշումը: Հավելյալ հարցադրումների միջոցով դասախոսն ընդլայնում է քննարկումը: Քննարկումը ծավալելիս պետք է ուշադրություն դարձնել հետևյալին: Կարգապահական մեկուսացումը, ըստ էության, պատիժ է, որով զինվորականը ազատագրվում է որոշակի ժամկետով, որը կարող է տևել մինչև 10 օր: Ընդ որում՝ այդ պատիժը նշանակում է վերադաս հրամանատարը: Այն ենթակա է անվերապահ կատարման: Քանի որ ազատությունից զրկվելու հետ կապված տույժերն ունեն խստության բարձր աստիճան, դրանք դիտարկվում են որպես քրեական մեղադրանք՝ կոնվենցիայի իմաստով: Հետևաբար, պետք է պահպանվեն արդար դատաքննության իրավունքի բոլոր երաշխիքները, այդ թվում՝ դատարանի կողմից գործի քննության իրավունքը: Մյուս կողմից՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

ՀՀ Սահմանադրությունը արգելում է անձին ազատությունից զրկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով, մինչդեռ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ հաստատված կարգապահական կանոնադրությամբ վերադաս զինվորական ծառայողներին իրավունք է վերապահվել որպես կարգապահական տույժ նշանակել կարգապահական մեկուսացում, ինչն այլ կերպ կարելի է անվանել անձին անձնական ազատությանից զրկում: Բացի այն, որ դա անձին ազատությունից զրկում է, զինվորական ծառայողի դեպքում դա նաև զինվորական ծառայողին անգործության մատնելու ձև է, որը չի բխում զինվորական ծառայության և, ընդհանուր առմամբ, հանրության շահերից:

Թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային միանալիս Հայաստանի Հանրապետությունը վերապահում է կատարել զինվորականների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման նկատմամբ կոնվենցիայի դրույթների կիրառման վերաբերյալ, սակայն ՀՀ Սահմանադրությունը մարդու ազատությունը առանց օրենքով սահման-

ված դեպքերի և կարգի սահմանափակելու հնարավորություն չի նախատեսում:

Այսպիսով՝ մեկուսացումը՝ որպես զինվորականի կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոց, նման է քրեական պատժի, որը կիրառվում է առանց արդար դատական քննության իրավունքով նախատեսված երաշխիքների ապահովման, ուստի այստեղ, ի թիվս այլ հարցերի, կարող է բարձրանալ անձի արդար դատաքննության իրավունքի խախտման հարցը:

2. Արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքի հասկացությունը

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը երաշխավորում է, որպեսզի յուրաքանչյուր անձ, ում իրավունքների խախտում է տեղի ունեցել, այդ իրավունքները պաշտպանելու արդյունավետ միջոց ունենա ազգային իշխանությունների առջև: Այս իրավունքը ուղղակի պարտավորեցնում է պետությանը ապահովել անձանց մարդու իրավունքների պաշտպանությունը իր իրավասության սահմաններում և ազգային իրավական համակարգի միջոցով: Այս իրավունքի նպատակն է, որ անձի մարդու իրավունքները պաշտպանվեն հենց ազգային մակարդակում, որպեսզի անձը հարկադրված չլինի դիմել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ատյաններին: Պաշտպանության արդյունավետ միջոցը ենթադրում է, որ պետք է լինի իրավասու ազգային մարմին, որ կարող է ըստ էության քննել անձի մարդու իրավունքների խախտման վերաբերյալ բողոքը և խնդրին համարժեք լուծում տալ: Պարտադիր չէ, որ պաշտպանության արդյունավետ միջոց հանդիսացող մարմինը անպայման լինի դատարանը: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցը պետք է հիմնված լինի ազգային օրենսդրության վրա և գործնականում լինի արդյունավետ այն իմաստով, որ պետական մարմինները չկարողանան կամայականորեն ձգձգել և խոչընդոտել մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը: Երբ խոսքը վերաբերում է անձի՝ մարդու իրավունքի խախտման վերաբերյալ բողոքին, ապա պետք է հաշվի առնել, որ նման բողոքն ինքնին պետք է իրականում միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող մարդու իրավունքի կամ իրավունքների խախտման առնվազն վիճելի հարց պարունակի: Վիճելիության վերաբերյալ սահմանում գոյություն չունի, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով կարելի է եզրահանգման գալ իրավունքի խախտման վիճելիության մասին՝ հաշվի առնելով տվյալ դեպքի փաստերն ու հանգամանքները, որոնք, որպես կանոն, իրենց ամբողջության մեջ եզակի են:

Արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքը չի երաշխավորում, որ դիմողների բողոքները կբավարարվեն, պարզապես այն երաշխավորում է բողոքների քննարկման և լուծման համապատասխան միջոցի առկայությունը:

Արդյունավետ պաշտպանության միջոց տրամադրելու իրավասությամբ օժտված ազգային մարմինը պետք է անկախ լինի: Այս առումով հատկանշական է Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության⁹⁷ գործը, որով դատարանը գտավ, որ ոստիկանության բողոքների քննարկման համակարգն արդյունավետ պաշտպանության միջոց չի հանդիսանում անկախության բացակայության պատճառով: Դատարանը հաշվի էր առել այն հանգամանքը, որ գործնականում սովորական երևույթ էր այն, որ Շեֆ Կոնստաբլն անձամբ իր հրամանատարության տակ գտնվող ուժերի անդամներից էր նշանակում քննություն իրականացնող անձանց: Դատարանը հաշվի էր առել նաև ոստիկանության ֆինանսավորման և պաշտոնների նշանակման հարցում Home Secretary-ի էական դերակատարությունը:

Արդյունավետ պաշտպանության միջոցի ընդգրկումը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված կոնկրետ բողոքի փաստերով: Դիցուք, այն դեպքերում, երբ առկա է մահացու ելքով պատահար կամ անձի անհետացում, արդյունավետ միջոցի իրավունքը պետությանը պարտավորեցնում է իրականացնել մանրամասն այնպիսի քննություն, որի արդյունքում կպարզվեն մարդու մահվան կամ անհետացման համար մեղավորները, և վերջիններս օրենքով սահմանված կարգով պատժի կենթարկվեն:

Ազատագրկման մեջ գտնվող անձի մահը նույնպես կարող է արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքի խնդիրներ առաջացնել: Կենանն ընդդեմ Միացյալ Թագավորության⁹⁸ գործով, որը վերաբերում է բողոք ներկայացրած անձի՝ ազատագրկման մեջ գտնված որդու ինքնասպանությանը, առկա էր արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքի խախտում, քանի որ հետաքննությամբ հնարավոր չէր եղել պարզել, թե ով է պատասխանատու դիմողի որդու ինքնասպանության համար:

2.1. Դատարանը որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց

Դատարանների՝ որպես մարդու իրավունքների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հարցը պետք է դիտարկել երկու հարթությունների վրա՝ ազգային և միջազգային:

⁹⁷ Khan v. UK, No35394/97, 12.05.00, 2001 31 EHRR 45.

⁹⁸ Keenan v. UK, No 27229/95, 03.04.01, 2001 33 EHRR 38.

Ազգային դատարանները համարվում են իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, քանի որ իրավասու են կայացնել կատարման համար պարտադիր դատական ակտեր: Դատարանն իրավասու է քննել իրավունքների խախտման վերաբերյալ գործեր, ինչպես նաև այն իրավասու մարմինների դեմ բողոքներ, որոնք թերանում են քննել մարդու իրավունքների խախտման վերաբերյալ գործերը և իրենց իրավասության սահմաններում լուծումներ տալ դրանց:

Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, որտեղ ըստ էության քննվում և լուծվում են քաղաքացիական և քրեական գործեր: Առաջին ատյանի դատարանների վերջնական դատական ակտերի հետ անհամաձայնության դեպքում դրանք կարող են բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական կամ ՀՀ վերաքննիչ քրեական դատարաններ, ապա՝ ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական Դատարանի մասին ՀՀ օրենքի առաջին հոդվածի համաձայն «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը»: Սահմանադրական արդարադատության հարցերով Դատարան դիմելու իրավունք ունի նաև յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

ՀՀ-ում գործում է նաև վարչական դատարան, որը քննում է հանրային հարաբերություններից ծագող այն հարցերը, որոնք ընդդատյա չեն այլ դատարանների: Մասնավորապես՝ պետական մարմինների գործողությունները կամ անգործությունը՝ մարդու իրավունքների վերաբերյալ բողոքների քննարկման հետ կապված՝ կարող են բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Դատարանների՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց լինելը պայմանավորված է նրանով, որ օրինական ուժ ստացած դատական ակտերը պարտադիր են կատարման համար ՀՀ ամբողջ տարածքում և այն անձանց կողմից, ում դատական ակտը վերաբերում է:

Դատական ակտերի կատարումն ապահովվում է ՀՀ արդարադատության նախարարության կազմում գործող հարկադիր կատարման ծառայության միջոցով:

Միջազգային դատարանը, որը համարվում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է, որտեղ անձը կարող է դիմել միայն մարդու իրավունքների պաշտպանության ազգային միջոցները սպառելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Ամրագրումը միջազգային և ներպետական իրավական նորմերում

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը սահմանված է.

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածով.

«Յուրաքանչյուր ոք սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները

ոտնահարվելու դեպքում այդ իրավունքները իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ կերպով վերականգնելու իրավունք ունի»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով.

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»:

2.2. Չինվորական ծառայողների մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներ

Բացի իրավական պաշտպանության այն արդյունավետ միջոցներից, որոնք մատչելի են քաղաքացիական անձանց նրանց մարդու իրավունքների խախտման դեպքում իրավունքների պաշտպանության համար՝ զինծառայողների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է բողոքը այն անձի պետին կամ հրամանատարին, ով իր նկատմամբ կարգապահական տույժ է նշանակել:

Չինծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցներից մարդու իրավունքի հարցեր առաջացնող խնդիրը կարգապահական տույժերի կիրառումն է:

Կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում, եթե զինծառայողն իրեն անմեղ է համարում, կարող է բողոքարկել այն: Բողոքը ներկայացվում է այն անձի անմիջական պետին կամ հրամանատարին, ով նշանակել է տույժը: Ընդ որում՝ բողոք ներկայացնելը չի կասեցնում տույժի ի կատար ածման գործընթացը: Հրամանատարը, բողոքը ստանալուց հետո, պետք է քննարկի այն, և եթե որոշի, որ բողոքը հիմնավոր է, պետք է միջոցներ ձեռնարկի բողոքը բավարարելու ուղղությամբ, իսկ եթե ոչ, ապա գրավոր այդ մասին տեղեկացնի բողոք ներկայացրած զինծառայողին՝ պատասխանում նշելով բողոքի մերժման պատճառները, օրենսդրությունը և կարգապահական կանոնադրության այն կանոնները, որոնք հիմք են ծառայել բողոքի մերժման համար: Մերժման դեպքում հրամանատարը պետք է նշի նաև որոշման բողոքարկման կարգը:

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում զինծառայողների դատական միջոցի իրականացման որևէ գործուն մեխանիզմ:

Մոդուլ 6: Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Տևողությունը՝ 4 ժամ

Բովանդակություն

1. Անձնական կյանք
2. Ընտանեկան կյանք
3. Բնակարանի անձեռնխելիություն
4. Նամակագրության գաղտնիություն

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|------------------------------|------------------------|--------------------------|
| Անձնական կյանք | Պրեզենտացիա | 30 րոպե |
| Ընտանեկան կյանք | Պրեզենտացիա | 30 րոպե |
| Բնակարանի անձեռնխելիություն | Պրեզենտացիա | 45 րոպե |
| Նամակագրության գաղտնիություն | Պրեզենտացիա Դասախաղ | 45 րոպե 1 ժամ 30 րոպե |

Դասախոսության նյութ

Իրավունքի հասկացությունը

Միջազգային իրավունքում անձնական և ընտանեկան կյանքի, ինչպես նաև բնակարանի և նամակագրության անձեռնխելիության իրավունքը ամփոփ ու համակարգված կերպով առաջին անգամ ամրագրվել է 1948 թ. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», որի 12-րդ հոդվածի համաձայն.

«Ոչ ոք չպետք է իր անձնական ու ընտանեկան կյանքի, տան կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության ենթարկվի, ոչ էլ որևէ ոտնձգության՝ պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք ունի»:

Այս իրավունքի պաշտպանության պահանջներին ու մեխանիզմներին է վերաբերում նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը, որը ոչ միայն ամրագրում է այն, այլև նախատեսում է պետության կողմից այդ իրա-

վունքի հնարավոր սահմանափակման պայմաններն ու հիմքերը: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքների սահմանափակման պայմաններն ու հիմքերն անհրաժեշտ և անխուսափելի գործոն են առանձին անձանց իրավունքների ու ժողովրդավարական հասարակության առավել ընդհանուր շահերի միջև հավասարակշռություն հաստատելու համար:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետը միատեսակ պայմաններ է նախատեսում նաև 1-ին կետում թվարկված իրավունքների հնարավոր սահմանափակումների համար: Դրանում նշվում են, որ «չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածում ամրագրված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը երաշխավորող պաշտպանությունը, ի տարբերություն մյուս նույնաբնույթ միջազգային պայմանագրերի համապատասխան հոդվածների, կիրառվում է միայն այն դեպքերում, երբ խախտումը կատարում է պետությունը, այլ ոչ թե մասնավոր անձը:

Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքից բխում է, որ անձնական և ընտանեկան կյանքը «հարգելու» իրավունք ասելով չպետք է ենթադրել միայն պետության կողմից պասիվ վարքագծի դրսևորում, այսինքն՝ ձեռնպահ մնալ անձնական և ընտանեկան կյանքին միջամտելուց: Եվրոպական դատարանն իր վճիռներում նշում է, որ «հարգանք» ասելով պետք է հասկանալ նաև անձի՝ պետության կողմից պաշտպանվելու պոզիտիվ իրավունքը:

Պետության պոզիտիվ պարտավորություններն անհրաժեշտ են հատկապես անհատների ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության ապահովման դեպքում⁹⁹:

Այս հանգամանքն իրավաբանորեն ամրագրված է նաև 8-րդ հոդվածի 2-րդ կետում, որում ասվում է. «Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն իրավունքի իրականացմանը ...»:

Ըստ Եվրոպական դատարանի՝ պետության կողմից պաշտպանվելու իրավունքը ենթադրում է, որ ոչ միայն անհատը պետք է պաշտպանվի պետական իշխանության մարմինների կամայական միջամտությունից, այսինքն՝ պետությունները պարտավոր են զերծ մնալ նման միջամտությունից, այլև այդ բացասական պատվերից բացի, պետությունները կրում են նաև պոզիտիվ, այն է՝ անձնական և ընտանեկան կյանքի իրական հարգանքից անբաժանելի պարտավորություններ¹⁰⁰:

1. Անձնական կյանք

Եվրոպական դատարանի պրակտիկան վկայում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածում նշված «անձնական կյանք» հասկացությունն այն աստիճան տարողունակ է, որ «դատարանը հնարավոր չի համարում կամ էլ անհրաժեշտ՝ փորձելու տալ սպառիչ բնորոշում «անձնական կյանք» հասկացությանը...»:¹⁰¹

Այդուհանդերձ, ինչպես հանձնաժողովը, այնպես էլ դատարանը փորձել են բնութագրել «անձնական կյանք» հասկացությունը: Հանձնաժողովն իր որոշման մեջ նշել է. «Մասնավոր կյանքը հարգելու իրավունքը հանդիսանում է անձնական կյանքին չմիջամտելու իրավունք, իրավունք՝ ապրել այնպես, ինչպես ցանկալի է, առանց անձնական կյանքի մանրամասերը հրապարակելու ..., սակայն մասնավոր կյանքի իրավունքը դրանով չի սպառվում: Այն որոշակի առումով ներառում է նաև այլ մարդկանց հետ հարաբերություններ հաստատելու և պահպանելու իրավունքը, հատկապես մարդու անհատականության զարգացման և իրացման համար զգացմունքային բնագավառում»:

«Անձնական կյանք» հասկացության վերաբերյալ դատարանն արդեն հիշատակված Նիմիեցյան ընդդեմ Գերմանիայի գործով վճռում նշում է, որ անթույլատրելի կլինեք սահմանափակել անձնական կյանքի հասկացու-

⁹⁹ X and Y v. the Netherlands, Judgment of 26 March 1985, Costello-Roberts v. the United Kingdom, Judgment of 25 March 1983.

¹⁰⁰ Botta v. Italy, Judgment of 24 February 1998, Airey v. Ireland, Judgment of 9 October 1979. Guerra and Others v. Italy, Judgment of 19 February 1998.

¹⁰¹ Niemietz v. Germany, Judgment of 16 December 1992.

թյունը «ներքին շրջանակով», որով կարող է յուրաքանչյուրն ապրել իր սեփական անձնական կյանքով, ինչպիսին ինքն է նախընտրում, և այդտեղից բացառել ամբողջությամբ այդ շրջանակի մեջ չմտնող արտաքին աշխարհը: Անձնական կյանքի հարգանքը պետք է նաև ներառի որոշակի աստիճանով այլ անձանց հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու իրավունքը:

Դատարանը, մերժելով այն տեսակետը, որ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է խիստ առանձնացվել «արտաքին աշխարհի» հետ նրա հարաբերություններից, գտնում է, որ սկզբունքային հիմքեր չկան, որպեսզի «անձնական կյանքի» նման ըմբռնումը բացառի մասնագիտական և գործարար բնույթի գործունեությունը: Դա հատկապես պայմանավորված է նրանով, որ իրենց աշխատանքի ընթացքում մարդկանց մեծամասնությունն ունի նշանակալի, եթե ոչ առավելագույն քանակությամբ շանսեր՝ արտաքին աշխարհի հետ հարաբերություններ զարգացնելու համար:

Դատարանի կարծիքով՝ այս տեսակետը հաստատվում է այն փաստով, որ ոչ միշտ է հնարավոր ստույգ սահմանագատել, թե անձի որպիսի գործունեությունն է նրա մասնագիտական և գործարար կյանքը: Հատկապես այն դեպքում, երբ անձն ունի հումանիտար մասնագիտություն, նրա աշխատանքն այդ համատեքստում կարող է դառնալ նրա կյանքի անօտարելի մասը՝ մինչև այն աստիճան, որ անհնարին է դառնում առանձնացնել, թե ինչպիսի գործունեություն է իրականացնում նա ժամանակի տվյալ պահին¹⁰²:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանության համար կարևոր է, որպեսզի ազգային իրավակիրառող մարմինները կարողանան հստակ սահմանագատել այն փոխհարաբերությունները, որոնք կազմում են «անձնական կյանք» հասկացության բաղադրիչները:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածը սահմանագատում է «անձնական կյանք» և «ընտանեկան կյանք» հասկացությունները: Մրանով պայմանավորված՝ մարդկանց միջև գոյություն ունեցող որոշ փոխհարաբերություններ, որոնք չեն ներառվում 8-րդ հոդվածով նախատեսված և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված «ընտանեկան կյանք» հասկացության շրջանակում, Եվրոպական դատարանի կողմից դիտարկվում են որպես անձնական կյանքի բաղկացուցիչ մաս և, նրա կարծիքով, ենթակա են դատական պաշտպանության:

Եվրոպական դատարանի պրակտիկայի համաձայն՝ դրանց թվին կարելի է դասել դեռևս չամուսնացած անձանց միջև փոխհարաբերությունները,

¹⁰² Նույնը:

սեռական կյանքին առնչվող, այդ թվում՝ որդեգրված երեխաների և նրանց որդեգրողների միջև փոխհարաբերությունները և այլ հարաբերություններ:

Միայն կոնվենցիայի 8-րդ հոդվածի բովանդակությունից ելնելով, առանց հիմնվելու Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա, հնարավոր չէ պատկերացում կազմել մարդու անձնական կյանքի այն ոլորտների մասին, որոնք ենթակա են կոնվենցիոն պաշտպանության:

Անձնական կյանքի հարգմանը վերաբերող նախադեպային իրավունքը ներառում է անհատի անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հավաքումը, գրացումը, պահպանումը և օգտագործումը, ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը, անձնական տեղեկատվության մատչելիությունը, խուզարկությունը, ինչպես նաև նամակագրությունը, այդ թվում՝ հեռախոսագրույցը և այլ հարցեր:

Ցանկացած պետության պաշտոնատար անձանց կողմից առանձին անձին վերաբերող տեղեկությունների հավաքումն առանց նրա գիտության և համաձայնության պետք է դիտվի որպես անձնական կյանքի իրավունքի նկատմամբ ոտնձգություն, որը կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերով ենթակա է պաշտպանության¹⁰³:

Անձնական կյանքի հարգմանը վերաբերող նախադեպային իրավունքը ներառում է ոչ միայն պետական մարմինների կողմից անհատի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունների հավաքման, օգտագործման, ինչպես նաև դրանց հերքման հնարավորությանը վերաբերող հարցերը, այլև այն, թե արդյոք անհատը հնարավորություն ունի ստանալ և ծանոթանալ իշխանության մարմինների տրամադրության տակ եղած իր վերաբերյալ տեղեկատվությանը¹⁰⁴:

2. Ընտանեկան կյանք

Կարծում ենք, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հեղինակներն այդ փաստաթղթի 8-րդ հոդվածում նշելով, որ «յուրաքանչյուր ոք ունի [...] ընտանեկան կյանքի [...] նկատմամբ հարգանքի իրավունք», չէին կարող ենթադրել, որ տարիներ անց «ընտանեկան կյանք» հասկացությունը դատարանի կողմից բավականին լայն մեկնաբանվելու հետևանքով ձեռք կբերի այնպիսի նոր բովանդակություն, ինչպիսին այն ունի այսօր: Եվրոպական դատարանը պարտադրված էր կոնվենցիայի ընդունումից հե-

¹⁰³ Friedl v. Austria, Judgment of 31 January 1996, Amann v. Switzerland, Judgment of 16 February 2000, Leader v. Sweden, Judgment of 26 March 1987.

¹⁰⁴ Rotaru v. Romania, Judgment of 4 May 2000, Gaskin v. United Kingdom, Judgment of 7 July 1989, McGinley and Egan v. United Kingdom, Judgment of 9 June 1998, Doorson v. the Netherlands, Judgment of 26 March 1996, Z v. Finland, Judgment of 25 February 1997.

տո ընկած ժամանակահատվածում իր դիրքորոշումը ճշգրտել 8-րդ հոդվածով նախատեսված ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի նկատմամբ, քանի որ ընտանեկան կյանքի հասկացությունը, պայմանավորված հասարակական և սոցիալական կյանքի փոփոխություններով և զարգացումներով, անընդհատ ենթարկվել է որոշակի փոխակերպումների:

Ընտանեկան կյանքին վերաբերող վճիռների ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանը միշտ էլ ճկուն մոտեցում է դրսևորում ընտանեկան կյանքի մեկնաբանման հարցում: Նման վերաբերմունքը, ըստ էության, պայմանավորված է նրանով, որ ընտանեկան փոխհարաբերությունների զարգացման միտումները, ամուսնության և ամուսնալուծության հնարավորությունը, ինչպես նաև սեռերի փոփոխության հետ կապված բժշկության հաջողությունները հաճախ նոր և իրավունքի տեսակետից բավականին բարդ խնդիրներ են առաջացնում: Ներկայումս դրանց ավելացել են նաև նույն սեռի անձանց միջև ամուսնության գրանցման, ինչպես նաև նման «ընտանիքների» կողմից երեխաների որդեգրման հետ կապված իրավաբանական խնդիրները:

Գուցե նշված հանգամանքներն են պատճառը, որ դատարանը «ընտանեկան կյանքին» առնչվող հարցերի լուծման ժամանակ ղեկավարվում է ոչ թե ի սկզբանե կանխորոշված ինչ-որ կանխադրույթներով, այլ դրանք ամեն անգամ որոշում է՝ հիմնվելով այն փաստական հանգամանքների վրա, որոնք քննարկվում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Վերլուծելով դատարանի նախադեպային իրավունքում ամրագրված դիրքորոշումն այս հարցում՝ կարելի է եզրակացնել, որ դատարանը չի ձգտում սպառիչ կերպով սահմանել, թե որ կոնկրետ փոխհարաբերություններն են մտնում «ընտանեկան կյանք» հասկացության շրջանակի մեջ: Օրինակ՝ Մարքսն ընդդեմ Բելգիայի¹⁰⁵ գործով դատարանը հաստատեց, որ «ընտանեկան կյանքը» 8-րդ հոդվածի իմաստով ներառում է մոտ ազգականների միջև հարաբերությունները, օրինակ՝ մի կողմից՝ պապի ու տատի, մյուս կողմից՝ թոռների միջև փոխհարաբերությունները, քանի որ նման ազգականները կարող են կարևոր դեր խաղալ ընտանեկան կյանքում, իսկ մեկ այլ գործով տվեց միանգամայն լայն մեկնաբանություն և ընտանեկան կյանքի ճանաչման մեջ ներառեց այնպիսի հարաբերություն, ինչպիսին է փաստացի հոր և երեխայի միջև հարաբերությունը, որի մոր հետ հայրը դադարեցրել էր համատեղ բնակությունը դեռևս երեխայի ծնվելուց առաջ: Այսպես Բուգհանեմին ընդդեմ Ֆրանսիայի¹⁰⁶ գործով դատարանը, ընդունելով ֆրանսիական

¹⁰⁵ Marckx v. Belgium, Judgment of 13 June 1979.

¹⁰⁶ Boughanemi v. France, Judgment of 24 April 1996.

կառավարության կասկածն այն մասին, թե արդյոք գոյություն ունեցել է ընտանեկան կապ պարոն Բուզհանեմիի և տիկին Ս-ի միջև, զուրկ չեն հիմքերից, քանի որ նրանք իրենց երեխայի ծննդից շատ ամիսներ առաջ այլևս համատեղ չէին ապրում, նշեց, որ «ընտանեկան կյանք» հասկացության մեջ, որի վրա հիմնվում է 8-րդ հոդվածը, ընդգրկվում են նաև կապերը, որոնք գոյություն ունեն անձի և նրա երեխայի միջև, նույնիսկ եթե հայրը և մայրը համատեղ չեն բնակվում, և անկախ նրանից՝ երեխան ծնվել է ամուսնությունից թե արտամուսնական կապից:

Դատարանը, ընդունելով, որ ծնողների և երեխաների միասին լինելն ընտանեկան կյանքի հիմքն է կազմում, սահմանում է, որ հարազատ քույրերը և եղբայրները կարող են իրենց մեջ հարաբերությունների շրջանակներում ունենալ ընտանեկան կյանքի իրավունք՝ անկախ երեխաների և ծնողների միջև հարաբերությունից: Ավելին, դատարանի կարծիքով, նույնիսկ այն ժամանակ, երբ երեխան վերցվում է պետական խնամքի տակ, ապա այդ փաստով բնական ընտանեկան հարաբերությունները չեն դադարում¹⁰⁷:

Ինչպես վկայում են դատարանի կողմից քննության առնված Բերեհարն ընդդեմ Նիդեռլանդների¹⁰⁸ գործի տվյալները, այն դեպքում, երբ վիճարկվում է այն հարցը, թե ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի նկատմամբ միջամտությունն իրավագոր է եղել, թե ոչ, դատարանն արյունակցական կապը դիտում է որպես մեկնարկային նախապայման ընտանեկան կյանքի առկայությունը հաստատելու համար: Անհրաժեշտ է նշել, որ դատարանի նախադեպային իրավունքն ընդունում է, որ փոքրահասակ երեխաներն ունեն 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներ իրենց ծնողների նկատմամբ: Ընդ որում՝ դատարանը նույնիսկ չի ընդունում, որ փոքրահասակ երեխաների և նրանց ծնողների համատեղ բնակությունն անհրաժեշտ պայման է նրանց միջև «ընտանեկան կյանքի» առկայությունը հաստատելու համար: Բերեհարի գործով գանգատի հեղինակը պնդում էր, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթը՝ «անձնական և ընտանեկան կյանքի ... նկատմամբ հարգանքի իրավունքը», չի ենթադրում մշտական համատեղ բնակություն: Դատարանի կարծիքով՝ երեխայի հետ հանդիպելու հոր իրավունքի իրականացումը և նրա մասնակցությունը երեխայի կրթության ծախսերը հոգալուն հանդիսանում են բավարար ընտանեկան կյանքի փաստի հաստատման համար: Չնայած Նիդեռլանդների կառավարությունը նման եզրակացությանը համաձայն չէր, սակայն դատարանն իր վճռում նշեց. «Ամուսինների միջև օրինական և իրական ամուսնության հետևանքով առաջացած հարաբերությունը,

¹⁰⁷ Olsson v. Sweden, Judgment of 24 March 1988.

¹⁰⁸ Berrehab v. the Netherlands, Judgment of 21 June 1988.

ինչպիսին Բերեհաբ ամուսինների միջև հարաբերությունն է, պետք է դիտվի որպես «ընտանեկան կյանք»: ... «Ընտանիք» հասկացությունից, որի վրա հիմնվում է 8-րդ հոդվածը, հետևում է, որ նման միությունից ծնված երեխան իրավաբանորեն դրա մասնակիցն է: Հետևաբար, երեխայի ծնվելու պահից և այդ փաստի ուժով երեխայի և նրա ծնողների միջև ծագում են «ընտանեկան կյանք» հասկացության տակ ընկնող հարաբերություններ, նույնիսկ եթե ծնողները համատեղ չեն ապրում:

Եվրոպական դատարանն իր կողմից քննության առնված Մարքսն ընդդեմ Բելգիայի գործով սկզբունքային դիրքորոշում ձևավորեց իրավաբանորեն գոյություն չունեցող ընտանիքում ծնված երեխայի և նրա մոր փոխհարաբերության առնչությամբ: Դատարանը որոշեց, որ մոր և նրա երեխայի միջև կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով առկա է «ընտանեկան կյանք», թեկուզ երեխան ծնված լինի «ոչ օրինական» ընտանիքում, և որ 8-րդ հոդվածը տարբերություն չի դնում «օրինական» և «ոչ օրինական» երեխաներով ընտանիքների միջև:

Որպես ապացույց, որ դատարանն ամուսնությունը չի դիտում որպես ընտանեկան կյանքի իրավունքի իրականացման պարտադիր պայման, կարող է ծառայել նաև Ջոնսթոնը և այլք ընդդեմ Իռլանդիայի գործը¹⁰⁹: Այդ գործով դատարանը վճռեց, որ եթե կնոջ և տղամարդու ամուսնությունը գրանցված չէ, սակայն նրանց փոխհարաբերություններն ունեն կայուն և մշտական բնույթ, և նրանք ապրում են միասին՝ իրենց երեխաների հետ, ապա դա պետք է համարվի ընտանիք:

Դատարանը պնդում է, որ որդեգրողների և որդեգրվածների միջև հարաբերությունները ևս սկզբունքորեն պետք է պաշտպանվեն կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթներով: Միննույն ժամանակ, երեխայի և նրա որդեգրողների միջև կապերն ընտանեկան կյանք համարելու համար կարևորվում են այն հարցերը, թե արդյոք երեխան սերտ անձնական կապեր ունեցել է իր իսկական ծնողների հետ, և թե երեխան որդեգրող ընտանիքի խնամքի տակ որքան ժամանակ է գտնվում: Որքան երկար է երեխան մնացել որդեգրած ծնողների պաշտպանության ներքո, այնքան առավել հավանական է, որ դատարանը կձանաչի ընտանեկան կապերի առկայությունը:

Եվրոպական դատարանի կարծիքով՝ «ընտանեկան կյանք» հասկացության մեջ կարող են ներառվել նաև քեռու, հորեղբոր, մորաքրոջ, հորաքրոջ և նրանց եղբորդիների կամ քրոջորդիների միջև փոխհարաբերությունները, եթե գոյություն ունեն սերտ անձնական կապերի առկայության վերաբերյալ կոնկրետ ապացույցներ:

¹⁰⁹ Johnston and Others v. Ireland, Judgment of 18 December 1986.

Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ամուսինների միջև ամուսնական կապի խզման դեպքում չեն դադարում այդ կապի արդյունքում ստեղծված այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն ծնողների և նրանց երեխաների միջև: Դատարանի կարծիքով՝ ընտանեկան կյանքը չի ավարտվում նաև այն դեպքում, երբ ամուսիններն այլևս միասին չեն բնակվում¹¹⁰: Ընտանեկան կյանքը չի ավարտվում նաև այն դեպքում, երբ երեխային խնամակալության հանձնելու վերաբերյալ որոշում է ընդունվում¹¹¹: Երեխայի որդեգրման հետ կապված՝ դատարանը ընդունում է, որ բացառիկ դեպքերում որդեգրումը կամ արտաքսումը կարող են խզել ընտանեկան կապերը¹¹²:

3. Բնակարանի անձեռնմխելիությունը

Բնակարանի անձեռնմխելիության (բնակարանի նկատմամբ հարգանքի) իրավունքի արդյունավետ երաշխավորման համար կարևոր նշանակություն ունի «բնակարան» հասկացության պարզաբանումը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվող այս իրավունքի պաշտպանության վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «բնակարան» բառը պետք է ենթարկել լայն մեկնաբանության, ըստ որի բնակարան կարող են համարվել ինչպես բնակության համար նախատեսված, այնպես էլ այդպիսի նպատակային նշանակություն չունեցող ծառայողական շինությունները, որտեղ անձը կարող է իրականացնել որոշակի մասնագիտական և գործարար գործունեություն: Դիտարկվող իրավունքը չի ենթադրում, որ անձը կամ անձինք պարտադիր պետք է բնակվեն տվյալ բնակարանում¹¹³: Որոշ դեպքերում՝ առանձին անձի և հասարակության շահերը հավասարակշռելու պահանջի առկայությամբ, երբ սեփականատերը սեփականության հրատապ անհրաժեշտություն չունի, իսկ վարձակալի շահերը պաշտպանության կարիք ունեն, այս իրավունքի գործնական պաշտպանությունը չի պահանջում, որ յուրաքանչյուր ընտանիք ունենա առանձին տուն, և որ տան տերը ցանկացած դեպքում իրավունք ունենա իրեն վերադարձնելու վարձով տրված սեփականությունը¹¹⁴:

Բնակարանի հարգման իրավունքին սերտորեն առնչվում են բնակության վայրի խուզարկություն և բռնագրավում իրականացնելու հետ կապված հարցերը:

¹¹⁰ Berrehab v. the Netherlands, Judgment of 21 June 1988.

¹¹¹ Margareta and Roger Andersson v. Sweden, Judgment of 25 February 1992.

¹¹² Boughanemi v. France, Judgment of 24 April 1996.

¹¹³ The Gillow v. the United Kingdom, Judgment of 24 November 1986.

¹¹⁴ Velosa Barreto v. Portugal, Judgment of 21 November 1995.

Չնայած խուզարկությունը և ապացույցների բռնագրավումը ոսնահարում են բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքը, այդուհանդերձ, դրանք կարող են արդարացվել այնքանով, որ կվերաբերեն կոնկրետ հանցագործության վերաբերյալ գործին և կհամարվեն անհրաժեշտ: Խուզարկությունները պետք է իրականացվեն օրենքին համապատասխան, առանց կամայականությունների և չարաշահումների, ուղեկցվեն դատավարական համապատասխան երաշխիքների պահպանմամբ: Բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքը պետական մարմինների միջամտությունից կարելի է երաշխավորել այն ժամանակ, երբ օրենսդրությամբ նախատեսված են սահմանափակումների բավականին խիստ սահմաններ, և միջամտությունը համահունչ է այն նպատակներին, որոնք հետապնդում են խուզարկություն և բռնագրավում իրականացնող մարմինները:

- Խուզարկության իրավաչափության տեսակետից կարևոր է, թե խուզարկությունը կանոնակարգող օրենքը պարունակում է արդյոք հետևյալ դրույթները, թե ոչ¹¹⁵.
- Խուզարկություններ կարող են անցկացվել բնակարաններում և անշարժ այլ օբյեկտներում միայն այն դեպքում, եթե հիմնավոր կասկած կա, որ այնտեղ ինչ-որ բան է թաքնված, ինչպես առարկաներ, այնպես էլ այն տեսակի արժեքներ, որոնք պետք է բռնագրավվեն, կամ որ կարող են ճանաչվել որպես հանցագործության կատարման ապացույցներ:
- Խուզարկություն չի կարող անցկացվել կիրակի օրը, հասարակական տոների ժամանակ կամ գիշերը, «բացառությամբ հատուկ դեպքերի կամ էլ վտանգի սպառնալիքի դեպքում»:
- Խուզարկության սկզբում այն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են փաստաթղթերով հաստատել իրենց լիազորությունները և իրազեկել շինությունն զբաղեցնող անձին խուզարկության նպատակների մասին, ինչպես նաև ապահովել այդ անձի, նրա մտերիմների կամ այլ ներկայացուցիչների ներկայությունը խուզարկությունն իրականացնելիս:
- Սկզբունքորեն պարտադիր է նաև իշխանության պաշտոնատար անձանց ներկայությունը՝ երաշխավորելու համար, որ խուզարկությունն անցկացվում է առաջադրված խնդրի ստույգ համապատասխանությամբ:
- Խուզարկությունն անցկացնելու մասին արձանագրությունը պետք է ձևակերպվի անմիջապես՝ խուզարկությանը մասնակցած անձանց

¹¹⁵ Camenzind v. Switzerland, Judgment of 16 December 1997.

ներկայությամբ: Քաղաքացիների խնդրանքով նրանց պետք է տրամադրվի խուզարկության անցկացման իրավունք սովոր փաստաթղթերի պատճենները և խուզարկություն անցկացնելու արձանագրությունը:

- Փաստաթղթերի բռնագրավում իրականացնելու համար պետք է լինեն հատուկ սահմանափակումներ:
- Կասկածյալն իրավունք ունի, որ նրա փաստաբանը մասնակցի խուզարկությանը ցանկացած հանգամանքում:
- Ցանկացած անձ, որին վնաս են հասցրել «հետաքննության միջոցները», կարող է գանգատվել դատարան:
- «Կասկածյալը», որի կարծիքով ինքն անհիմն կերպով է քննության կանչվել, կարող է պահանջել համապատասխան փոխհատուցում՝ կրած վնասի դիմաց:

Որպես կանոն, խուզարկությունը պետք է անցկացվի դատարանի որոշման հիման վրա: Այդ կանոնից պետության օրենսդրությամբ նախատեսված շեղումները կարող են կոնվենցիայի 8-րդ հոդվածի հետ համատեղելի լինել միայն այն դեպքում, եթե նման իրավիճակը կարգավորող օրենքները, որոնք սահմանում են խուզարկության անցկացման կարգը, նախատեսում են անձի պաշտպանության բավարար երաշխիքներ:

Ներկա պայմաններում օրյեկտիվ հանգամանքների պարտադրանքով խուզարկության ու բռնագրավման գործողություններին ներկայացվող պահանջները որոշակիորեն կերպափոխված են ընկալվում ահաբեկչական հանցագործությունների գործերով՝ հաշվի առնելով դրանց հատուկ բնույթով ու վտանգավորությամբ պայմանավորված արտակարգ միջոցների անհրաժեշտությունը, որոնց նպատակը 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքների, ազատությունների և շահերի գործուն ու համարժեք պաշտպանությունն է¹¹⁶:

4. Նամակագրության գաղտնիություն

Կոնվենցիայի 8-րդ հոդվածում ամրագրված է անձի նամակագրության պաշտպանության իրավունքը, որը նրա՝ մյուսների հետ առանց որևէ միջամտության և գրաքննության հաղորդակցության մեջ մտնելն է: Այս իրավունքին առնչվող բազմաթիվ գործեր է քննել Եվրոպական դատարանը: Դատարանն իր վճիռներում պարզաբանել է նամակագրության ինչպես բովանդակության, այնպես էլ ձևին առնչվող հարցեր: Ըստ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի՝ նամակագրության պաշտպանությունը վերա-

¹¹⁶ Murray v. the United Kingdom, Judgment of 28 October 1994.

բերում է հաղորդակցության նշանակությանը և մեթոդներին, այլ ոչ թե բովանդակությանը: Հետևաբար, եթե խախտվել է անձի նամակագրության գաղտնիությունը, ապա անհրաժեշտություն չկա քննության առնել հարցն ըստ էության, այսինքն՝ արդյո՞ք տեղի է ունեցել անձնական կյանքի խախտում, թե՛ ոչ¹¹⁷:

Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «նամակագրություն» հասկացության մեջ, բացի գրավոր հաղորդակցվելու ավանդական ձևերից, ինչպիսիք են փոստը, հեռագիրը, հեռախոսագրույցը, ներառվում են նաև կապի ժամանակակից մյուս ձևերը՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստը: Քլաբը և այլք ընդդեմ Գերմանիայի¹¹⁸ գործով վճռում դատարանը, վերլուծելով հեռախոսագրույցների գաղտնի լուսմն ու ձայնագրումը, նշում է, որ «թեև հեռախոսագրույցները կոնկրետ նշված չեն 8-րդ հոդվածի 1-ին կետում, դատարանը, ինչպես և Հանձնաժողովը, գտնում է, որ նման գրույցները ներառվում են այդ հոդվածում բովանդակվող «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մեջ»:

Եվրոպական դատարանը նման բնույթի կարծիք է հայտնել նաև այլ գործերի քննության ժամանակ¹¹⁹:

Հարկ է նշել, որ այս իրավունքի պաշտպանությունը երաշխավորվում է ոչ միայն բնակելի տնից հեռախոսագրույցներ վարելու, այլև ծառայողական կամ աշխատանքի վայրի հեռախոսով հեռախոսագրույցների դեպքում¹²⁰:

Դիտարկվող իրավունքի միջամտություն է համարվում նաև մասնավոր հեռախոսագրույցների գաղտնի լուսմը, անկախ դրանց բովանդակությունից, նույնիսկ եթե դրանք առնչվում են հասարակական շահին¹²¹:

Այդուհանդերձ, ահաբեկչական հանցագործությունների հետ կապված իրավիճակներում այս իրավունքի սահմանափակման համար ավելի լայն հնարավորություններ են տրվում պետությանը՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքների, ազատությունների և շահերի գործուն ու համարժեք պաշտպանության նպատակով¹²²:

Թեև բանտարկյալների անձնական կյանքին ու նամակագրության իրավունքին միջամտությունը նույն կերպ երաշխավորվում է, սակայն որոշակի դեպքերում՝ ազատագրված վայրերում անկարգությունների և հանցագործությունների կանխման նպատակով, բանտարկյալների նամակագրության

¹¹⁷ A. v. France, Judgment of 23 November 1993.

¹¹⁸ Klass and Others v. Germany, Judgment of 6 September 1978.

¹¹⁹ Kruslin v. France, Judgment of 24 April 1990, Huving v. France, Judgment of 24 April 1990.

¹²⁰ Halford v. United Kingdom, Judgment of 25 June 1997.

¹²¹ A. v. France, Judgment of 23 November 1993, Halford v. United Kingdom, Judgment of 25 June 1997.

¹²² Klass and Others v. Germany, Judgment of 6 September 1978, 42, 48 " 59 կետեր:

իրավունքի ավելի խիստ սահմանափակումը նույնպես կարող է արդարացված համարվել: Հատուկ պաշտպանության է ենթակա բանտարկյալի և փաստաբանի միջև նամակագրության գաղտնիությունը, որին միջամտությունը թույլատրվում է միայն բանտի անվտանգության ռեժիմի համար սպառնալիք պարունակելու կամ այլ պատճառներով հանցավոր բնույթ կրելու վերաբերյալ հիմնավոր կասկածների դեպքում: Դիտարկվող իրավունքի սահմանափակում է նաև բանտարկյալի նամակագրության արգելքը կամ դրան խոչընդոտելը¹²³:

Անձի անձեռնմխելիությունը

Անձի անձեռնմխելիությունը դիտարկվող իրավունքի շրջանակներում հանգում է նրա բարոյական և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությանը: Այս ոլորտին են վերաբերում պետության պոզիտիվ պարտավորությունները, որոնք վերաբերում են այնպիսի իրավական և ընթացակարգային պայմանների ապահովմանը, որոնց առկայությամբ կերաշխավորվեն անհատների ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը:

Թույլատրելի հայեցողության սահմանները

Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, սահմանելով անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, նախատեսում է նաև դրա սահմանափակման հնարավորությունը: Հոդվածի 2-րդ կետը որպես սահմանափակման գլխավոր պայման նշում է, որ դա պետք է կատարվի օրենքի հիման վրա, այնուհետև թվարկում է այն հիմքերը կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ նպատակները, հանուն որոնց կոնվենցիայի մասնակիցները կարող են ընդունել 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները սահմանափակող օրենք:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ իրավունքների սահմանափակումը կարող է տեղի ունենալ, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ակնհայտ է, որ կոնվենցիան նախատեսում է կոնկրետ նպատակներ, որոնց առկայության դեպքում միայն կարող է իրավունքի այս կամ այն

¹²³ Golder v. the United Kingdom, Judgment of 21 February, 1975, Labita v. Italy, Judgment of 6 April 2000, Compbell v. the United Kingdom, Judgment of 25 March 1992.

խախտումը ճանաչվել կոնվենցիայի հետ համատեղելի և պետությանն ազատել պատասխանատվությունից:

Հարկ է նկատել, որ առանձին անձանց և այս կամ այն պետության ներսում գոյություն ունեցող հասարակական շահերի միջև հավասարակշռության պահպանության հիմնահարցի համար կարևոր նշանակություն ունի այն, թե 8-րդ հոդվածում նշված սահմանափակումների հիմքերը պետք է դիտել որպես սպառիչ, թե պետությունները կարող են տարբեր, իրենց համար թեկուզև շատ կարևոր շարժառիթներից ելնելով՝ կիրառել 8-րդ հոդվածում չնախատեսված մեկ այլ հիմքով սահմանափակում:

Մի շարք պետություններ փորձեցին շեղվել 8-րդ հոդվածի պահանջներից և նախատեսել նաև այլ «ներքին սահմանափակումներ», հատկապես կապված օրինական կարգով ազատագրված անձանց իրավունքների հետ: Սակայն դատարանը նման մոտեցումը համարեց անընդունելի և հայտարարեց, որ չնայած պետությունը անձի իրավունքները և ազատությունները սահմանափակելիս կարող է քննության առնել նրա՝ որոշակի խմբի մեջ մտնելու փաստը, այդուհանդերձ, նա պետք է գործի օրինական կարգով՝ կոնվենցիայի համապատասխան հոդվածների սահմանափակող դրույթների շրջանակում¹²⁴:

Պետությունները 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանափակման հիմքերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս օգտվում են որոշակի ազատությունից, որը հայտնի է «հայեցողության սահման» ձևակերպմամբ: Այդ սկզբունքն առաջին անգամ սահմանվել է Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում¹²⁵: Սույն գործը վերաբերում էր արտահայտվելու ազատության իրավունքին, սակայն դատարանի վճիռն այդ գործի կապակցությամբ ներկայումս հավասարապես նշանակություն ունի նաև 8-րդ հոդվածին առնչվող գործերի քննության դեպքում: Նշված գործով վճռում ընդգծվում է, որ «տարբեր ժամանակ և տարբեր վայրերում բարոյական հիմքերին ներկայացվող պահանջների նկատմամբ հայացքները չեն համարվում միատեսակ, հատկապես մեր դարաշրջանում», և որ «պետական իշխանություններն իրենց երկրների իրական կյանքի հետ մշտական և անմիջական կապի շնորհիվ սկզբունքորեն գտնվում են ավելի լավ վիճակում, քան միջազգային դատավորները, երբ արտահայտում են «սահմանափակման», «անհրաժեշտության» կամ «պատժային սանկցիայի» վերաբերյալ պահանջների կոնկրետ բովանդակության կապակցությամբ իրենց կարծիքը: Անհրաժեշտ է, որպեսզի երկրի ազգային իշխանությունները տան տվյալ համա-

¹²⁴ Golder v. the United Kingdom, Judgment of 21 February, 1975.

¹²⁵ Handyside v. the United Kingdom, Judgment of 7 December 1976.

տեքստում «անհրաժեշտ» հասկացության մեջ ենթադրվող սոցիալական ներգործության առաջին գնահատականը: Դատարանի կարծիքով՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետը հայեցողության սահմանների մասին հարցը որոշակի առումով թողնում է բաց: Այդ սահմանները որոշվում են ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատավորների կողմից, որոնք դիմում են համապատասխան օրենքների մեկնաբանման և հնարավոր կիրառման պարզաբանման համար»:

Նշվածով հանդերձ՝ դատարանը գտնում է, որ կոնվենցիայի մասնակից պետություններն օժտված չեն մեկնաբանման անսահմանափակ հնարավորություններով, և պնդում է, որ հենց ինքը՝ դատարանն է հանդիսանում պետությունների կողմից կոնվենցիայի կատարման պատասխանատուն:

Դատարանի կարծիքով՝ կոնվենցիայի 8-րդ հոդվածի առնչությամբ պետությունների «ներքին հայեցողության սահմաները» պետք է զուգակցվեն Եվրոպական դատական հսկողության հետ:

Դատարանի կարծիքով՝ իշխանության իրավասու ազգային մարմիններին տրված հայեցողության սահմանները կարող են փոփոխվել՝ կապված քննության առարկայի և դրա հիմքերի համապատասխան հանգամանքների փոփոխության հետ: Դատարանը նաև որոշեց, որ հայեցողության սահմանների որոշման ժամանակ կարող է առաջանալ երկու բնույթի խնդիրներ: Մի դեպքում, եթե առկա է, որ քննության առարկայի հետ կապված տարբեր պետությունների ներսում գոյություն ունեցող պրակտիկայի մեջ կա մեծ ընդհանրություն, ապա բավականին դժվար կլինի հիմնավորել նման պրակտիկայից շեղումը: Մեկ այլ դեպքում, եթե պետությունների պրակտիկան՝ կապված քննության առարկայի հետ, առանձնապես տարածված և մեծ ընդհանրություն չունի, ապա պետություններին տրվող հայեցողության սահմանները կլինեն բավականին լայն¹²⁶:

Հայեցողության սահմանների որոշման համար էական նշանակություն ունեն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված պայմանների և նպատակների ընկալումները, որոնց ձևակերպումները պարունակվում են դատարանի բազմաթիվ վճիռներում կատարված մեկնաբանություններում:

Դրանցից հատկապես կարելի է առանձնացնել «օրենք» բառի և «օրենքով նախատեսված» ձևակերպման մեկնաբանությունը¹²⁷:

¹²⁶ Olsson v. Sweden, Judgment of 24 March 1988.

¹²⁷ Sunday Times v. the United Kingdom, Judgment of 26 April 1979, Kruslin v. France, Judgment of 24 April 1990.

Ինտերակտիվ խաղ

Դատախաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դատախաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դատախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դատախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն: Այնուհետև դատախոսը ներկայացնում է իրական գործը¹²⁸ և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկմանը հատկացվում է 15 րոպե:

Գործի փաստեր

Ինքնասպանության անհաջող փորձ կատարելուց հետո, գտնվելով ճնշված վիճակում, անձը անցել է փողոցով: Տեղական հեռուստատեսության տեսանկարահանող սարքերից մեկը տեսագրել է անձին, և այդ պահը եթեր է արձակվել տեղական հեռուստատեսությամբ՝ առանց անձի ինքնությունը թաքցնելու, որի հետևանքով նրան հեռուստատեսությամբ տեսել և ճանաչել են նրա ընտանիքի անդամներն ու ընկերները:

Ունկնդիրներին առաջարկվում է տվյալ փաստերի հիմքով պատասխանել հետևյալ հարցին. «Արդյո՞ք առկա է անձնական կյանքը հարգելու և անձնական տեղեկությունների գաղտնիության իրավունքի խախտում»:

¹²⁸ Peck v UK, Application no. 44647/98, Judgment 28.01.2003.

Մոդուլ 7: Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Տևողությունը՝ 2 ժամ 45 րոպե

Բովանդակություն

1. Կրոնը կամ համոզմունքը փոխելու և դրանց մասին բաց՝ հրապարակայնորեն արտահայտվելու իրավունքը
2. Զինվորական ծառայությամբ պայմանավորված ազատության իրականացման առանձնահատկություններ
3. Այլընտրանքային ծառայություն

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|--|----------------------|---------------|
| Կրոնը կամ համոզմունքը փոխելու և դրանց մասին բաց՝ հրապարակայնորեն արտահայտվելու իրավունքը | Պրեզենտացիա | 30 րոպե |
| Զինվորական ծառայությամբ պայմանավորված ազատության իրականացման առանձնահատկություններ | Պրեզենտացիա | 45 րոպե |
| Այլընտրանքային ծառայություն | Պրեզենտացիա, Դատախաղ | 1 ժամ 30 րոպե |

Դասախոսության նյութ

1. Իրավունքի հասկացությունը

Մարդու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը համարվում է ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից մեկը: Այս իրավունքը սերտ առնչություններ ունի ինչպես արտահայտվելու ազատության, այնպես էլ հավաքների և միավորումների ազատության հետ կապված, և յուրաքանչյուր դեպքում այս ազատությունների հարցը քննարկելիս դրանք պետք է դիտարկել նաև այդ ազատությունների լույսով:

1.1. Կրոնը կամ համոզմունքը փոխելու և դրանց մասին բաց՝ հրապարակայնորեն արտահայտվելու իրավունքը

Կրոնի ազատության իրավունքը բաղկացած է երկու հիմնական տարրերից. առաջինը անձի իրավունքն է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու, և երկրորդը՝ դրանց մասին բաց արտահայտվելու իրավունքը: Կրոնի կամ համոզմունքի մասին բաց արտահայտվելու իրավունքը պաշտպանվելու համար անձը պետք է հիմնավորի, որ ինքն իրոք որևէ կրոնի հետևորդ է, և հավատքի, համոզմունքների մասին բաց արտահայտվելը նշված կրոնի անբաժանելի մասն է: Այն ներառում է պաշտամունքները, ուսմունքը, փորձը և դիտարկումը, ինչը ներառում է նաև խոսքով ու գործով կրոնի մասին վկայելը և այլ անձանց համոզելու իրավունքը: Կրոնի մասին բաց արտահայտվելը ներառում է այդպիսի արտահայտումը այլ անձանց հետ շփման ժամանակ՝ ինչպես հանրային, այնպես էլ տվյալ կրոնի հետևորդների հետ նեղ շրջանակներում:

Այս իրավունքը պաշտպանում է անձին՝ ունենալու կամ չունենալու կրոնական համոզմունքներ, ապրելու կրոնական համոզմունքների փորձով կամ առանց դրանց: Բայց այս իրավունքը, որը բավականին լայն է մեկնաբանում կրոնի բնույթը, միաժամանակ սահմանափակ է մեկնաբանում կրոնի մասին բաց արտահայտվելու ազատությունը, որը ներկայացվում է որպես տվյալ կրոնի համոզմունքներից բխող անհրաժեշտություն կամ պահանջ: Յուրաքանչյուր այդպիսի գործողություն պետք է սերտորեն կապված լինի տվյալ կրոնի կամ համոզմունքների հետ, ուստի ամեն արարք չէ, որ պաշտպանվում է կրոնով կամ համոզմունքով պահանջված լինելու փաստարկով:

Ընդհանուր առմամբ, մտքի, խղճի և կրոնի ազատությունը չի կարող համարվել սահմանափակված, երբ դա հետևանք է օրենքի կիրառման, իսկ անձը դիմադրում է օրենքի կիրառմանը՝ իր կրոնի կամ համոզմունքների պահանջներից ելնելով: Հարկ է նշել, որ նրանք, ովքեր բաց արտահայտվում են իրենց կրոնի կամ համոզմունքների մասին, պետք է ընդունեն, որ չեն կարող զերծ մնալ քննադատությունից և որ պետք է հանդուրժեն և ընդունեն, որ այլ անձինք կարող են ժխտել իրենց կրոնը, համոզմունքները, անգամ տարածել կրոն ու համոզմունքներ, որոնք հակոտնյա են իրենց կրոնին և համոզմունքներին:

Բոլոր դեպքերում պետությունը պետք ապահովի կրոնական բազմակարծությունը, ինչը նշանակում է, որ կրոնական համայնքները պետք է ինքնուրույն գոյություն ունենալու և գործելու իրավունք ունենան: Միաժամանակ պետությունը պետք է ձեռնպահ մնա կրոնական կազմակերպության գործերին միջամտելուց, ինչպես նաև ապահովի, որպեսզի տարբեր կրոնական կազմակերպություններ կամ հարանվանություններ հանդուրժեն մի-

մյանց: Ավելին՝ խղճի և կրոնի ազատությունը բացառում է, որ պետությունը գնահատի կրոնական հավատալիքների կամ դրանց արտահայտման ձևի իրավաչափությունը: Այն դեպքում, երբ կրոնական կազմակերպությունը թույլատրելի նախնական համաձայնություն կամ թույլտվություն է պահանջում, նման ընթացակարգը կարող է խախտել կրոնական համայնքի կրոնի ազատությունը:

Տարբեր դեպքերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է անձի՝ կրոնի ազատության իրավունքի խախտումներ: Այսպես՝ Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի¹²⁹ գործով դատարանը որոշեց, որ տեղի է ունեցել Կիպրոսի հույն բնակիչների կրոնի ազատության իրավունքի խախտում, քանի որ թուրքական իշխանությունները սահմանափակել են հույների տեղաշարժման ազատությունը և չեն թույլատրել, որպեսզի նրանք իրականացնեն իրենց կրոնական համոզմունքներից բխող գործողություն՝ այցելելն պաշտամունքի վայրեր, որոնք գտնվում են իրենց բնակավայրերից դուրս:

Պոլտորատսկին ընդդեմ Ուկրաինայի¹³⁰ գործով նույնպես դատարանը խղճի և կրոնի ազատության իրավունքի խախտում ճանաչեց այն փաստը, որ մահապատժի դատապարտված անձին չի թույլատրվել հոգևորականի այցելություն, քանի որ նման արգելքը սահմանված է եղել արդարադատության նախարարության ներքին, չիրապարակված կանոնակարգով, այլ ոչ թե օրենքով:

Դահլաբն ընդդեմ Շվեյցարիայի¹³¹ գործով կրտսեր դպրոցի ուսուցչի կողմից մահմեդական գլխաշոր կրելու արգելքը գնահատվել է որպես համաչափ սահմանափակում անձի խղճի և կրոնի ազատության իրականացման նկատմամբ: Ներպետական դատարանները այդ արգելքը գնահատել են արդարացված՝ դպրոցներում կրոնական չեզոքության և աշակերտների կրոնական համոզմունքներին չմիջամտելու անհրաժեշտությամբ:

Խղճի և կրոնի ազատության իրավունքի պաշտպանությունն չեն կարող պահանջել շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպությունները, կազմակերպությունների միությունները, բայց եկեղեցիները կամ կրոնական կազմակերպությունները կարող են դա պահանջել իրենց հետևորդների անունից:

¹²⁹ Cyprus v Turkey, No 25781/94, 10.5.01, 2002 35 EHRR 30.

¹³⁰ Poltoratskiy v Ukraine, No 38812/97, 29.4.03, para 128.

¹³¹ Dahlab v Switzerland, No 42393/98, dec. 15.02.01.

2. Չինվորական ծառայությանը պայմանավորված ազատության իրականացման առանձնահատկություններ

Խղճի և կրոնի ազատությունը չի կարող լայնորեն մեկնաբանվել որպես պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու արդարացում՝ խղճի ու կրոնական հավատալիքներից ելնելով:

Չինվորական ծառայության անցնելու մասին ՀՀ օրենքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք առնչվում են այս հարցին: Այսպես օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ զինծառայողն իրավունք չունի անդամակցել որևէ կրոնական միության, իր պաշտոնական դիրքն օգտագործել ի շահ կրոնական կազմակերպության և դրա գործունեության օգտին քարոզչություն իրականացնել, ինչպես նաև կազմակերպել կրոնական միավորումներ:

Միևնույն ժամանակ, այս արգելքները անձին չեն ստիպում փոխել իր կրոնը կամ համոզմունքները կամ հրաժարվել իր պաշտամունքն իրականացնելուց, այլ սահմանում են զինվորական ծառայությանը պայմանավորված պարտավորությունների իրականացման գերակայությունը, ըստ որի կրոնը, համոզմունքը կամ դրանց ծիսական պաշտամունքային բաղադրիչների իրականացումը չպետք է խոչընդոտեն զինվորական ծառայությանը:

3. Այլընտրանքային ծառայություն

Այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ և իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

Կրոնական կամ այլ համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը մարդու այն իրավունքներից է, որոնք ճանաչվել են վերջին 50 տարվա ընթացքում, մեծ մասամբ՝ մտքի, խղճի և կրոնի ազատության պաշտպանության մասին պայմանագրային պարտավորությունների մեկնաբանման միջոցով: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն թիվ 22 Ընդհանուր մեկնաբանության մեջ նշել է.

«Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ դաշնագիրն ուղղակիորեն չի նախատեսում համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, սակայն կոմիտեն կարծում է, որ այդ իրավունքը բխում է 18-րդ հոդվածից, քանի որ մահացու ուժ կիրառելու հետ կապված պարտականությունները կարող են լուրջ հակասության մեջ լինել խղճի ազատության և կրոնը կամ համոզմունքը դավանելու իրավունքի հետ¹³²:

¹³² <http://www.osce.org/hy/yerevan/78303>.

2006 թ. Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը հաստատել է կրոնական և այլ համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի՝ որպես «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված մտքի, խղճի կամ կրոնի ազատության իրավունքի էական տարրերից մեկի կարևորությունը»: Խորհրդարանական վեհաժողովը նախարարների խորհրդին խնդրել է քննարկել իր այն առաջարկը, որով կրոնական և այլ համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը նախատեսվում է ամրագրել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում՝ դրա 4-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետը և 9-րդ հոդվածը լրացնող արձանագրություն ընդունելու միջոցով:

2003 թ. ՀՀ-ում ներդրվեց նաև այլընտրանքային զինվորական ծառայության համակարգը՝ հնարավորություն տալով կրոնական և այլ համոզմունքների հիման վրա պարտադիր զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվող անձանց՝ իրականացնել զինվորականի հետ չկապված ծառայություն: Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ այն փոխարինում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը, կապված չէ զենք կրելու, պահպանելու և օգտագործելու հետ և իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է այլընտրանքային զինվորական ծառայություն¹³³ և այլընտրանքային աշխատանքային ծառայություն¹³⁴: Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանված է 36 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը՝ 42 ամիս¹³⁵:

Մասնավորապես՝ այլընտրանքային ծառայություն անցնելու համար գորակոչիկը պարտավոր է մինչև հերթական գորակոչը (աշնանային գորակոչի դեպքում՝ մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ գարնանային գորակոչի դեպքում՝ մինչև մարտի 1-ը) դիմել իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ նշելով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու պատճառները, ինչպես նաև իր նախընտրած ծառա-

¹³³ Ենթադրում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն:

¹³⁴ Ենթադրում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

¹³⁵ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

յության տեսակը¹³⁶: Զինվորական կոմիսարատի կողմից գորակոչիկի դիմումը ներկայացվում է տեղական գորակոչային հանձնաժողովին, որն էլ նախապատրաստում և հանրապետական գորակոչային հանձնաժողովին է ներկայացնում քաղաքացու վերաբերյալ նյութերը: Այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ քաղաքացու դիմումը քննարկվում է հանրապետական գորակոչային հանձնաժողովի առանձին նիստում, որին համապատասխան քաղաքացու ներկայությունը պարտադիր է:

Պարտադիր զինվորական ծառայությունը այլընտրանքային ծառայությամբ փոխարինելը հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից մերժվում է, եթե դիմում ներկայացրած քաղաքացին առանց հարգելի պատճառների կրկին չի ներկայանում հանրապետական հանձնաժողովի նիստին, ինչպես նաև եթե ներկայացրած դիմումում առկա են կեղծ տեղեկություններ¹³⁷: Այն դեպքերում, երբ դիմում ներկայացրած քաղաքացին ենթակա չէ գորակոչի կամ ունի պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք, այլընտրանքային ծառայության մասին դիմումը թողնվում է առանց քննության, և հանձնաժողովի կողմից կայացվում է համապատասխանաբար զինվորական ծառայությունից ազատելու կամ տարկետում տրամադրելու վերաբերյալ որոշում¹³⁸:

Ամրագրումը միջազգային և ներպետական իրավական նորմերում

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք ունի. այդ իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքը կամ համոզմունքները մենակ կամ ուրիշների հետ մեկտեղ, հրապարակավ կամ գաղտնի քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի և ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն»:

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

¹³⁶ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 7:

¹³⁷ Նույն տեղում, հոդված 9:

¹³⁸ Նույն տեղում, հոդված 10:

2. Մեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների: Հարկ է նշել, որ քննարկվող ազատության սահմանափակման դեպքում պետական անվտանգությունը որպես սահմանափակման նպատակ նախատեսված չէ, մինչդեռ այն նախատեսված է օրինակ հավաքների և միավորումների ազատության սահմանափակման պարագայում:

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար»:

Ինտերակտիվ խաղ

Դատախաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դատախաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի 10 րոպեի ընթացքում պետք է բանավոր ներկայացնի իր դիրքորոշումը: Դատախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դատախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն: Այնուհետև դատախոսը ներկայացնում է իրական գործը¹³⁹ և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկմանը հատկացվում է 15 րոպե ժամանակ:

¹³⁹ Peck v UK, Application no. 44647/98, Judgment 28.01.2003.

Գործի փաստեր

Կրոնական համոզմունքներով սիկկա անձը դիմել է դատարան՝ խնդրելով ճանաչել կրոնի ազատության իր իրավունքի խախտումը այն հիմնավորմամբ, որ իրենից պահանջում են պաշտոնական լուսանկարի համար հանել իր գլխարկը՝ տյուրբանը, որն ինքը մերժել է: Որպես իր ասածի հավաստում՝ սիկկը դատարանին ներկայացրել է իր վարորդական իրավունքի վկայականը, որտեղ իր դիմանկարը տյուրբանով է, և որն ինքը օգտագործել է ավելի քան քսան տարի:

Ունկնդիրներին առաջարկվում է տվյալ փաստերի հիմքով պատասխանել հետևյալ հարցին. «Արդյո՞ք առկա է կրոնի ազատության իրավունքի խախտում»:

Այնուհետև դասախոսը ներկայացնում է Սիկկա Մանն ընդդեմ Ֆրանսիայի¹⁴⁰ գործը, որի ընդունելիությունը մերժվել է:

¹⁴⁰ Mann Singh v France, 27.11.2008.

Մոդուլ 8: Արտահայտվելու ազատություն

Տևողությունը՝ 5 ժամ 30 րոպե

Բովանդակություն

1. Արտահայտվելու ազատության իրավունքի հասկացությունը
2. Արտահայտվելու ազատության փոխկապվածությունը մտքի, խղճի և կրոնի ազատության հետ. սահմանափակման պայմաններ
3. Զինվորական ծառայությամբ պայմանավորված սահմանափակումները

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|---|----------------------------|------------------|
| Արտահայտվելու ազատության իրավունքի հասկացությունը | Պրեզենտացիա | 30 րոպե |
| Արտահայտվելու ազատության փոխկապվածությունը մտքի, խղճի և կրոնի ազատության հետ. սահմանափակման պայմաններ | Պրեզենտացիա | 1 ժամ 30 րոպե |
| Զինվորական ծառայությամբ պայմանավորված սահմանափակումները | Պրեզենտացիա Դերային խաղ | 30 րոպե 3 ժամ |

Դասախոսության նյութ

1. Արտահայտվելու ազատության իրավունքի հասկացությունը

Առանց հանրային մարմինների կողմից սահմանափակումների կարծիք ունենալու, հայտնելու, փոխանակելու իրավունքը:

Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք, ինչը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ ու գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը: Պետությունը, ի դեմս իր հանրային մարմինների, առանցքային դեր ունի այս ազատության ապահովման գործում, քանի որ պետք է չմիջամտի այդ ազատության իրականացմանը:

Արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից է՝ հաշվի առնելով այն կենսական դերը, որ հանրային

նշանակության խնդիրների բացահայտման, քննարկման և լուծման գործում ունի իրենց գաղափարներն ու կարծիքներ տարածելու և ստանալու յուրաքանչյուրի ազատությունը: Արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է կարծիքի հրապարակային փոխանակումը: Այն պաշտպանում է նաև կարծիք ունենալու և տեղեկություններ ու գաղափարներ ստանալու և տարածելու իրավունքը: Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը «արտահայտություն» հասկացության բավականին լայն սահմանում է նախատեսել: Ըստ այդմ այն ընդգրկում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքը, պատկերները, ինչպես նաև ցույցերը, որոնք նպատակաուղղված են քաղաքական խոսքի փոխանցմանը¹⁴¹:

2. Արտահայտվելու ազատության փոխկապվածությունը մտքի, խղճի և կրոնի ազատության հետ. սահմանափակման պայմաններ

Արտահայտվելու ազատությունը սերտ առնչություն ունի ինչպես մտքի, խղճի և կրոնի ազատության, այնպես էլ հավաքների և միավորման ազատության հետ: Այս իրավունքների սահմանափակումների հետ կապված պետության հայեցողությունը խիստ նեղ ու սահմանափակ է, և յուրաքանչյուր դեպքում ազատության սահմանափակումը պետք է լինի համոզիչ կերպով հիմնավորված: Այդուհանդերձ, պետության հայեցողության սահմանների վերաբերյալ առկա է նաև տարբերակված մոտեցում՝ պայմանավորված այն ոլորտով, որին վերաբերում է արտահայտվելու ազատությունը: Այսպես՝ պետությունը հայեցողության լայն շրջանակ ունի սահմանափակումների այն դեպքում, երբ հարցը վերաբերում է բարոյականությանը և առևտրային արտահայտման ազատությանը, սակայն հայեցողության շրջանակները խիստ նեղ են, երբ հարցը վերաբերում է քաղաքական հարցերում արտահայտվելու ազատությանը: Ընդհանուր առմամբ, արտահայտվելու ազատության պաշտպանության տիրույթում են արտահայտվելու այն դրսևորումները, որոնք ուղղված են ինքնարտահայտվելուն, բայց ունեն նաև որոշակի ազդեցիվ, շոկ կամ անհանգստություն առաջացնող երանգներ: Դա հիմնավորվում է ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության մեծ անհրաժեշտությամբ: Միաժամանակ արտահայտվելու որոշակի դրսևորումներ, ինչպիսիք կարող են լինել ատելության և ռասիստական արտահայտությունները, կարող են չպաշտպանվել արտահայտվելու ազատությամբ:

¹⁴¹ Արտահայտվելու ազատություն, Մեմինար, Գևին Միլլեր, թագավորական Խորհրդական, «Doughty Street Chambers» ընկերություն, Երևան, 2011:

Արտահայտվելու ազատության ցանկացած միջամտություն պետք է բավարարի հետևյալ երեք պայմանների պահանջը.

- Արտահայտվելու ազատության ցանկացած միջամտության պետք է նախատեսված լինի օրենքով
- Միջամտությունը պետք է նպատակ հետապնդի պաշտպանել հետևյալ արժեքներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ պետական անվտանգություն, տարածքային ամբողջականություն, հանրային անվտանգություն, անկարգությունների կամ հանցագործության կատարման կանխում, առողջության, այլ անձանց հեղինակության և իրավունքների պաշտպանություն, կանխել գաղտնիք համարվող տեղեկության տարածումը, դատական իշխանության անկախությունն ու օբյեկտիվությունը ապահովելը
- Միջամտությունը ժողովրդավարական հասարակության համար պետք է անհրաժեշտ լինի

Վերը նշված երեք պայմանների առկայությամբ արտահայտվելու ազատության միջամտության դեպքերը կորակվեն որպես օրինական: Հարկ է նշել նաև, որ դատարանը նման որոշման հանգում է քննարկելով իրավական հիմքի առկայությունը: Ըստ այդմ, յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրվում է օրենքի առկայությունը, որը պետք է լինի գրավոր և հրապարակային: Բացի այդ, օրենքի ուժ են ստանում նաև միջազգային իրավունքի սկզբունքներն ու ընդհանուր կանոնները: Օրենքով նախատեսված լինելու պայմանը ենթադրում է նաև նման օրենքի հրապարակայինությունը, հասանելիությունը հանրության համար և կանխատեսելիությունը:

Անհրաժեշտ է տարբերակել փաստի պնդումը և գնահատողական արտահայտությունները: Վերջիններս պետք է բավարար կերպով հիմնավորված լինեն փաստերով:

Արտահայտվելու ազատությունը նաև տեղեկություններ ստանալու ազատություն է: Պետությունը չպետք է միջամտի կամ խոչընդոտի տեղեկություններ ստանալու անձի ազատության իրականացմանը: Սա չի նշանակում, որ պետությունը պոզիտիվ պարտականություն ունի իր նախաձեռնությամբ մատչելի դարձնելու և տարածելու բոլոր տեղեկությունները: Այսպես՝ Գերրան և ուրիշներն ընդդեմ Իտալիայի¹⁴² գործով դիմողները պնդել են, որ խախտվել է արտահայտվելու ազատությամբ տեղեկություններ ստանալու իրավունքը, քանի որ իշխանությունները չեն տարածել տեղեկություններ քիմիական գործարանի գործարկմամբ ստեղծվող ռիսկերի մասին: Դատա-

¹⁴² Guerra and Others v Italy, No 14967/89, 19.02.98, 1998 26 EHRR 357.

րանը որոշեց, որ տվյալ դեպքում արտահայտվելու ազատության խախտման մասին խոսք չի կարող գնալ:

Քաղաքական խոսքի ազատություն

Արտահայտվելու ազատության կարևոր ձևերից է քաղաքական խոսքի ազատությունը, որը հատկապես կենսական է քաղաքական գործիչների արտահայտվելու ազատության տեսանկյունից: Իշխանություններին քննադատող ընդդիմադիր քաղաքական գործիչի արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը կհամարվի արտահայտվելու ազատության խախտում:

Քաղաքական բանավեճի առկայությունը ժողովրդավարական հասարակության կարևորագույն բաղկացուցիչներից է, քանի որ այն հնարավորություն է տալիս մարդկանց տեղեկանալու և կարծիք կազմելու քաղաքական առաջնորդների հայացքների վերաբերյալ: Հասարակական կազմակերպությունների դերը նույնպես մեծ է հանրային քաղաքական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ և քննադատություններ կատարելու հարցում: Հարկ է ընդգծել, որ քաղաքական գործիչը պետք է պատրաստ լինի նաև քննադատության, և նրա վերաբերյալ քննադատությունների թույլատրելի սահմանները որոշելիս անպայման հաշվի է առնվում այն հանգամանքը, որ քաղաքական գործիչ դառնալով՝ անձը կամավոր կերպով հանրության առջև առավել բաց է դարձնում իր հայացքները, լայնորեն արտահայտում դրանք, ուստի պետք է պատրաստ լինի ավելի ուժգին քննադատության, քան կարող է ունենալ սովորական մարդը, ով քաղաքական գործիչ չէ: Քաղաքական գործիչների վերաբերյալ լրագրողական խոսքի ազատությունը կարող է ավելի լայն լինել և իր մեջ պարունակել չափազանցության տարրեր, որոնք ոչ մի դեպքում չպետք է անտեղի գնահատողական-վիրավորական բնույթ կրեն:

Թույլատրելի քննադատության սահմաններն առավել լայն են, երբ հարցը վերաբերում է կառավարությանը: Կառավարության քննադատության համար անձանց նկատմամբ քրեական հետապնդման իրականացումն անթույլատրելի է, քանի որ դա պետության կողմից բռնության կիրառում է անձի նկատմամբ, ինչով կխախտվի արտահայտվելու ազատությունը: Նման քննադատությունը ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ բանավեճի ապահովումն է հանրային նշանակության խնդիրներ բարձրացնելու, քննարկելու և լուծելու համար:

Քաղաքական բանավեճի առկայությունը սերտորեն առնչվում է ժողովրդավարական ընտրությունների իրականացման հարցին, քանի որ տեղեկություններ ստանալը և տարածելը հատկապես կարևոր է մինչև ընտրու-

թյունների անցկացումը՝ ընտրությունների հարցում կողմնորոշվելու և առավել տեղեկացված ընտրություն կատարելու համար:

Հանրային պաշտոնատար անձինք և հանրային բողոք

Հանրային պաշտոնատար անձանց (դատավորներ, դատախազներ, զինված ուժերի անձնակազմ, ոստիկաններ) վերաբերյալ խոսքի արտահայտության խոսքային դրսևորումները կարող են լինել խիստ քննադատական և որոշակի աստիճանի վիրավորական: Ամեն դեպքում, հանրային պաշտոնյան չպետք է թույլ տա, որ իր անձնական հույզերը կամ զայրույթը, որոնք իրեն ուղղված արտահայտությունների հետևանք են, գերակայեն իր պաշտոնական պարտականությունների կատարմամբ պայմանավորված անհարժեշտության նկատմամբ և թելադրող դառնան:

Հանրային բողոքը արտահայտվելու ազատությունն է, որ իրականացվում է ցույցի միջոցով: Պետությունը պետք է ձեռնպահ մնա ցույցի միջոցով արտահայտվելու ազատությանը միջամտելուց:

Տպագիր և էլեկտրոնային լրատվական միջոցներ

Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների՝ թերթերի, հեռուստատեսությունների լայն տարածումը և մատչելիությունը հսկայական ուժ է տալիս այդ միջոցների օգտագործմամբ գաղափարներ, կարծիքներ տարածելու և ստանալու, բանավեճեր ծավալելու և զարգացնելու համար: Այդուհանդերձ, այդ լրատվամիջոցների լիցենզավորման պահանջը չի կարող համարվել արտահայտվելու ազատության սահմանափակում, քանի որ նման լիցենզավորումը թույլատրվում է:

Արտիստիկ արտահայտում և առևտրային խոսքի ազատություն

Արտիստիկ արտահայտման ազատությունը պաշտպանվում է արտահայտվելու ազատությամբ: Մյուլլերը և ուրիշներն ընդդեմ Շվեյցարիայի¹⁴³ գործով դատարանը արտահայտվելու ազատության իրավունքի խախտում գնահատեց այն փաստը, որ բռնագրավվել էին նկարները, և նկարիչը քրեական պատժի էր ենթարկվել այդ նկարների ցուցահանդես կազմակերպելու համար:

Արտահայտվելու ազատությամբ պաշտպանված է նաև առևտրային խոսքի ազատությունը: Առևտրային խոսքի ազատությունը շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպությունների արտահայտվելու ազատության իրավունքն է: Այս ոլորտում, ինչպես արդեն նշել ենք, պետության

¹⁴³ Muller and Others v Switzerland, No10737/84, 24-05-1988.

հայեցողության սահմանները կարող են լայն լինել՝ պայմանավորված անարդար մրցակցության և գովազդի վերաբերյալ օրենքներով: Գովազդը կարող է արգելվել, եթե այն մոլորեցնող կամ շփոթություն առաջացնող տեղեկություններ է տարածում կամ անարդար մրցակցության տարրեր է պարունակում:

Դատական իշխանության հեղինակությունը և անկախությունը

Արտահայտվելու ազատության սահմանափակման իրավաչափ նպատակներից է դատական իշխանության հեղինակության և անկախության պաշտպանությունը: Այս պաշտպանության նպատակը օրենքի գերակայության ապահովումն է, որի ապահովման մեծ բեռ է կրում դատական իշխանությունը, ինչը ներառում է ինչպես դատավորներին, այնպես էլ այն անձանց և կառույցներին, որոնք ապահովում են դատական իշխանության գործունեությունը: Այս սահմանափակման նպատակն այն է, որ հասարակությունը և՛ հարգանք, և՛ վստահություն ունենա դատարանների նկատմամբ, որոնք պետք է իրականացնեն իրենց գործունեությունը և լուծեն իրավական վեճերը:

3. Չինվորական ծառայությամբ պայմանավորված սահմանափակումները

Արտահայտվելու ազատության պաշտպանությունից զինվորական ծառայողները օգտվում են այնպես, ինչպես այլ անձինք, սակայն առկա է հետևյալ սահմանափակումը.

«Չինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ զինվորական ծառայողն իրավունք չունի կազմակերպել գործադուլներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցել դրանց:

Սա նշանակում է, որ զինծառայողները չեն օգտվում արտահայտվելու ազատության դրսևորումներից մեկից՝ բողոքի արտահայտման ազատությունից, ինչպիսին կարող է լինել գործադուլների, հանրահավաքների, երթերի, ցույցերի կազմակերպումը կամ դրանց մասնակցելը:

Այս սահմանափակումը արձանագրված է նաև «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ըստ որի զինծառայողները հրապարակային միջոցառումներ (տվյալ օրենքի իմաստով) կազմակերպելու և դրանց մասնակցելու իրավունք չունեն:

Ամրագրումը միջազգային և ներպետական իրավական նորմերում

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մար-

դուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի ու հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից»:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագրի 19-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին:

2. Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն, հետևաբար այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն դրանք պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա) այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.

բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար:

Նույն դաշնագրի 20-րդ հոդվածի համաձայն՝

1. Պատերազմի որևէ քարոզչություն պետք է արգելվի օրենքով:

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պետք է արգելվի օրենքով:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ ու գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

3. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է դրական ազատություն, իսկ երկրորդ մասով պարզաբանվում է, թե ինչ կերպ կարող է այդ ազատությունը սահմանափակվել: Ինչը նշանակում է, որ որոշակի հանգամանքներում պետական մարմինները արդարացիորեն կարող են միջամտություն դրսևորել այդ իրավունքի իրականացմանը:

4. Նշված հոդվածով նախատեսված իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացնել յուրաքանչյուր անձ՝ անկախ քաղաքացիությունից: Լրագրողները, խմբագիրները, հիմնադիրները, լրատվամիջոցները, հրատարակվող և տարածվող կազմակերպություններն ու անձինք, ենթակա են պաշտպանության Կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում:

Ինտերակտիվ խաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դերային խաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն: Այնուհետև դասախոսը ներկայացնում է իրական գործը և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկմանը հատկացվում է 15 րոպե ժամանակ:

Տարբերակ 1. Գործի փաստեր

Անձը, մամուլում հոդվածներ հրապարակելով, քննադատել է իր պետության կողմից սեփական տարածքում ձեռնարկված ռազմական գործողությունները, որի համար ենթարկվել է քրեկան պատասխանատվության:

Ունկնդիրները տվյալ փաստերի հիմքով պետք է պատասխանեն հետևյալ հարցին. «Արդյո՞ք առկա է արտահայտվելու ազատության խախտում»:

Դասախոսն ներկայացնում է Շուրեկն ընդդեմ Թուրքիայի¹⁴⁴ գործը, որով դատարանը ընդունել է, որ առկա է արտահայտվելու ազատության խախտում:

Տարբերակ 2. Գործի փաստեր

Անձը նախաձեռնում է «Զինվոր» շաբաթական ամսագրի հրատարակումը: Ամսագիրը լուսաբանում է զինվորական կյանքի դրական և բացասական կողմերը՝ շատ հաճախ քննադատելով բանակում տիրող արատավոր երևույթները: Անձը նամակ է ուղղում պաշտպանության նախարարին՝ խնդրելով հնարավորություն տալ իրեն տարածելու «Զինվոր» ամսագիրը զինված ուժերում՝ «Հայ զինվոր» պաշտոնաթերթի հետ հավասար հիմունքներով: Նախարարը մերժում է խնդրանքը՝ պատճառաբանելով, որ զինված ուժերում կարող են տարածվել միայն այնպիսի թերթեր, որոնց բովանդակությունը հարիր է բանակի՝ սահմանադրական առաքելությանը և չի վնասում հայոց բանակի հեղինակությանը:

Արդյո՞ք առկա է կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվող որևէ իրավունքի խախտում:

Քննարկել նաև հետևյալ իրավիճակները. զինձառայողի ընտանիքի անդամն ուղարկում է ա. «Հայկական ժամանակ» թերթը, և հրամանատարական կազմն արգելում է ընթերցել այն, բ. Day.az թերթը, և հրամանատարական կազմն արգելում է ընթերցել այն: Արդյո՞ք առկա է զինձառայողի՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտում:

Դասախոսը ներկայացնում է Վերեյնիգունգն ու Գուրին ընդդեմ Ավստրիայի¹⁴⁵ գործը, որով դատարանն ընդունել է, որ առկա է արտահայտվելու ազատության խախտում:

¹⁴⁴ Surek v Turkey, No 1, No 26682/95, 8.7.99, 7 BHRC 339.

¹⁴⁵ Vereinigung demokratischer Soldaten Österreichs and Gubi v. Austria, 19 December 1994, Series A no. 302.

Մոդուլ 9: Հավաքների և միավորման ազատություն

Տևողությունը՝ 2 ժամ 45 րոպե

Բովանդակություն

1. Հավաքների և միավորման ազատության իրավունքի հասկացությունը, բովանդակությունը
2. Զինվորական ծառայությամբ պայմանավորված հավաքների և միավորումների իրականացման առանձնահատկությունները

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|--|----------------------------|--------------------------|
| Հավաքների և միավորման ազատության իրավունքի հասկացությունը, բովանդակությունը: | Պրեզենտացիա | 45 րոպե |
| Զինվորական ծառայությամբ պայմանավորված հավաքների և միավորումների իրականացման առանձնահատկությունները | Պրեզենտացիա Դերային խաղ | 1 ժամ 30 րոպե 30 րոպե |

Դասախոսության նյութ

1. Հավաքների և միավորման ազատության իրավունքի հասկացությունը

Հավաքների և միավորման ազատությունը յուրաքանչյուր անձի՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու, ինչպես նաև այլոց հետ միավորվելու, իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու կամ դրանց անդամակցելու ազատությունն է:

Այս իրավունքը սերտորեն առնչվում է արտահայտվելու ազատության և մտքի, խղճի ու կրոնի ազատության հետ: Նշված իրավունքների իրականացումը բավականին սահմանափակ կլինի, եթե հավաքների և միավորման ազատությունը չլինի, քանի որ երաշխիք և հնարավորություն չէր լինի պաշտպանված կերպով տարածելու և ստանալու կարծիքներ, գաղափարներ, եթե նույն գաղափարներն ու կրոնը դավանող անձինք զրկված լինեին հավաքվելու կամ միություններ ստեղծելու իրավունքից: Առկա է նաև հակադարձ կապը, ըստ որի հավաքների և միավորումների ազատության

նպատակներից մեկը կարծիք, գաղափարներ ունենալու, դրանք տարածելու և ստանալու ազատությունն է:

1.1. Խաղաղ հավաքների ազատություն

Խաղաղ հավաքների ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից է: Հավաքները պետք է լինեն խաղաղ: Հավաքների և միավորման ազատությամբ չեն պաշտպանվում նրանք, ովքեր բռնարարքներ գործելու մտադրություն ունեն, ինչը հանգեցնում է հրապարակային անկարգությունների: Այդուհանդերձ, հավաքների ու միավորման ազատությունը կիրառելի է այն հավաքների նկատմամբ, որտեղ առկա է հակընդդեմ բռնի հավաք-ցույցի վտանգ, որի ընթացքում բռնության գործադրումը դուրս է կազմակերպիչների վերահսկողությունից: Հավաքների ազատությունը կիրառելի է մասնավոր հավաքների և այն հավաքների դեպքում, որոնք կազմակերպվում ու իրականացվում են փողոցներում՝ որպես երթեր, նստացույցեր և այլն: Հանրային վայրերում հավաքների կազմակերպումը և իրականացումը կարող է իրավաչափորեն պահանջել իշխանությունների նախնական թույլտվություն: Ընդ որում՝ կարող են լինել հանրային նշանակության կարևոր վայրեր, որտեղ հավաքներ անցկացնելն իսպառ արգելված լինի: Հավաքները կարող են ուղեկցվել ինչպես ելույթներով, այնպես էլ լռությամբ:

Հավաքների ազատության նկատմամբ միջամտությունը պետք է լինի օրենքով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Ջավիթ Անը ընդդեմ Թուրքիայի¹⁴⁶ գործով թուրք կիպրոսցին զանգաստվում էր, որ իշխանությունները իրեն շարունակաբար մերժել են անցնել «կանաչ գիծը», որով բաժանված է Հյուսիսային Կիպրոսը Հարավայինից, որպեսզի մասնակցի կղզու ապագայի վերաբերյալ երկու համայքների քննարկումներին: Դատարանը տվյալ փաստը դիտարկեց որպես հավաքների ազատության իրավունքի խախտում, քանի որ առկա չէ որևէ օրենք, որը կկարգավորեր «կանաչ գիծը» անցնելու թույլտվություն տրամադրելու կարգը: Հավաքների ընդհանուր արգելքը կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, երբ առկա է հասարակական անկարգությունների իրական վտանգ, որը չի կարող կանխվել այլ կերպ, քան հավաքների ընդհանուր արգելմամբ: Նման արգելքը չպետք է կանխի այն հավաքների իրականացումը, որոնք հասարակական կյանքին վտանգ չեն սպառնում: Այն դեպքերում, երբ առկա է կանխատեսելի վտանգ, պետությունը ունի լայն հայեցողություն հավաքների ազատությունը սահմանափակելու համար: Հավաքների ազատությունը պո-

¹⁴⁶ No 20652/92, 20.02.03.

զիտիվ պարտականություն է դնում պետության վրա՝ պաշտպանելու խաղաղ հավաքի մասնակիցներին այն դեպքում, երբ առկա է հակընդդեմ հավաք, որը կարող է վերաճել երկու հավաքների մասնակիցների բախումների և հասարակական անկարգությունների:

1.2. Միավորումների ազատություն

Միավորումների ազատությունը վերաբերում է միայն մասնավոր միավորումներին: Այդուհանդերձ, «միավորում» հասկացությունը ունի ինքնավար իմաստ. ներպետական օրենսդրությամբ տվյալ միավորման դասակարգումը՝ որպես մասնավոր, որոշակի դեր ունի, բայց այդ հանգամանքը վճռական նշանակություն կարող է չունենալ տվյալ միավորման նկատմամբ միավորումների ազատության կիրառելիության դեպքում:

1.3. Քաղաքական կուսակցություններ

Քաղաքական կուսակցությունները՝ որպես միավորումներ, գտնվում են միավորումների ազատության պաշտպանության տիրույթում նաև այն պատճառով, որ նրանք ժողովրդավարության համար առանցքային նշանակություն ունեն: Քաղաքական կուսակցությունները կարող են արգելվել միայն այն դեպքերում, երբ առկա են դրա համար անհրաժեշտ համոզիչ և հարկադրող պատճառներ: Տվյալ հարցի շուրջ պետությունը ունի սահմանափակ հայեցողություն և կուսակցությունների սահմանափակման միջոցառումները իրականացնելիս պետք է հաշվի առնի տվյալ կուսակցության նպատակները և այն հանգամանքը, թե արդյոք եղել են բռնության, ապստամբության կոչեր, որոնք ուղղված են ժողովրդավարական սկզբունքների դեմ կամ ժխտում են դրանք: Ավելին՝ կանխարգելիչ միջամտությունը կարող է արդարացված լինել, քանի որ պետությունը չի կարող հարկադրված լինել սպասելու, որպեսզի տվյալ կուսակցությունը իշխանություն ձեռք բերի և կոնկրետ գործողություններ իրականացնի, որոնք անհամատեղելի են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հետ:

Թուրքիայի միացյալ կոմունիստական կուսակցությունը և ուրիշները ընդդեմ Թուրքիայի¹⁴⁷ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ չի կարելի արդարացնել քաղաքական խմբի գործունեության սահմանափակումը այն դեպքում, երբ տվյալ խումբը հանրային բանավեճ է քարձրացնում պետության որոշակի տարածքի բնակչության վերաբերյալ և փորձում է ժողովրդավարական կանոնների համաձայն մասնակցել քաղաքական կյանքին:

¹⁴⁷ No 19392/92, 30.01.98, 1998 26 EHRR 121, para 57.

1.4. Արհմիություններ և մասնագիտական միավորումներ

Միավորումների ազատությունը ներառում է նաև արհեստակցական միություններ և մասնագիտական միավորումներ կազմակերպելու և դրանց մասնակցելու իրավունքը: Արհմիությունները և մասնագիտական միավորումները պետք է հնարավորություն ունենան պաշտպանել իրենց անդամների մասնագիտական շահերը, այդ թվում նաև գործադուլների միջոցով, որի կիրառումը կարող է սահմանափակվել ներպետական օրենքներով: Արհմիության կամ մասնագիտական միավորումներին մասնակցությունը պարտադիր չէ, և որևէ անձ չի կարող արհմիությանը չանդամակցելու հիմքով զրկվել աշխատանքից:

1.5. Հանրային ծառայողներ

Պետությունն իրավունք ունի պետության զինված ուժերում ծառայողների, ոստիկանների և պետության վարչական գործունեությունն իրականացնող ծառայողների նկատմամբ որոշակի իրավաչափ սահմանափակումներ կիրառել միավորումների կազմակերպման ու մասնակցության նկատմամբ: Պետության վարչական գործունեություն իրականացնող ծառայողների վերաբերյալ հստակ սահմանում գոյություն չունի, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հաշվի են առնվում տվյալ գործի հանգամանքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Մաեստրին ընդդեմ Իտալիայի¹⁴⁸ գործով դիմողը ներպետական օրենդրությամբ պարտավոր է եղել հայտարարել, որ չի հանդիսանում ազատ մասունական կազմակերպության անդամ: Նման պահանջը դատարանը գնահատել է որպես միավորումների ազատության հետ անհամատեղելի:

1.6. Փոքրամասնությունների միավորումներ

Կուսակցություններից զատ այլ միավորումների ազատությունը պաշտպանում է այն միավորումները, որոնք ստեղծվում են մշակութային կամ հոգևոր ժառանգությունը պաշտպանելու, տարբեր սոցիալ-տնտեսական նպատակներով, կամ որոնք նպատակ ունեն փնտրել որոշակի էթնիկական ինքնություն և հաստատել համապատասխան ինքնագիտակցություն: Նման միավորումները կարող են սահմանափակվել այն դեպքում, երբ առկա է բռնության կանխատեսելի վտանգ, կամ երբ նման միավորումը կգործի ժողովրդավարության սկզբունքների և մարդու իրավունքների դեմ կամ կժխտի դրանք:

¹⁴⁸ No 39748/98, 17.02.04.

2. Զինվորական ծառայությանը պայմանավորված հավաքների և միավորումների իրականացման առանձնահատկությունները

Զինվորական ծառայության անցնելու մասին ՀՀ օրենքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք առնչվում են այս հարցին: Այսպես՝ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինծառայողն իրավունք չունի անդամակցել որևէ քաղաքական կուսակցության, կրոնական կամ արհեստակցական կազմկերպության, քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության:

Նման սահմանափակումը արձանագրված է նաև «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ըստ որի զինծառայողները հրապարակային միջոցառումներ (տվյալ օրենքի իմաստով) կազմակերպելու և մասնակցելու իրավունք չունեն: Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովն իր թիվ 1742¹⁴⁹ Հանձնարարականում մտահոգություն է հայտնել, որ որոշ անդամ երկրներում Կոնվենցիայով երաշխավորված հավաքներ և միավորումներ անցկացնելու իրավունքի սահմանափակումները գերազանցում են նախատեսված և թույլատրելի սահմանները: Մասնավորապես, այդպիսին են հանդիսանում զինված ուժերում ընտրական իրավունքի մասով առկա սահմանափակումները, որոնք կոչ է արվում վերացնել:

Ընդհանուր առմամբ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2՝ N 1572 և N 1742 Հանձնարարականների համաձայն՝ զինծառայողներին պետք է տրամադրվեն միավորումներ և հավաքներ իրականացնելու բոլոր իրավունքները՝ ներառյալ քաղաքական կուսակցություններին անդամակցելու իրավունքը: N 1572 Հանձնարարականում Վեհաժողովը անդամ պետություններին կոչ է անում զինծառայողներին թույլատրել անդամակցել ներկայացուցչական միավորումների՝ ծառայության պայմանների և վարձատրության հարցերի քննարկաման նպատակով և վերացնել զինված ուժերում միավորումներ իրականացնելու անհարկի սահմանափակումները¹⁵⁰

Ամրագրումը միջազգային և ներպետական իրավական նորմերում

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք ունի:

¹⁴⁹ Եվրոպայի խորհուրդ, Խորհրդարանական վեհաժողով, հանձնարարական N 1742 (2006):

¹⁵⁰ Եվրոպայի խորհուրդ, Խորհրդարանական վեհաժողով, հանձնարարական N 1572 (2002):

2. Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամակցվել որևէ միության:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»:

Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 21-րդ հոդվածը ճանաչում է խաղաղ ժողովների իրավունքը: Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք դրվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության ու բարոյականության պահպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

Նույն փաստաթղթի 22-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր մարդ ունի ուրիշների հետ ընկերակցության ազատության իրավունք, ներառյալ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության համար դրանց մեջ մտնելու իրավունքը:

2. Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության ու բարոյականության պահպանության կամ մյուս անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

Սույն հոդվածը չի արգելում այդ իրավունքից օգտվելու օրինական սահմանափակումներ մտցնել այն անձանց համար, ովքեր մտնում են զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ:

3. Սույն հոդվածն իրավունք չի տալիս ասոցիացիաների ազատության և կազմակերպություն ստեղծելու իրավունքի վերաբերյալ աշխատանքի միջազգային կազմակերպության 1948 թ. կոնվենցիայի մասնակցող պետություններին՝ ընդունելու օրենսդրական ակտեր՝ ի վնաս նշված կոնվենցիայում նախատեսվող երաշխիքների, կամ օրենքը կիրառելու այնպես, որ վնաս հասցվի այդ երաշխիքներին:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը, բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետության վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

Ինտերակտիվ խաղ

Խաղային ուսուցումն իրականացվում է դերային խաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմին տրվում է 10 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս անդամակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն: Այնուհետև դասախոսը ներկայացնում է իրական գործը և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկմանը հատկացվում է 15 րոպե ժամանակ:

Գործի փաստեր

Անձը մասնակցել է նախապես սահմանված կարգով թույլտվություն ստացված հանրահավաքին՝ ուղղված անկախության շարժման որոշ ակտիվիստների բանտարկության դեմ: Հանրահավաքի ընթացքում ոստիկանությանն և դատական համակարգին ուղղված վիրավորական խոսքերի պատճառով դիմողի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, քանի որ նա աշխատում էր պետական կառույցում: Արդյո՞ք խախտվել են կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

Դասախոսը ներկայացնում է էզելին ընդդեմ Ֆրանսիայի¹⁵¹ գործը: Այդ գործով դատարանը որոշել է, որ իրավունքին միջամտությունը իրականացվել է օրենքով սահմանված կարգով և օրինական նպատակ է հետապնդել: Այն է՝ անկարգությունների կանխումը: Այս առումով խնդրո առարկա է հանդիսանում իրականացված միջամտության անհրաժեշտության հարցը ժողովրդավարական հասարակության ներսում: Դատարանը փաստել է, որ ցանկացած դեպքում պետք է կիրառված միջոցների և 11-րդ հոդվածով նախատեսված նպատակների միջև պահպանվի համաչափության սկզբունքը: Այսպիսով՝ դատարանը որոշել է, որ հանրահավաքներին մասնակցելու համար սանկցիաների կիրառումը 11-րդ հոդվածի խախտում է, և ցանկացած օրինական սահմանափակում պետք է պահպանի համաչափության սկզբունքը:

Դատարանի գնահատականից բխում է, որ զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց իրավունքների իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է պահպանեն համաչափության սկզբունքը:

¹⁵¹ Ezelin v. France, 26 April 1991, Series A no. 202.

Մոդուլ 10: Ազատ ընտրելու իրավունքը

Տևողությունը՝ 3 ժամ 25 րոպե

Բովանդակություն

1. Անձի ինքնիշխանության ազատ արտահայտությունը՝ ընտրելու և ընտրվելու իրավունքը
2. Պետության՝ ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու պոզիտիվ պարտականությունը
3. Ազատ ընտրելու իրավունքի փոխկապվածությունը արտահայտվելու ազատության և այլ իրավունքների ու ազատությունների հետ
4. Զինվորական ծառայություն և ազատ ընտրելու ու ընտրվելու իրավունք

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|--|---|-------------------------------------|
| Անձի ինքնիշխանության ազատ արտահայտությունը՝ ընտրելու և ընտրվելու իրավունքը | Պրեզենտացիա | 15 րոպե |
| Պետության՝ ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու պոզիտիվ պարտականությունը | Պրեզենտացիա | 45 րոպե |
| Ազատ ընտրելու իրավունքի փոխկապվածությունը արտահայտվելու ազատության և այլ իրավունքների ու ազատությունների հետ | Պրեզենտացիա | 20 րոպե |
| Զինվորական ծառայություն և ազատ ընտրելու ու ընտրվելու իրավունք | Պրեզենտացիա Քննարկում Դերային խաղ | 20 րոպե 30 րոպե 1 ժամ 15 րոպե |

Դասախոսության նյութ

1. Անձի ինքնիշխանության ազատ արտահայտությունը՝ ընտրելու և ընտրվելու իրավունքը

Մարդկային քաղաքակրթությունը հասել է մի մակարդակի, որ սահմանում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների ու ազատությունների և պետության իրավասությունների հարաբերակցությունը՝ պետությանը դիտելով որպես այդ իրավունքների ու ազատությունների իրացումն ապահովող միջոց:

Իշխանությունը ժողովրդին ի սկզբանե և ի վերուստ պատկանող իրավունք ու կարողություն է, որը 1) ոչ միայն ժողովուրդ կազմող անհատների, այլև նույն ժողովրդի նկատմամբ իշխանություն է և 2) սահմանափակված չէ որևէ այլ սուբյեկտի իշխանությամբ, ուստի ինքնիշխանություն է:

Պետության ինքնիշխանությունը «ինքնիշխան անհատներից բաղկացած ինքնիշխան ժողովրդի» հավաքական ինքնիշխանությունը պետական կարգավիճակով իրացնելու դրսևորումն է, ինչպես նաև այդ ժողովրդի իշխանությունը պետական կարգավիճակով իրականացնելու հնարավորությունն ու դրա դրսևորման անհրաժեշտ պայմանը:

Պետության նվազագույն բաղադրիչներն են *«աշխարհագրական տարածքը»* և *«իշխանության իրականացման համակարգը»*:

Առանց տարածքի մարդիկ չեն կարող ի մի ժողովվել (*ժողովուրդ չինել*), ուստի և նրանց հավաքական կամքը չի կարող ձևավորվել ու դրսևորվել՝ իր ինքնիշխանությամբ սկիզբ դնելով ինքնիշխան պետության:

Առանց ժողովրդի հավաքական կամքը գործադրող համակարգի, այդ կամքը նույնիսկ ձևավորված ու դրսևորված վիճակում, որպես կանոն, չի կարող որպես իշխանություն իրականացվել:

Անշուշտ, պետության այս երկու հիմնական բաղադրիչներն առանձին-առանձին չեն պայմանավորում ժողովրդի իշխանության իրականացումը, այլ որպես ամբողջություն, որոնց նշված, ինչպես նաև այլ դերերն ու գործառույթները սերտորեն փոխապայմանավորում ու փոխլրացնում են միմյանց:

Իշխանության իրականացման համակարգը բաղկացած է իշխանության իրականացման մարմիններից ու պաշտոնատար անձանցից, որոնք պետք է ձևավորվեն (ընտրվեն) և գործեն ժողովրդի ինքնիշխան կամքի սահմաններում: Այս խնդիրը հնարավոր է լուծել միայն այն դեպքում, երբ ժողովուրդը, իսկ ավելի կոնկրետ՝ այն կազմող անհատները, իշխանության իրականացման մարմիններին ու պաշտոնատար անձանց ազատորեն ընտրելու հնարավորություն ունենան, այլապես տեղի կունենա ժողովրդի և այն կազ-

մող անհատների ազատ կամքի սահմանափակում և դրանով հանդերձ՝ ի սկզբանե և ի վերուստ նրանց տրված իշխանության յուրացում:

Բնականաբար, իշխանության իրականացման մարմիններում կամ պաշտոններում համապատասխան լիազորությունները պետք է իրականացնեն նույն ժողովրդի ներկայացուցիչները, ուստի նրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա ոչ միայն ընտրելու, այլ նաև ընտրվելու իրավունք: Այս իրավունքի սահմանափակումը, դրսևորվելով առանձին անհատների նկատմամբ (բացի ժողովրդի հավաքական կամքով նախատեսված սահմանափակումների դեպքերից), նույնպես նշանակում է ժողովրդի ինքնիշխանության սահմանափակում և նրա իշխանության յուրացում:

Թե՛ ընտրելու, թե՛ ընտրվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումները կանխելու և դրանց ազատ արտահայտվելու հնարավորությունն ապահովելու միջոցը նույն «իշխանության իրականացման համակարգն» է, որը հաստատութենացված ընկալմամբ միջազգային ու ներպետական իրավական ակտերում նույնացվում է պետության հետ և հաճախ ուղղակի անվանվում է պետություն:

2. Պետության՝ ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու պոզիտիվ պարտականությունը

Վերը նշված ընկալմամբ՝ պետության պոզիտիվ պարտականությունը սահմանված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի) 1-ին արձանագրության 3-րդ հոդվածով, որի համաձայն. «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

Հարկ է նշել, որ կոնվենցիայի մասնակից պետությունների այս պարտավորությունն ընդամենը հաստատութենական նորմ չէ, այլ քաղաքացու ընտրելու և ընտրվելու սուբյեկտիվ իրավունք¹⁵², որը պետությունները պարտավոր են հարգել ու ապահովել:

¹⁵² Ireland v. the United Kingdom, Judgment of 18 January 1978, Mathieu-Mohin and Clerfayt v. Belgium, Judgment of 2 Marc 1987, X-ն ընդդեմ Բելգիայի գործով N1028/61 գանգատի ընդունելիության վերաբերյալ 1961 թ. սեպտեմբերի 18-ի որոշումը (X. v. Belgium), X-ն ընդդեմ ԳԴՀ գործով N2728/66 գանգատի ընդունելիության վերաբերյալ 1967 թ. հոկտեմբերի 6-ի որոշումը (X. v. the Federal Republic of Germany), W-ն, X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ Բելգիայի գործով NN6745-6746/76 գանգատների ընդունելիության վերաբերյալ 1975 թ. մայիսի 30-ի որոշումները:

Պետությունները միաժամանակ որոշակի հայեցողական ազատություն ունեն օրինական կերպով սահմանափակելու քվեարկության իրավունքը, եթե այդպիսի սահմանափակումը չի վնասում այդ իրավունքի իրական բովանդակությանը¹⁵³:

Կոնվենցիայում նշված «օրենսդիր իշխանություն» հասկացությունը պարտադիր կերպով չի ենթադրում միայն ազգային խորհրդարան, այլ այն պետք է մեկնաբանվի՝ համապատասխան պետության սահմանադրական կառուցվածքից ելնելով: Գործնական առումով սա նշանակում է, որ ցանկացած պետություն կարող է որոշել, որ արձանագրության 3-րդ հոդվածի դրույթները պարտադիր են ոչ միայն երկրի խորհրդարանի ընտրությունների, այլ նաև ներկայացուցչական հիմքերով ստեղծվող մեկ այլ համապետական մարմնի ընտրության ժամանակ:

Մինույն ժամանակ հարկ է նշել, որ նշված հոդվածում «օրենսդիր մարմնի» ընտրությանը վերաբերելու հիմքով եվրոպական դատարանը մերժել է հանրաքվեին և մունիցիպալ ընտրություններին մասնակցելու վերաբերյալ քաղաքացիների իրավունքի խախտման մասին մի շարք գանգատների ընդունումը¹⁵⁴:

Արձանագրության 3-րդ հոդվածով հատուկ ընդգծվում է ընտրությունների կազմակերպման և անցկացման հետևյալ սկզբունքները. 1) Ընտրությունները պետք է անցկացվեն «ազատ»: 2) Դրանց անցկացումը պետք է տեղի ունենա «ողջամիտ պարբերականությամբ»: 3) Ընտրությունները պետք է անցկացվեն «գաղտնի քվեարկությամբ»: 4) Ընտրությունները պետք է անցկացվեն «այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումը»: Նշված պայմաններից բացի, հոդվածում չի նախատեսվում որևէ դրույթ, որը մասնակից պետություններին կպարտավորեցներ իրենց ընտրությունները կատարել մեկ կամ երկու փուլով, ընտրական համակարգի ստեղծման ժամանակ առաջնայնությունը տալ համամասնական կամ մեծամասնական ներկայացուցչությանը և այլն: Մինչդեռ հանրահայտ է, որ որևէ ընտրական համակարգի ընտրությունը և դրա կիրառումը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ քաղաքացու քաղաքական իրավունքների երաշխավորման համար:

Եվրոպական դատարանը, հավանաբար նկատի ունենալով այս հանգամանքները, պետությունների ընտրական համակարգերի ընտրության հարցի հետ կապված բավականին յուրատեսակ դիրքորոշում է ձևավորել:

¹⁵³ *Lithgow v. the United Kingdom*, Judgment of 8 July (194 կետ), N7566/76, Dec. 11.12.76. D.R., p.121 (122), N 7730/76, Dec. D.R. 15, p. 137 (138).

¹⁵⁴ Հիլին ընդդեմ Լիխտենշտեյնի գործով 1999 թ. սեպտեմբերի 7-ի վճիռը:

Դատարանը ընդունել է, որ «N1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման նպատակից ելնելով՝ ցանկացած ընտրական համակարգ պետք է գնահատվի համապատասխան երկրի քաղաքական զարգացման լույսով, և այդ պատճառով մի համակարգի շրջանակներում անթույլատրելի մանրամասները կարող են համապատասխանաբար արդարացվել մեկ այլ համակարգի շրջանակներում՝ պայմանով, որ գործող ընտրական համակարգը նախատեսի այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն «օրենսդիր իշխանություն ընտրելիս ժողովրդի կամքի ազատ արտահայտումը»¹⁵⁵:

Այդուհանդերձ, ինչպես ընդունում է դատարանը, արձանագրությունն ընտրական համակարգերի ընտրության հարցում պետություններին տրամադրում է հայեցողության լայն սահմաններ: Սա է պատճառը, որ այս ոլորտում պետությունների օրենսդրությունը բավական տարբեր է, և վերջիններս ոչնչով կաշկանդված չեն ժամանակ առ ժամանակ փոփոխել իրենց ընտրական օրենսդրությունը¹⁵⁶:

Անդրադառնալով «օրենսդիր իշխանություն ընտրելիս» ձևակերպմանը՝ հարկ է նշել, որ այն տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տվել թե՛ գրականության մեջ, թե՛ գործնականում: Առանձին հեղինակներ գտնում են, որ նման ձևակերպումը նշանակում է, որ բացի օրենսդիր իշխանությունից, այլ պետական մարմինների ընտրության հետ կապված հարցերով դատարան չի կարելի դիմել: Այս դիրքորոշման կողմնակիցները կարծում են, որ պետության նախագահի կամ տեղական մարմինների ընտրության հետ կապված վեճերով գանգատ ներկայացնելու դեպքում դատարանը դրանք պետք է մերժի ոչ ընդունելի լինելու հիմքով¹⁵⁷:

Միաժամանակ գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ «Կոնվենցիայի N1 արձանագրության 3-րդ հոդվածում միայն «օրենսդրական մարմիններ» ձևակերպման հիշատակումը հավանաբար կապված է այն հանգամանքի հետ, որ կոնվենցիայի նախապատրաստման և ընդունման հարցում առաջատար դերակատարություն ունեցած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեջ չկար մեկը, որտեղ պետության գլուխն ընտրվեր ժողովրդի ուղղակի կամահայտնությամբ: Չնայած այժմ իրադրությունը փոփոխվել է, իսկ N1 արձանագրության 3-րդ հոդվածի առարկան և նպատակը ոչ այնքան օրենսդիրն մարմինն է՝ որպես այդպիսին, որքան բնակչության կողմից պետական իշխանության մարմնի ուղղակի ժողովրդավարական ընտրու-

¹⁵⁵ Mathieu-Mohin and Clerfayt v. Belgium, Judgment of 2 Marc 1987, կետ 54:

¹⁵⁶ Կոյն տեղում:

¹⁵⁷ Донна Гомьен, Дэвид Харрис, Лео Зваак. Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. М., 1998, с. 438.

թյունները, այդուհանդերձ, նաև այսօր անընդունելի են ճանաչվում պետության գլխի, ինչպես նաև տարածաշրջանային նահանգապետերի ուղղակի ընտրությունների հետ կապված դիմումները¹⁵⁸:

Ընտրական իրավունքի միջազգային պաշտպանության հարցերին, բացի N1 արձանագրության 3-րդ հոդվածից, նվիրված են նաև այլ միջազգային փաստաթղթերի դրույթներ: Դրանցից հատկապես ուշադրության է արժանի 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի բ կետը:

Նկատի ունենալով, որ միջազգային իրավական ցանկացած փաստաթուղթ ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ դատական մարմինների կողմից ընտրական գործընթացին առնչվող վեճերի քննության և լուծման համար՝ նպատակահարմար է անդրադառնալ նաև նշված դաշնագրի 25-րդ հոդվածի բ կետի վերլուծությանը:

Կոնվենցիայի N1 արձանագրության 3-րդ հոդվածի և դաշնագրի 25-րդ հոդվածի բ կետի միջև գոյություն ունի որոշակի բովանդակային ընդհանրություն:

Ի տարբերություն N1 արձանագրության 3-րդ հոդվածից, որը, ինչպես արդեն նշվեց, ընտրական իրավունքի հարցը հիմնականում շաղկապում է միայն օրենսդիր մարմնի ընտրության հետ, դաշնագրի 25-րդ հոդվածն ավելի հստակ և բազմակողմանիորեն ճանաչեց և ամրագրեց քաղաքացու ընտրական իրավունքը՝ որպես իրավական երևույթ:

Այս առումով պետք է նշել, որ N1 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պետությունների պարտականության նպատակը, էությունը և բովանդակությունն առավել պատշաճ խորությամբ բացահայտելու համար կարևոր նշանակություն ունի դաշնագրի 25-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնաժողովի 1996 թ. հուլիսի 12-ի 57-րդ նստաշրջանում ընդունված ընդհանուր մեկնաբանությունը:

Մեկնաբանության մեջ ընդգծվում է, որ դաշնագրի 25-րդ հոդվածը ճանաչում և պաշտպանում է «յուրաքանչյուր քաղաքացու ... ընտրելու և ընտրվելու ... իրավունքը»: Դաշնագիրը պահանջում է, որպեսզի, անկախ համապատասխան երկրում գործող կառավարման համակարգից կամ սահմանադրության ձևից, պետությունն ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են երաշխավորելու քաղաքացիների՝ պետու-

¹⁵⁸ Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения. М., 2002, с. 296.

թյան կողմից պաշտպանվող իրավունքների կիրառման արդյունավետ հնարավորությունը:

Մեկնաբանության մեջ նշվում է, որ 25-րդ հոդվածը վերաբերում է անհատների մասնակցության իրավունքին այնպիսի գործընթացներում, որոնք կազմում են պետական գործերի վարման մասը: Ընդ որում, ի տարբերություն դաշնագրով ճանաչված այլ իրավունքների և ազատությունների, 25-րդ հոդվածը պաշտպանում է «յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները»:

Մեկնաբանության մեջ նաև ընդգծվում է, որ 25-րդ հոդվածով նախատեսված իրավունքների կիրառման հարցում թույլատրելի չէ քաղաքացիների միջև ռասայի, գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի հիման վրա որևէ տարբերակում: Տարբերակման հարց կարող է առաջանալ այն քաղաքացիների միջև, ում քաղաքացիություն է շնորհվում ծննդի հիմքով, և նրանց, ովքեր այն ձեռք են բերում հպատակագրման միջոցով:

Պետական գործերի վարումն ընդարձակ գաղափար է, որն առնչվում է քաղաքական իշխանության, մասնավորապես օրենսդրական, գործադիր և վարչական լիազորությունների կիրառմանը: Այն վերաբերում է պետական ղեկավարման բոլոր ոլորտներին և միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում քաղաքականության ձևավորման իրականացմանը: Լիազորությունների բաշխումը և այն միջոցները, որոնցով անհատ քաղաքացիները իրականացնում են պետական գործերի վարմանը մասնակցելու 25-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքը, պետք է սահմանվի սահմանադրությամբ և օրենսդրությամբ: Քաղաքացիներն անմիջականորեն մասնակցում են պետական գործերի վարմանը տարբեր եղանակներով, այդ թվում նաև, երբ նրանք ընտրում կամ փոխում են իրենց սահմանադրությունը կամ պետական խնդիրներ են որոշում հանրաքվեի կամ այլ ընտրական գործընթացի միջոցով:

Մեկնաբանության մեջ նշվում է, որ ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը պետք է հաստատվի օրենքով և ենթակա լինի միայն այնպիսի հիմնավոր սահմանափակումների, ինչպիսին է, օրինակ, քվեարկելու համար նվազագույն տարիքի սահմանումը: Ըստ մեկնաբանության՝ անընդունելի է ընտրական իրավունքից զրկելը ֆիզիկական տկարության կամ գրագիտության, կրթական կամ սեփականության այլ պահանջների չբավարարման պատճառով: Չի կարելի նաև որպես ընտրելու իրավունքի պայման կամ ընտրվելու իրավունքից զրկվելու հիմք նախատեսել կուսակցությանն անդամակցությունը: Մեկնաբանության մեջ նաև նշվում է, որ պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի լի-

արժեք կերպով երաշխավորվի ընտրության իրավունքով օժտված բոլոր անձանց ընտրելու իրավունքը: Այդ նպատակով, մասնավորապես այնտեղ, որտեղ պահանջվում է ընտրողների գրանցում, նշված գործընթացը պետք է դյուրացվի և հնարավորինս ազատվի խոչընդոտներից: Ցանկացած կոպիտ միջամտություն գրանցման կամ ընտրական իրավունքին, ինչպես նաև ընտրողներին ահաբեկելը կամ հարկադրելը պետք է արգելվի քրեական օրենսդրությամբ, և այդ օրենսդրությունը պետք է խստորեն պահպանվի:

Մարդու իրավունքների հանձնաժողովը իր մեկնաբանության մեջ ընդգծում է, որ ընտրական իրավունքի արդյունավետ կիրառման համար կարևոր նշանակություն ունի արտահայտման ազատությունը, հանրահավաքների և միավորումների կազմակերպումը, որոնք պետք է լիովին պաշտպանվեն:

Հանձնաժողովը ընդունում է, որ ընտրությունները պետք է անցկացվեն արդար և ազատ, այնպիսի օրենքների շրջանակում, որոնք կերաշխավորեն ընտրական իրավունքի արդյունավետ կիրառումը: Ընտրության իրավունք ունեցող անձինք պետք է ազատ լինեն քվեարկելու ցանկացած թեկնածուի օգտին և կողմ կամ դեմ քվեարկեն հանրաքվեին կամ պլեբիսցիտին ներկայացված ցանկացած առաջարկին, ինչպես նաև կողմ կամ ընդդիմադիր լինեն կառավարությանը, առանց որևէ հարկադրանքի և ազդեցության, որը կարող է խոչընդոտել ընտրողների կամքի ազատ արտահայտմանը: Ընտրողները պետք է ի վիճակի լինեն իրենց կարծիքը կազմել անկախ, առանց բռնության կամ բռնության սպառնալիքի, հարկադրանքի, դրդման կամ որևէ կեղծ միջամտության: Ընտրությունների ընթացքում ընտրարշավի ծախսերի չափավոր սահմանափակումները կարող են արդարացվել, երբ դա անհրաժեշտ է երաշխավորելու համար, որպեսզի ընտրողների ազատ ընտրությունը սպառնալիքի տակ չլինի, և ժողովրդավարական գործընթացը խեղաթյուրված չլինի որևէ թեկնածուի կամ կուսակցության անհամաչափ ծախսերի պատճառով:

Հանձնաժողովը իր մեկնաբանության մեջ նաև նշում է, որ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ընտրությունների ընթացքում գաղտնիության պահանջները երաշխավորելու համար: Դա նշանակում է, որ ընտրողները պետք է պաշտպանված լինեն ընտրական գործընթացին ցանկացած անօրինական միջամտությունից, ինչպես նաև որևէ տեսակի հարկադրանքից կամ դրդումից, որոնք ուղղված են բացահայտելու, թե ինչպես է անձն ընտրել, կամ ինչպիսի ընտրություն է մտադիր կատարելու: Քվեատուփերի անվտանգությունը պետք է երաշխավորվի, և քվեները պետք է հաշվվեն թեկնածուների կամ նրանց վստահած անձանց ներկայությամբ: Քվեարկության արդյունքները և քվեների հաշվման գործընթացը պետք է ունենան ան-

կախ հսկողության և դատական վերանայման կամ համարժեք գործընթացի հնարավորություն, որպեսզի ընտրողները վստահ լինեն քվեատուփերի անվտանգության և քվեների հաշվման անվտանգության մեջ: Հաշմանդամ, կույր կամ անգրագետ մարդկանց ցուցաբերվող օժանդակությունը պետք է լինի անկախ: Ընտրողները պետք է տեղյակ լինեն այս երաշխիքների մասին:

Ըստ հանձնաժողովի՝ քաղաքացիների, թեկնածուների և ընտրված ներկայացուցիչների միջև պետական և քաղաքական հարցերի մասին տեղեկատվության և գաղափարների ազատ փոխանցումն ունի էական նշանակություն: Մա ենթադրում է, որ պետությունը պետք է ապահովի, որպեսզի ազատ մամուլը և զանգվածային լրատվության այլ միջոցները հնարավորություն ունենան մեկնաբանելու պետական հարցերն առանց գրաքննության կամ սահմանափակումների և ձևավորեն հասարակական կարծիքը: Մեկնաբանության մեջ նշվում է, որ դաշնագրի 19, 21 և 22-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների լրիվ իրացումը և հարգումը պահանջում են, որպեսզի ընտրական գործընթացի սուբյեկտների համար երաշխավորվի քաղաքական գործունեությանը ներգրավվելու ազատությունը, պետական մարմինների հետ բանավիճելու, խաղաղ երթեր և ցույցեր անցկացնելու ազատությունը, քննադատելու և ընդդիմանալու, քաղաքական նյութեր հրատարակելու, ընտրարշավներ անցկացնելու և քաղաքական գաղափարներ տարածելու հնարավորությունը:

3. Ազատ ընտրելու իրավունքի փոխկապվածությունը արտահայտվելու ազատության և այլ իրավունքների ու ազատությունների հետ

Ազատ ընտրելու իրավունքը սերտորեն փոխկապված է արտահայտվելու ազատության և այլ իրավունքների ու ազատությունների, մասնավորապես իրավահավասարության իրավունքի հետ:

Ազատ ընտրական իրավունքը ներառում է ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ ընտրական իրավունքը: Ե՛վ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունքը, որպես քաղաքացու կարևորագույն քաղաքական իրավունք, կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով նախատեսված հիմքերով: Որպես նման հիմք կարող է ընդունվել անձի տարիքը, քաղաքացիության առկայությունը և այլ հանգամանքներ: Ազատ ընտրությունների իրավունքը դատարանը բավական հետաքրքիր կերպով շաղկապում է քաղաքացիների իրավահավասարության իրավունքի հետ: Այսպես՝ Մատյե-Մոհինի գործով վճռում նշվում է. «Ընտրական համակարգերը հաճախ կանգնում են միմյանց հետ անհամատեղելի խնդիրների սոջև. մի կողմից՝ արդարացիորեն արտացոլել ժողովրդի կարծիքը, մյուս կողմից՝ տարբեր գաղափարական շարժումները միավորել և նպաստել բավականաչափ տրամաբանական և հետևողա-

կան քաղաքական կամքի ձևավորմանը: Այդպիսի հանգամանքներում «պայմանները, որոնք ապահովում են օրենսդիր իշխանություն ընտրելիս ժողովրդի կամքի ազատ արտահայտումը» արտահայտությունը ենթադրում է, արտահայտվելու ազատության հետ մեկտեղ (որն արդեն պաշտպանվում է կոնվենցիայի 10-րդ հոդվածով), «իրենց ընտրելու իրավունքը և իրենց ընտրվելու իրավունքն իրականացնելիս բոլոր քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը»:

Հարկ է նշել, որ ազատ և հավասար ընտրությունը նաև ենթադրում է «ձայների իրավական ուժի հավասարություն», այսինքն՝ սկզբունքորեն որևէ մեկ ձայն չի կարող ունենալ ավելի մեծ կշիռ, քան մյուսը, սակայն դա անպայմանորեն չի ենթադրում համամասնական ներկայացուցչական համակարգ:

Մեծ Բրիտանիայում փոքրամասնություն ունեցող կուսակցության գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը մեկնաբանել է N1 արձանագրության 3-րդ հոդվածը հետևյալ կերպ. տարբեր քաղաքական կուսակցությունների պետք է հնարավորություն տրվի ընտրություններին առաջադրել իրենց թեկնածուներին, սակայն դա չի ենթադրում այնպիսի ընտրական համակարգ, որը կերաշխավորի, որ յուրաքանչյուր թեկնածուին կամ կուսակցությանը տրված ընտրողների ձայների ընդհանուր թիվը պետք է անդրադառնա օրենսդրի կազմավորման վրա:

Պետությունների եվրոպական ընտանիքի մեջ մտնող յուրաքանչյուր երկրի ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հարցերի, այդ թվում նաև ընտրական իրավունքի ազատ արտահայտման սկզբունքի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2002 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին ընդունած համաեվրոպական ընտրական ընդհանուր սկզբունքները: Վենետիկի հանձնաժողովի ընդունած «Ընտրությունների անցկացման ժամանակ հանձնարարվող նորմերի ժողովածուում» նշվում է, որ ազատ քվեարկությունն իր մեջ ներառում է երկու տարբեր տեսանկյուններ, որոնք են՝ ընտրողի կողմից իր կարծիքն ազատորեն ձևավորելը և այդ կարծիքն ազատորեն արտահայտելը, այսինքն՝ քվեարկության ազատ ընթացակարգը և արդյունքների ճշգրիտ գնահատումը:

Վենետիկի հանձնաժողովի փաստաթղթում տրված է նշված տեսանկյունների բովանդակության բավականին մանրամասն նկարագրությունը: Համաձայն այդ փաստաթղթի՝ ընտրողների կարծիքի ձևավորման ազատությունը ենթադրում է, որ զանգվածային լրատվության միջոցների գործունեությանն առնչվող, ընտրության հետ կապված հայտարարությունների տա-

րաձման կամ հանրահավաքների կազմակերպման, ինչպես նաև կուսակցությունների և թեկնածուների ֆինանսավորման հարցերում պետական իշխանության մարմինները պետք է պահպանեն չեզոքություն: Միաժամանակ հանրային իշխանության մարմինները պարտավոր են իրականացնել այնպիսի պոզիտիվ լիազորություններ, ինչպիսիք են թեկնածուների և ընտրողների միջև կապի պահպանումը, ընտրացուցակների հետ ընտրողների ծանոթանալու հնարավորությունը և այլն:

Համաձայն Վենետիկի հանձնաժողովի՝ պետությունների հանրային իշխանության մարմինները պարտավոր են նաև երաշխավորել, որպեսզի ընտրողների կամաարտահայտությունը տեղի ունենա ազատ, և բացառվեն ընտրակեղծիքները:

Արտահայտվելու ազատության, իրավահավասարության և այլ իրավունքների հետ ընտրության իրավունքի փոխկապվածությանն է անդրադառնում նաև 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի b կետի 25-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների հանձնաժողովի 1996 թ. հուլիսի 12-ի 57-րդ նատաշրջանում ընդունված վերը նշված ընդհանուր մեկնաբանությունը, որը համապատասխան փոխկապվածություն է տեսնում դաշնագրի 19, 21 և 22-րդ հոդվածներով ընտրական գործընթացի սուբյեկտների համար նախատեսված իրավունքների՝ քաղաքական գործունեությանը ներգրավվելու ազատության, պետական մարմինների հետ բանավիճելու, խաղաղ երթեր և ցույցեր անցկացնելու ազատության, քննադատելու և ընդդիմանալու, քաղաքական նյութեր հրապարակելու, ընտրարշավներ անցկացնելու և քաղաքական գաղափարներ տարածելու հնարավորության միջև:

4. Զինվորական ծառայություն և ազատ ընտրելու ու ընտրվելու իրավունք

Շատ պետություններ զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության և դրանց քաղաքական չեզոքության ապահովման նպատակներով սահմանափակում են զինծառայողների ընտրական իրավունքները՝ հատկապես պասիվ ընտրական իրավունքի մասով:

Ի դեպ, պասիվ ընտրական իրավունքի մասով այս սահմանափակումը, որը հայտնի է որպես չընտրվելու կանոն, հաճախ տարածվում է ոչ միայն զինծառայողների, այլև ուրիշ պետական պաշտոնյաների վրա: Համաձայն այդ կանոնի՝ պետության Սահմանադրության կամ օրենքների մեջ նշված համապատասխան պաշտոնն զբաղեցնելու դեպքում քաղաքացին չի կարող պաշտոն զբաղեցնելուն զուգահեռ իր թեկնածությունն առաջադրել խորհրդարանական, նախագահական կամ մեկ այլ ընտրությունների ժամանակ: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի պաշտոնատար անձը թողնի իր զբա-

դեցրած պաշտոնը: Նման կարգ է սահմանված նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն. «Ազգային ժողովի՝ պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել Սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները (ծառայողները), զինծառայողները: Վերոհիշյալ անձինք Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու կարող են գրանցվել իրենց լիազորությունները ժամանակավորապես վայր դնելու դեպքում»: Այս կանոնի նպատակն է ապահովել հավասարությունը քաղաքացիների պասիվ ընտրական իրավունքի իրականացման ժամանակ և թույլ չտալ, որպեսզի որոշակի պաշտոն զբաղեցնող անձն ընտրությունների ժամանակ ի օգուտ իրեն օգտագործի այսպես կոչված «վարչական միջոցներ»¹⁵⁹: Պետական/քաղաքացիական ծառայողների մասով այս կանոնի նպատակն է նաև նրանց քաղաքական չեզոքության ապահովումը:

Ինչպես արդեն նշվեց, զինծառայողների մասով այս կանոնի նպատակը ոչ միայն թեկնածուների հավասարության և քաղաքական չեզոքության, այլև նրանց գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ապահովումն է: Այս նպատակներն ապահովելու համար երբեմն կիրառվում է նաև ակտիվ ընտրական իրավունքից զինծառայողներին զրկելու պրակտիկան, որը վիճահարույց է այն տեսանկյունից, որ զինծառայողներն ի վերջո համազգեստով քաղաքացիներ են և մյուսների հետ հավասար ժողովրդի մաս են կազմում ու, դրանով հանդերձ, կրում են նաև նրա ինքնիշխանության մասը, ուստի ունեն նաև այդ ինքնիշխանության իրականացման իրավունքը: Մեկ ուրիշ տեսանկյունից՝ զինծառայողներին ակտիվ ընտրական իրավունքով օժտելը նույնպես կարող է վիճահարույց լինել, քանի որ կարող է ծագել նրանց ազատ կամահայտնությունը երաշխավորելու հարցը: Թերևս այս պարագայում ևս կարելի է կիրառել եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի այն սկզբունքը, որ յուրաքանչյուր դեպք պետք է դիտարկել այդ երկրի քաղաքական իրողությունների լույսով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի համաձայն՝ պարտադիր ժամկետային զինծառայողները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին չեն մասնակցում, ինչը բխում է Սահմանադրության 104-րդ հոդվածի այն դրույթից, որ «Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում: Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ

¹⁵⁹ *Gitonas and Others v. Greece*, Judgment of 1 July 1997.

բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը»:

Պետությունում իշխանությունն իրականացվում է որպես պետական իշխանություն և որպես տեղական ինքնակառավարում, ուստի տեղական ինքնակառավարումը ևս անձի ինքնիշխանության իրացման ձև է: Քանի որ տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում և, փաստորեն, դրսևորվում է որպես համայնքի բնակիչների ինքնիշխանության արտահայտում, իսկ պարտադիր ժամկետային զինծառայողները համայնքի անդամ չեն, ուստի վերջիններս չեն կարող մասնակցել տեղական ինքնակառավարմանը և այդ հիմքով՝ նաև այդ ինքնակառավարման բաղկացուցիչ մաս կազմող՝ տեղական ընտրություններին:

Ինտերակտիվ խաղ

Քննարկում

Արդյո՞ք պետությունը պետք է ապահովվի արտասահմանում ժամանակավորապես բնակվող տասնութ տարին լրացած իր քաղաքացիների՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրություններին մասնակցելու հնարավորությունը, այդ թվում՝ հեռակա կարգով քվեարկությանը մասնակցելու հնարավորություն ապահովելու միջոցով:

Դերային խաղ

Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն: Այնուհետև դասախոսը ներկայացնում է իրական գործը և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկման համար հատկացվում է 15 րոպե ժամանակ:

Գործի փաստեր

Ոստիկանության նախկին աշխատակիցը ներգրավվել է տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի մեջ: Կաշառք վերցնելու և փաստաթղթերի յուրացման կասկածանքով վերջինիս նկատմամբ մինչդատական կալանք է նշանակվել: Հետագայում նա մեղավոր է ճանաչվել արարքի

կատարման մեջ և դատապարտվել է երեքուկես տարի ժամկետով ազատազրկման:

Ազատազրկման ընթացքում նա գրկվել է ընտրելու իրավունքից: Արդյո՞ք այդ սահմանափակումը խախտում է անձի ընտրելու իրավունքը:

Դասընթացավարը ներկայացնում է Կալմանովիցին ընդդեմ Ռումինիայի գործը¹⁶⁰:

Այդ գործով դատարանը հաստատված է համարել կոնվենցիայի 5-1, 5-3, 6-1, 8 և I արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտման փաստը: Մասնավորապես վերջինիս մասով դատարանը նշել է, որ նախագահական և խորհրդարանական ընտրություններին դիմողի ընտրելու իրավունքի սահմանափակումը 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքի իրականացման միջամտություն է հանդիսացել, ինչը չնայած նախատեսված է ներպետական օրենսդրությամբ, այնուամենայնիվ, սահմանափակման համար հիմք հանդիսացող նպատակները այս դեպքում անհամատեղելի չեն եղել վերոնշյալ իրավունքի իրականացման հետ (իրավունքի իրականացումը չի հակասել օրենքով սահմանված նպատակներին), օրինակ՝ հանցագործությունների կանխում/: Ավելին՝ դատարանը որոշել է, որ դատապարտվածների ընտրական իրավունքի ամբողջական սահմանափակումը անցնում է սահմանափակումներ իրականացնելու՝ պետություններին ընձեռնված հնարավորության սահմանները և անհամատեղելի է կոնվենցիայի դրույթների հետ:

¹⁶⁰ Calmanovici v. Romania, no. 42250/02, 1 July 2008.

Մոդուլ 11: Տեղաշարժվելու ազատություն

Տևողությունը՝ 1 ժամ 25 րոպե

Բովանդակություն

1. Տեղաշարժվելու ազատության իրավունքը
2. Զինձառայողների տեղաշարժվելու ազատության սահմանափակումները

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|---|--------------------------|--------------------|
| Տեղաշարժվելու ազատության իրավունքը | Պրեզենտացիա | 15 րոպե |
| Զինձառայողների տեղաշարժվելու ազատության սահմանափակումները | Պրեզենտացիա Քննարկում | 30 րոպե 40 րոպե |

Դասախոսության նյութ

1. Տեղաշարժվելու ազատության իրավունքը

Տեղաշարժվելու ազատությունը ներառում է հետևյալ երեք բաղադրիչները.

1. տեղաշարժվելու ազատություն պետության տարածքում,
2. կացարանի ընտրության ազատությունը պետության տարածքում,
3. ցանկացած պետության, ներառյալ իր, տարածքից դուրս գալու իրավունք:

Նշված իրավունքների սահմանափակմանն ուղղված որևէ միջամտություն պետք է լինի օրենքի հիման վրա, անհրաժեշտ՝ ժողովրդավարական հասարակությունում հասարակական կարգի, պետության անվտանգության, այլոց իրավունքների ազատությունների պաշտպանության և այլ սահմանված իրավաչափ նպատակների համար:

Պետության տարածքում տեղաշարժվելու և կացարան ընտրելու ազատությունը կարող է սահմանափակվել որոշակի տարածքներում, ինչը պետք է թելադրված և արդարացված լինի ժողովրդավարական հասարակության հանրային շահերով: Մինչդեռ պետության տարածքից դուրս գալու իրավունքը չի կարող սահմանափակվել, քանի որ օբյեկտիվորեն չի կարող խախտել այլ անձանց իրավունքները կամ ժողովրդավարական հասարակության հանրային շահերը կամ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ու նորմե-

րով սահմանափակման հիմք համարվող այլ իրավունքներ ու շահեր: Ավելին՝ պետությունը նեգատիվ պարտականություն է կրում այդ իրավունքն ապահովելու համար: Պետությունը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կխոչընդոտեն այդ իրավունքի իրականացմանը: Մասնավորապես այդպիսի խոչընդոտ կարող է լինել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջը, որի համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերում և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայականներում օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշում կատարելու համար՝ վավերական լինելու ժամկետի յուրաքանչյուր տարվա համար» անհրաժեշտ է վճարել պետական տուրք՝ բազային տուրքի չափով: Այս պահանջը, փաստորեն, Հայաստանի Հանրապետության տարածքը թողնելու իրավունքի իրացումը պետական տուրք մուծելու հանգամանքով պայմանավորող լրացուցիչ պայման է, որը նյութական միջոցներ չունենալու պարագայում անձը չի կարող բավարարել, ուստի չի կարող իրացնել նաև իր իրավունքը: Այս դեպքում պետությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերում և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայականներում օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարել անվճար:

Տեղաշարժվելու ազատությունը պետք է տարբերակել անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքից: Տարբերությունները ոչ միշտ կարող են ակնհայտ լինել, ուստի յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սահմանափակման բնույթը, տևողությունը, նպատակը և այլն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի¹⁶¹ գործով դիմողը իշխանությունների կողմից կասկածվել է իտալական մաֆիայի անդամ լինելու մեջ, և նրա նկատմամբ ոստիկանական հսկողություն է սահմանվել: Դիմողին արգելվել է լքել իր բնակության քաղաքի տարածքը, նա պարտավորեցվել է որոշակի օրերի ներկայանալ ոստիկանություն, բնակարանից դուրս չգալ ավելի վաղ, քան առավոտյան ժամը 7-ը և բնակարան վերադառնալ ոչ ուշ, քան մինչև երեկոյան ժամը 21-ը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշեց, որ տվյալ դեպքում դիմողի ազատության և անձեռնմխելիության իրավունքը չի խախտվել, սակայն խախտվել է նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը:

¹⁶¹ No 12954/87, 22.02.1994, 18 EHRR 237.

Տեղաշարժվելու ազատության իրականացման համար կարևոր նախապահանջ է պետության տարածքում գտնվելու օրինականության հանգամանքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Պիեռնոնտոն ընդդեմ Ֆրանսիայի¹⁶² գործով դիմողը պնդել է իր տեղաշարժման ազատության խախտման մասին՝ նշելով, որ ինքը վտարվել է ֆրանսիական Պոլիսեզիայի տարածքից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշեց, որ քանի որ դիմողը օրենքով սահմանված կարգով է վտարվել պետության տարածքից, ուստի վտարման որոշումը ստանալու պահից նրա գտնվելը այդ պետության տարածքում օրինական չի եղել, ուստի տեղաշարժման ազատության նկատմամբ միջամտության մասին խոսելն այլևս անտեղի է:

Անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի, այդ թվում՝ անձնագրի առգրավումը կարող է հանգեցնել անձի տեղաշարժման ազատության իրավունքի խախտման: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Նապիջալոն ընդդեմ Խորվաթիայի¹⁶³ գործով դիմողի անձնագիրը խորվաթական սահմանի վրա մաքսային ծառայողի կողմից առգրավվել է, քանի որ դիմողը հրաժարվել է վճարել մաքսային տուգանք: Դիմողի անձնագիրը տևական ժամանակ չվերադարձնելու փաստը գնահատվել է որպես անհամաչափ միջամտություն դիմողի ազատ տեղաշարժվելու իրավունքին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նրա նկատմամբ մաքսային կանոնները խախտելու որևէ մեղադրանք չի առաջադրվել:

Ամրագրումը միջազգային և ներպետական իրավական նորմերում

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածը սահմանում է.

Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 13-րդ հոդվածը սահմանում է.

¹⁶² No 15773/89, 27,4,95, 1995, 20 EHRR 301.

¹⁶³ No 66485/01, 13,11,03, 15 BHRC 422.

1. Յուրաքանչյուր ոք ազատորեն տեղից տեղ փոխադրվելու և ցանկացած պետության սահմաններում բնակավայր ընտրելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքելու ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը, և վերադառնալու իր երկիրը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածը սահմանում է.

1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու ազատություն:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական երկրից մեկնելու իրավունք:

3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, և համատեղելի են սույն դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:

4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

2. Ջինվորական ծառայողների տեղաշարժման ազատությունը

Ջինվորական ծառայության մեջ գտնվող անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակված է օրենքով, քանի որ զինվորական ծառայության առաջնային նպատակը երկրի և ժողովրդի անվտանգության պաշտպանությունն է: Հաշվի առնելով զինվորական ծառայողի առաքելության բացառիկ կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայողի տեղաշարժվելու ազատությունը սահմանափակված է օրենքով: Այդպիսի օրենք է հանդիսանում ՀՀ քրեական օրենսգիրքը, որով հանցագործություն է համարվում գորամասը ինքնագլուխ լքելը: Ջինվորական ծառայության ժամանակահատվածում անձի տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը պատկանում է այն իրավաչափ սահմանափակումների շարքին, որոնք հնարավոր են համարում այդ ազատության սահմանափակումը այն դեպքում, երբ նման սահմանափակումը օրենքի հիման վրա է և կիրառվում է ազգային անվտանգության ապահովման համար:

Ինտերակտիվ խաղ

Քննարկում

Ջինծառայողներին չի թույլատրվում ծառայության ընթացքում ճանապարհորդել արտասահման: Արդյո՞ք դա խախտում է տեղաշարժվելու ազատության իրավունքը:

Մոդուլ 12: Խտրականության արգելքը

Տևողությունը՝ 2 ժամ 45 րոպե

Բովանդակություն

1. Խտրականության հասկացությունը. արգելք և իրավունք
2. Փոխկապակցվածությունը և պայմանավորվածությունը՝ պաշտպանվող իրավունքներով և ազատություններով
3. Խտրականություն տարբեր հիմքերով

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|--|----------------------|--------------------------|
| Խտրականության հասկացությունը. արգելք և իրավունք | Պրեզենտացիա | 15 րոպե |
| Փոխկապակցվածությունը և պայմանավորվածությունը պաշտպանվող իրավունքներով և ազատություններով | Պրեզենտացիա | 30 րոպե |
| Խտրականություն տարբեր հիմքերով | Քննարկում Դատախաղ | 30 րոպե 1 ժամ 30 րոպե |

Դասախոսության նյութ

1. Խտրականության հասկացությունը

Խտրականությունը իրավունքի կամ ազատության իրականացման խոչընդոտ է, ուստի խտրականության արգելքի նպատակը այդ խոչընդոտը բացառելն է:

ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը սահմանում է.

«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական և սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Խտրականության տեսակներն են.

- խտրականություն սեռի հատկանիշով,
- խտրականություն ռասայի և մաշկի գույնի հատկանիշով,
- խտրականություն լեզվի հատկանիշով,
- խտրականություն կրոնի հատկանիշով,
- խտրականություն քաղաքական կամ այլ համոզմունքի հատկանիշով,
- խտրականություն ազգային/էթնիկական կամ սոցիալական ծագման հատկանիշով,
- խտրականություն ազգային փոքրամասնությանը պատկանելու հատկանիշով,
- խտրականություն գույքային դրության հատկանիշով,
- խտրականություն ծննդի հատկանիշով,
- խտրականություն այլ դրության հատկանիշով:

Խտրականության դրսևորման տեսակների այս ցանկը սպառնիչ չէ և չի բացառում խտրականության այլ տեսակներ ևս:

1.1. Ընդհանուր դրույթներ. արգելք և իրավունք

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածն արգելում է, որ անձինք խտրականության ենթարկվեն, սակայն միայն կոնվենցիայով և նրա արձանագրություններով նախատեսված իրավունքներից ու ազատություններից օգտվելու մասով. այն չափով, որ չափով պայմանավորվող պետությունները վերջիններս վավերացրել են: Այդպիսով՝ 14-րդ հոդվածը կարող է դիտարկվել միայն կոնվենցիայի այլ նորմատիվ դրույթների հետ համատեղ, որոնց նա պետք է այս պարագայում լրացնի: Դատարանը այս մասին նշել է. «14-րդ հոդվածը չունի ինքնուրույն նշանակություն, այն լրացնում է կոնվենցիայի և արձանագրությունների այլ նորմատիվ հոդվածները, ապահովում է առանձին անձանց կամ համադրելի իրավիճակներում գտնվող անձանց խմբերի պաշտպանու-

թյունը խտրականության բոլոր տեսակներից՝ այդ հոդվածներով պաշտպանվող իրավունքները և ազատություններն իրականացնելիս»¹⁶⁴:

Այս իրավիճակը փոփոխվելու միտում ունի: Կոնվենցիայի՝ ստորագրման համար բաց 12-րդ արձանագրությունը նախատեսում է «ազգային օրենսդրությամբ նախատեսված ցանկացած իրավունքից» օգտվելու խտրականության ընդհանուր արգելք և արգելում է «պետական իշխանության կողմից ցանկացած խտրականություն» (արձանագրության 1-ին հոդված): Ակնհայտ է, որ այս արձանագրությունը կոնվենցիայի մասնակից պետություններում պետք է ձևավորի խտրականության ընդհանրական արգելք, ինչպես նաև հանգեցնի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասության զգալի ընդլայնման (*ratione materiae*):

2. Փոխկապակցվածությունը և պայմանավորվածությունը պաշտպանվող իրավունքներով և ազատություններով

Չնայած 14-րդ հոդվածը չունի ինքնուրույն նշանակություն, կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացման ժամանակ այն ապահովում է առանձին անձանց կամ համադրելի իրավիճակներում գտնվող անձանց խմբերի պաշտպանությունը խտրականության բոլոր տեսակներից: Ամեն ինչ այնպես է տեղի ունենում, կարծես թե այս նորմը կազմում է իրավունք կամ ազատություն ամրագրող ցանկացած նորմի օրգանական մասը: Մրանից հետևում է, որ 14-րդ հոդվածը կիրառվում է միայն այն դեպքում, երբ վեճի հանգամանքները ընկնում են մյուս նորմատիվ դրույթներից առնվազն մեկի գործողության տակ: Հարկ է նշել, որ խտրականության տեսակների ցանկը, որոնք այդ հոդվածն արգելում է, ձեռք է բերում անսպառ, այլ ոչ սահմանափակող բնույթ:

14-րդ հոդվածը ճանաչված իրավունքների և ազատությունների իրականացման պարագայում չի արգելում որևէ տարբերություն: Իրականում ազգային իշխանությունները բախվում են այնպիսի իրավիճակների, որոնք պահանջում են տարբեր իրավաբանական լուծումներ: Ընդհակառակը, նշված նորմն արգելում է խտրականությունը, բացի համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ օբյեկտիվ ողջամիտ հիմնավորման դեպքերից: Այդպիսի հիմնավորման առկայությունը պետք է գնահատվի դիտարկվող միջոցի նպատակի և հետևանքների նկատմամբ: Կոնվենցիայով ամրագրված իրավունքի իրականացման տարբերությունը պետք է հետապնդի օրինական նպատակ: Ընդամին, 14-րդ հոդվածը նաև խախտվում է,

¹⁶⁴ Darby v. Sweden, 23 October 1990, § 44, Series A no. 187.

երբ պարզորոշ կերպով հաստատված է, որ կիրառվող միջոցների և նախատեսվող նպատակի միջև գոյություն չունի ողջամիտ համաչափություն:

Որպեսզի պարզվի, թե արդյոք անձը խտրական վերաբերմունքի գոհ է դարձել, անհրաժեշտ է, 1) որպեսզի նա արժանացած լինի այլ վերաբերմունքի, քան այլ անձինք՝ համանման պայմաններում և իրավիճակներում, և 2) չլինի տարբերակված ու խտրական վերաբերմունքի արդարացման ողջամիտ ու ծանրակշիռ փաստարկ:

Անձը, որը պնդում է, թե դարձել է խտրական վերաբերմունքի գոհ, պետք է կարողանա հիմնավորել, որ ենթարկվել է նվազ բարենպաստ՝ խտրական վերաբերմունքի որևէ հիմքով, ինչպիսին կարող են լինել տարիքը, սեռը, քաղաքական հայացքները և այլն: Այդուհանդերձ, խտրականություն չի դիտարկվում այն վերաբերմունքը, որը համանման հանգամանքներում այլ անձանց նկատմամբ չի կիրառվել: Այս կապակցությամբ դատարանը նշել է. «Դատարանը հիշեցնում է, որ կոնվենցիայի 14-րդ հոդվածը պաշտպանություն է տրամադրում կոնվենցիայի այլ նորմատիվ հոդվածներով երաշխավորված իրավունքներից ու ազատություններից օգտվելու հետ կապված: Կիրառման ցանկացած տարբերություն, սակայն, ինքնաբերաբար չի հանգեցնի այս հոդվածի խախտման: Պետք է հաստատել, որ համանման կամ համադրելի իրավիճակներում գտնվող անձինք այդ ոլորտում օգտվում են արտոնաբար կիրառումից, և որ այդ խտրականությունը չունի որևէ օբյեկտիվ կամ բանական հիմնավորում: Ըստ էության, պայմանավորվող պետություններն օգտվում են որոշակի հայեցողական ազատությունից, որպեսզի որոշեն, թե իրավիճակային տարբերություններն արդյո՞ք և ի՞նչ չափով են արդարացնում իրենց իրավաբանական կիրառության համանման այլ տարբերությունների հարաբերություններում»¹⁶⁵:

Ինչ վերաբերում է խտրական վերաբերմունքի կիրառման արդարացմանը, ապա պետք է նշել, որ առկա է իրավաչափ նպատակ, որին ծառայում է խտրականությունը, և որ այն միջոցները, որոնք օգտագործվել են այդ նպատակին հասնելու համար, պետք է համաչափ լինեն փնտրվող նպատակին:

Չնայած պետությանը լայն հայեցողություն է տրված որոշելու այն հիմքերը, որոնց առկայությունը խտրական վերաբերմունքը կարող է արդարացնել, սակայն խտրական վերաբերմունքի արդարացման հիմքերը պետք է ավելի քան ծանրակշիռ լինեն: Այդ կապակցությամբ դատարանը հետևյալ դիրքորոշումն է հայտնել. «Պայմանավորվող պետություններն օգտվում են

¹⁶⁵ National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v. the United Kingdom, 23 October 1997, Reports of Judgments and Decisions 1997-VII.

որոշակի հայեցողական ազատությամբ, որպեսզի որոշեն, թե իրավիճակային տարբերություններն արդյո՞ք և ինչ չափով են արդարացնում իրենց իրավաբանական կիրառության համանման այլ տարբերությունների հարաբերություններում» (...): Հայեցողական ազատության ծավալը ուրվագծվում է՝ կախված հանգամանքներից, կիրառման ոլորտներից և համատեքստից»:¹⁶⁶

«Դատարանի պրակտիկայի համաձայն, 14-րդ հոդվածի իմաստով տարբերությունը խտրական է, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում, այսինքն, եթե այն չի հետապնդում օրինական նպատակ կամ կիրառվող միջոցների և նախատեսված նպատակի միջև բացակայում է բանական համաչափությունը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային գործերով հետևյալ մեկնաբանություններն է տվել խտրականության արգելքին՝ պայմանավորված հանգամանքների համանմանությամբ և կիրառված խտրականության համաչափությամբ ու խտրականության տեսակներով:

3. Խտրականություն տարբեր հիմքերով

Խտրականության մասին դրույթների անսպառ բնույթը: Ցանկը, որ պարունակում է 14-րդ հոդվածը, «Սպառիչ չի համարվում, ինչը հատկապես ակնհայտորեն հաստատում է «մասնավորապես» մակբայը (անգլերեն "any ground such as"):

Անհատական բնութագրիչներից բխող խտրական վերաբերմունք: «14-րդ հոդվածը երաշխավորված իրավունքների և ազատությունների բնագավառում արգելում է խտրական վերաբերմունքը, որի հիմնավորումը կամ պատճառը անհատական բնութագիրն է («դրությունը»), ըստ որի անձինք կամ անձանց խմբերը տարբերվում են միմյանցից»¹⁶⁷:

Պետության համար միշտ վտանգավոր է այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք ընտրողական կերպով սահմանափակում են իրավունքներից և ազատություններից օգտվելը՝ տարբեր կերպ վարվելով անձանց խմբերի և անհատների հետ: Դա կարող է արդարացվել ծայրահեղ դեպքերում, օրինակ՝ հանդուրժողականության արժեքները պաշտպանելու նպատակով, որոնց վրա հիմնված են ժողովրդավարական հասարակությունները:

Այնուամենայնիվ, այլ տարբերակված վերաբերմունքը պահանջում է խիստ վերահսկողություն և պետք է արդարացվի միայն հատուկ հանգամանքների առկայության դեպքում: Այսպիսով, օրինակ, դատարանը չպետք

¹⁶⁶ Rasmussen v. Denmark, 28 November 1984, Series A no. 87, Inze v. Austria, 28 October 1987, Series A no. 126.

¹⁶⁷ Kjeldsen, Busk Madsen and Pedersen v. Denmark, 7 December 1976, Series A no. 23.

է հանդուրժի խտրականությունը, որը, ըստ էության, թելադրված է կրոնական համոզմունքներով: Նա նաև շատ պահաջկոտ (խիստ) է այն ամենի հանդեպ, ինչը վերաբերում է կանանց և տղամարդկանց միջև տարբերակված վերաբերմունքին: Քանի որ սեռերի հավասարության աստիճանական զարգացումը մեր օրերում կարևոր նպատակ է, որը հետապնդում են բոլոր պայմանավորվող պետությունները, միայն շատ ծանրակշիռ պատճառները կարող են հանգեցնել այն բանին, որ կոնվենցիայի հետ համատեղելի համարվի սեռի հատկանիշով ցանկացած խտրականություն:

Խտրականություն սեռի հատկանիշով: Ընտանեկան կյանքի հարգանքը և մոր ու հոր միջև խտրականությունը երեխայի դաստիարակության արձակուրդի նպաստը միայն առաջինին տրամադրելու առումով: «Հղիության արձակուրդը և նրան առնչվող նպաստները առաջին հերթին ձգտում են մորը ծննդաբերության հոգնածությունից կազդուրվելու և երեխային կրծքով կերակրելու հնարավորություն ընձեռել, եթե նա ցանկանում է այդ: Երեխայի դաստիարակության արձակուրդը և դրա նպաստը վերաբերում է հաջորդ ժամանակահատվածին և նպատակ ունի նպաստը ստացողին հնարավորություն ընձեռել անձամբ զբաղվելու երեխայով: Այսպես, չժխտելով հոր և մոր տարբերությունները վերջինիս հետ հարաբերության առումով, դատարանը առաջնորդվում է այն հիպոթեզից, որ այդ ժամանակահատվածում երեխայի նկատմամբ խնամք իրականացնելու համար ծնողները գտնվում են «համանման իրավիճակներում»:¹⁶⁸

Խտրականություն սեռի հատկանիշով: Ընտանեկան կյանքի հարգանքը և մոր ու հոր միջև խտրականությունը երեխայի դաստիարակության արձակուրդի նպաստը միայն առաջինին տրամադրելու առումով: «Պետության կողմից ըստ ընտրության ծնողներին հատկացվող ֆինանսական օգնության գաղափարը, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի չաշխատել և զբաղվել երեխայով, հարաբերականորեն նոր է: Սկզբում այդ սոցիալական միջոցները, ինչպիսիք են երեխայի դաստիարակության նպաստի հատկացումն էր, ձգտում էին առաջին հերթին պաշտպանել մորը և երեխային խնամելու հնարավորություն ընձեռել նրան: Առաջընթաց է այն, որ Պայմանավորվող պետությունները, երեխայի դաստիարակության հարցում հասարակության զարգացումը փոխադրելով տղամարդկանց և կանանց միջև պարտականությունների ավելի հավասար բաշխման ուղղությամբ, հայրերի վրա տարածվող միջոցներ ձեռնարկեցին, որոնք նրանց հնարավորություն են ընձեռում օգտվել երեխայի դաստիարակության արձակուրդի նպաստից»:¹⁶⁹

¹⁶⁸ Petrovic v. Austria, 27 March 1998, § 36, Reports of Judgments and Decisions 1998-II.

¹⁶⁹ Petrovic v. Austria, 27 March 1998, § 40, Reports of Judgments and Decisions 1998-II.

Խտրականություն սեռի հատկանիշով: Ընտանեկան կյանքի հարգանքը և մոր ու հոր միջև խտրականությունը երեխայի դաստիարակության արձակուրդի նպաստը միայն առաջինին տրամադրելու առումով: Պայմանավորվող պետությունների միջև ընդհանուր հայտարարի բացակայությունը: «Այսօրվա դրությամբ պայմանավորվող պետությունների իրավական համակարգերի այս ոլորտներում առկա է տարատեսակություն: Չնայած նրանց մեծ մասը ընդունել է արդյունավետ միջոցներ՝ հայրերի՝ երեխայի դաստիարակության արձակուրդից օգտվելու նպատակով, այլ է վիճակը այդպիսի արձակուրդի նպաստից օգտվելու առումով, որը միայն մի քանի պետություններ են տրամադրում հայրերին»:¹⁷⁰

Անձնական և ընտանեկան կյանք: Խտրական վերաբերմունք: Ամուսնալուծությունից հետո ծնողին երեխային խնամելու հնարավորություն ընձեռե՞լու մասին որոշումը, ծնողական իշխանության տրամադրումը մորը միայն հոր սեռական կողմնորոշման պատճառով: «Հարկ է փաստել, հաշվի առնելով, որ վճարելի դատարանը դիմողի սեռական կողմնորոշմանը վերաբերող նկատառումներով թելադրված տարբերակում է կատարել, որը չի կարելի հանդուրժել կոնվենցիային համապատասխան: Այսպիսով՝ դատարանը չի կարող եզրակացություն անել կիրառվող միջոցների և նախատեսվող նպատակի միջև բանական համաչափության գոյության մասին. հետևաբար տեղի է ունեցել 8-րդ հոդվածի՝ 14-րդ հոդվածի հոդվածի հետ համատեղ, խախտում»:¹⁷¹

Խտրականություն հաշմանդամի նկատմամբ: Պահանջվող իրավունքը (մասնավոր լողափից օգտվելու հնարավորություն ստանալը) չի ներառվում 8-րդ հոդվածով: «Դատարանի պրակտիկայի համաձայն՝ «14-րդ հոդվածը լրացնում է կոնվենցիայի և արձանագրությունների մյուս նորմատիվ հոդվածները: Այն չունի ինքնուրույն նշանակություն, քանի որ վերաբերում է միայն դրանց երաշխավորած «իրավունքներից ու ազատություններից օգտվելուն»: Բնարկե, այն կարող է կիրառվել նույնիսկ առանց դրանց պահանջների խախտման, և այդ չափով, այն ունի ինքնուրույն նշանակություն, սակայն այն չի կարող կիրառվել, եթե վեճի հանգամանքները չեն ընկնում նշված նորմերից առնվազն մեկի գործողության տակ»: Քանի որ դատարանը հանգեց 8-րդ հոդվածը չկիրառելու մասին եզրակացության, ապա այդ դեպքում 14-րդ հոդվածը չի կարող ուշադրության առնվել»¹⁷²:

¹⁷⁰ Petrovic v. Austria, 27 March 1998, Reports of Judgments and Decisions 1998-II.

¹⁷¹ Salgueiro da Silva Mouta v. Portugal, no. 33290/96, § 36, ECHR 1999-IX.

¹⁷² Botta v. Italy, 24 February 1998, § 39, Reports of Judgments and Decisions 1998-I.

Ամուսնական կամ արտաամուսնական կյանքում ծնված երեխաների միջև հավասարություն: «Կոնվենցիան գործող փաստաթուղթ է, եթե այն մեկնաբանվի արդիական պայմանների լույսով (...): Այսպես՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները քաղաքացիական բնույթի իրավունքների ոլորտում կարևոր նշանակություն են տալիս ամուսնական կամ արտաամուսնական կյանքում ծնված երեխաների միջև հավասարությանը (...): Միայն ծանրակշիռ պատճառները կարող են հանգեցնել այն բանին, որ կոնվենցիայի հետ համատեղելի համարվի արտաամուսնական կյանքում ծնվելու հատկանիշով տարբերությունը»¹⁷³:

Անհավասար վերաբերմունք բանակում: «Բանակի աստիճանակարգային կառուցվածքը հանգեցնում է կոչումից կախված տարբերությունների հաստատման: Տարբեր կոչումների համապատասխանում են պատասխանատվության տարբեր աստիճաններ, ինչն իր հերթին արդարացնում է կարգապահական կանոններ կիրառելու հարցում որոշակի անհավասարությունը: Այդպիսի անհավասարությունը ավանդաբար հանդիպում է պայմանավորվող պետություններում և թույլատրվում է միջազգային մարդասիրական իրավունքով (...): Այս բնագավառում եվրոպական կոնվենցիան իրավասու ազգային մարմիններին տրամադրում է զգալի հայեցողական ազատություն»¹⁷⁴:

Տարբերություններ զինվորական քրեական վարույթի ոլորտում: «Չնայած քաղաքացիական անձանց նկատմամբ կարգապահական վարույթը չի ուղեկցվում քրեական դատավարության երաշխիքներով, այն իր կողմից էական արտոնություններ է տրամադրում նրանց, ովքեր իրեն ենթակա են (...): Բարձր պայմանավորվող կողմերի օրենսդրություններում այս երկու վարույթների միջև տարբերությունները բացատրվում են բանակային և քաղաքացիական կյանքի պայմանների տարբերություններով: Դրանք չեն կարող 14-րդ և 6-րդ հոդվածների համադրության համատեքստում զինվորականների նկատմամբ ճամաչվել խտրական»¹⁷⁵:

Արդար դատական քննություն: *Պետության մի քանի մասերում կիրառվող օրենսդրության տարբերությունները (Միացյալ Թագավորություն):* *Խտրականություն (ազգային ծագում, ազգային փոքրամասնություն):* «Հարցը, թե կարող է արդյոք անձը պահանջել իրավունքը, որը բխում է օրենսդրությունից, կարող է կախված լինել դիտարկվող օրենսդրության աշխարհագրական նշանակությունից և այն տեղից, որտեղ գտնվում է շահագրգիռ անձը

173 Inze v. Austria, 28 October 1987, § 41, Series A no. 126.

174 Engel and Others v. the Netherlands, 8 June 1976, § 72, Series A no. 22.

175 Engel and Others v. the Netherlands, 8 June 1976, § 92, Series A no. 22.

գործողությունները կատարելու ժամանակ: Կասկածյալ ձերբակալվածների հետ տարբեր կերպ են վարվում (...). այդ տարբերությունը բացատրվում է ոչ թե անձնական բնութագրիչներով, ինչպիսիք են ազգային ծագումը կամ ազգային փոքրամասնությանը պատկանելը, այլ վայրի աշխարհագրական տեղակայմամբ, որտեղ շահագրգիռ անձը ձերբակալվել է և կալանքի վերցվել: Այսպիսով՝ օրենսդրությունը կարող է հաշվի առնել օբյեկտիվ և բանական ծագում ունեցող տարբերությունները և տարածաշրջանային բնութագրիչները: Տվյալ դեպքում այդ տարբերությունը կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով խտրականության վերաբերմունք չէ»¹⁷⁶:

Խտրականություն. ազգության հատկանիշի հիմքով տարբերակված վերաբերմունք: «14-րդ հոդվածի իմաստով տարբերությունը խտրական է, եթե այն չունի օբյեկտիվ և բանական հիմնավորում, այսինքն, եթե այն չի հետապնդում օրինական նպատակ, կամ եթե չկա բանական համաչափություն կիրառվող միջոցների և նախատեսվող նպատակի միջև: Բոլոր դեպքերում պայմանավորվող պետություններն օգտվում են որոշակի հայեցողական ազատությունից, որպեսզի որոշեն, թե իրավիճակային տարբերություններն արդյոք ինչ չափով են արդարացնում իրենց վերաբերմունքը համանման այլ տարբերությունների հարաբերություններում: Սակայն միայն ծանրակշիռ պատճառները կարող են հանգեցնել այն բանին, որ կոնվենցիայի հետ համատեղելի համարվի ազգային հատկանիշով խտրականությունը»¹⁷⁷:

Տարբերություն, որ գոյություն ունի դիտավորությամբ վնաս հասցնելու դեպքերում կիրառվող վաղեմության մասին կանոնների միջև և պարտականությունն առանց դիտավորության խախտելու հետևանքով առաջացած վնասի դեպքերում կիրառվող կանոնները: «Դիտավորությամբ հասցված վնասի և դժբախտ դեպքի գոհերը 14-րդ հոդվածի նպատակներով չեն կարող համարվել համանման իրավիճակներում գտնվողներ: Ցանկացած ներքին դատական համակարգ կարող է ճանաչել գանգատարկուների շատ տարբեր կատեգորիաներ, որոնք բաժանվում են ըստ կրած վնասի տեսակի, գանգատի իրավաբանական հիմնավորման կամ այլ գործոնների, ընդ որում այդ կատեգորիաները ենթարկվում են տարբեր սկզբունքների և վարույթների»¹⁷⁸:

¹⁷⁶ Magee v. the United Kingdom, no. 28135/95, § 50, ECHR 2000-VI.

¹⁷⁷ Gaygusuz v. Austria, 16 September 1996, § 42, Reports of Judgments and Decisions 1996-IV.

¹⁷⁸ Stubbings and Others v. the United Kingdom, 22 October 1996, §. 73., Reports of Judgments and Decisions 1996-IV.

Ինտերակտիվ խաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դերային խաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն: Այնուհետև դասախոսը ներկայացնում է իրական գործը և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկմանը հատկացվում է 15 րոպե ժամանակ:

Փաստեր

Ամուսինը պարբերաբար բռնություն է գործադրել իր կնոջ և դստեր նկատմամբ: Դանակով հարձակվել է նրանց վրա, նույնիսկ իր մեքենայով անցնել կնոջ ու դստեր վրայով՝ ծանր մարմնական վնասվածքներ պատճառելով նրանց, սակայն նրանք ողջ են մնացել՝ ստանալով ծանր վնասվածքներ:

Բռնության յուրաքանչյուր դեպքից հետո կանայք դիմել են իշխանություններին, սակայն որոշ ժամանակ անց հետ են վերցրել իրենց բողոքները, և քննությունները դադարեցվել են, քանի որ իշխանությունների ներկայացուցիչները փորձել են միջնորդի դերակատարություն ստանձնել և խնդիրն այլ կերպ լուծել:

Դրանից հետո մայրը և դուստրը որոշել են տեղափոխվել բնակվելու մեկ այլ քաղաք, սակայն ամուսինը կանգնեցրել է նրանց տանող մեքենան և զենքից կրակ արձակել, որի հետևանքով կինը տեղում մահացել է:

Արդյո՞ք առկա է խտրականություն: Ո՞րն է իշխանությունների դերը՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովել, թե՞ այլ կերպ լուծել հարցը:

Այնուհետև անհրաժեշտ է ավարտել քննարկումը և հայտնել իրական գործի ելքը, ըստ որի, ի թիվս այլ խախտումների առկա է եղել նաև դիմողի նկատմամբ խտրական վերաբերմունք, ինչպես այն լուծվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից¹⁷⁹:

¹⁷⁹ Opuz v. Turkey, no. 33401/02, ECHR 2009.

Մոդուլ 13: Այլընտրանքային ծառայություն

Տևողությունը՝ 2 ժամ 35 րոպե

Բովանդակություն

1. Այլընտրանքային ծառայության հասկացությունը
2. Այլընտրանքային ծառայության անցնելու կարգը, սուբյեկտներ, ժամկետներ
3. Այլընտրանքային ծառայողների իրավունքները և պարտականությունները, պատասխանատվությունը

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|--|----------------------------|--------------------------|
| Այլընտրանքային ծառայության հասկացությունը | Պրեզենտացիա | 15 րոպե |
| Այլընտրանքային ծառայության անցնելու կարգը, սուբյեկտներ, ժամկետներ | Պրեզենտացիա | 30 րոպե |
| Այլընտրանքային ծառայողների իրավունքները և պարտականությունները, պատասխանատվությունը | Պրեզենտացիա Դերային խաղ | 20 րոպե 1 ժամ 30 րոպե |

Դասախոսության նյութ

Յուրաքանչյուր անձի՝ կրոնի կամ համոզմունքների նկատմամբ հարգանքը իրավաբանորեն ձևակերպված պահանջ է, որ բխում է մարդու իրավունքները հարգելու իմպերատիվ անհրաժեշտությունից: Այս իրավունքի իրականացումը երբեմն բխվում է հասարակության համար կարևոր այլ պարտադիր գործառնությունների իրականացման պահանջի հետ, ինչը բացառում է դրանց համատեղ կամ զուգահեռ իրականացումը: Եթե անձը իր կրոնական կամ այլ համոզմունքների բերումով չի կարող զենք վերցնել կամ զինվորական ծառայություն կրել, ապա նման անձին զինվորական ծառայության գորակոչելը ոչ միայն աննպատակ է դառնում արդյունավետ զինվորական ծառայություն և պետության պաշտպանությունն իրականացնելու տեսանկյունից, այլև ոտնահարում է այդ անձի՝ կրոն կամ համոզմունքներ ունենալու իրավունքը:

Այս իրավունքի ճանաչումը սկիզբ է առել վերջին հիսուն տարիների ընթացքում՝ մտքի, խղճի և կրոնի իրավունքի պահպանության մասով պետու-

թյունների միջազգային պարտավորությունների մեկնաբանությամբ: Մասնավորապես, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածի առթիվ ընդհանուր բնույթի դիտարկման մեջ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովն ընդունել է հետևյալ հայտարարությունը. «Դաշնագրում ուղղակիորեն չի խոսվում խղճի նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի մասին, սակայն հանձնաժողովը կարծում է, որ այդպիսի իրավունքը բխում է 18-րդ հոդվածից, քանի որ գենք կիրառելու վերաբերյալ պարտականությունները կարող են լուրջ հակասության մեջ մտնել խղճի ազատության և կրոն կամ համոզմունք դավանելու իրավունքի հետ»:

Այս իրավունքն առաջին անգամ սահմանվել է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայում¹⁸⁰, որի 10.2-րդ հոդվածում նշվում է. «Կրոնական-էթիկական նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչվում է ազգային օրենսդրությանը համապատասխան, որը կանոնակարգում է դրա իրականացումը»:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը 2006 թ. հաստատեց կրոնական-էթիկական նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի նշանակությունը՝ այն սահմանելով որպես. «մտքի, խղճի, կրոնի և համոզմունքների ազատության իրավունքի էական բաղադրիչ, ինչը երաշխավորված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայով»: Խորհրդարանական վեհաժողովը Նախարարների խորհրդին է դիմել կրոնական-էթիկական նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ընդունման համար՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայում՝ 4.3. b և 9 հոդվածներում լրացուցիչ արձանագրություններ ընդունելու միջոցով լրացումներ կատարելու ձևով¹⁸¹:

Այս խնդիրը Հայաստանում տևական քննարկումների է ենթարկվել, և ի վերջո ընդունվել և գործողության մեջ է դրվել այլընտրանքային զինվորական ծառայության հետ կապված հարցերը կարգավորող օրենք: Դրանից հետո Հայաստանի Հանրապետությունում շարունակում է կիրառվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունը, սակայն հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարման ապահովման

¹⁸⁰ Charter of Fundamental Rights of the European Union, Official Journal of the European Communities, 2000/C 364/01, 18 December 2000.

¹⁸¹ Руководство по правам человека и основным свободам военнослужащих, перевод с английского, БДИПЧ, 2008, стр. 91.

համար 2003 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Այլընտրաքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 2004 թ. հուլիսի 1-ից, հնարավորություն ստեղծվեց կրոնական դավանանքի կամ համոզմունքների բերումով զենք վերցնելուց կամ զինվորական ծառայություն կրելուց հրաժարվող քաղաքացիների համար պարտադիր զինվորական ծառայությունը փոխարինել այլընտրանքային ծառայությամբ:

1. Այլընտրանքային ծառայության հասկացությունը

Այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու կամ զինվորական ծառայություն կրելու հետ: Նման ծառայությունը կարող է անցկացվել ինչպես զինվորական¹⁸², այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Այն չունի պատժի, անձի պատվի և արժանապատվության նվաստացման բնույթ:

Այլընտրանքային ծառայության տեսակները երկուսն են՝

ա) այլընտրանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն,

բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

2. Ովքեր կարող են այլընտրանքային ծառայություն կատարել

Այլընտրանքային զինվորական ծառայություն կարող են կատարել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այնպիսի կրոնական դավանանք կամ համոզմունքներ, որոնց հակասում է զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, զենք կրելը, պահելը, պահպանելը, օգտագործելը: Հարկ է նշել, որ նշված հիմքերով այլընտրանքային զինվորական ծառայություն անցնելու համար կարող են դիմել միայն այն արական սեռի¹⁸³ ներկայացուցիչները, ովքեր դեռ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության չեն անցել:

Նրանք, ովքեր արդեն զինվորական ծառայություն են կրում, չեն կարող հրաժարվել զինվորական ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայություն: Մա վերոհիշյալ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված

¹⁸² Բոլոր դեպքերում, ծառայությունը պետք է իրականացվի քաղաքացիական անձնակազմի վերահսկողության ներքո:

¹⁸³ Այստեղ նշված է՝ արական սեռի ներկայացուցիչներ, քանի որ պարտադիր զինվորական ծառայությունը ՀՀ նախատեսված է միայն արական սեռի ներկայացուցիչների համար:

իրավական նորմ է, որը որոշակի հակասության մեջ է մտնում հենց նույն օրենքի նպատակի հետ, ինչը յուրաքանչյուր անձի համար այլընտրաքային ծառայություն ապահովելու հնարավորության ապահովումն է: Մի կողմից ստացվում է, որ անձի նկատմամբ խտրական մոտեցում է դրսևորվում այն հիմքով, որ նա արդեն իսկ գտնվում է զինվորական ծառայության մեջ, ուստի չի կարող անցնել այլընտրանքայինի, իսկ նա, ով դեռևս ժամկետային ծառայության չի անցել, կարող է այլընտրանքային ծառայության անցնել:

Մյուս կողմից էլ դա կարող է մեկնաբանվել այլընտրանքային ծառայության անցնելու կարգի լույսով: Ըստ այդ կարգի՝ այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, ով մինչև հերթական գորակոչին նախորդող մարտի 1-ը կամ սեպտեմբերի 1-ը դիմել է իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ օրենքի 3-րդ հոդվածի հիմքով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հնարավորության բացակայության վերաբերյալ, և ում նկատմամբ տեղական գորակոչային հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշում: Այսինքն՝ զինվորական ծառայության մեջ գտնվող անձը այդ օրենքով սահմանված ժամկետներում և պայմաններում չդիմելու դեպքում է գրկվում այդ կարգին համապատասխան այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու հնարավորությունից, ուստի դա կարող է խտրական չհամարվել:

2.1. Այլընտրանքային ծառայության ժամկետը

Ինչպես արդեն նշվել է, այլընտրանքային զինվորական ծառայությունը կարող է անցկացվել ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հաստատությունում: Վերջին հանգամանքով պայմանավորված՝ այլընտրանքային ծառայության ժամկետները տարբեր են: Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվել է 36 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը՝ 42 ամիս: Հարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովի կողմից ՀՀ Այլընտրանքային ծառայության վերաբերյալ օրենքի վերաբերյալ տրված կարծիքի համաձայն՝ ՀՀ-ում այլընտրանքային ծառայության ժամկետը գերազանցում է միջազգային չափանիշներով սահմանված ժամկետը: Վկայակոչելով Սոցիալական խարտիայի երկրորդ պարագրաֆի առաջին հոդվածը՝ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն նշել է, որ այլընտրանքային ծառայության ժամկետը չի կարող գերազանցել պարտադիր զինվորական ծառայության ժամկետը՝ ավելին քան 1.5 անգամ:¹⁸⁴

¹⁸⁴ Վենետիկի հանձնաժողով, կարծիք «ՀՀ Այլընտրանքային ծառայության մասին օրենքի» վերաբերյալ, 2011:

2.2. Այլընտրանքային ծառայության անցնելու կարգը

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քաղաքացին այլընտրանքային ծառայություն ընտրելիս օրենքով սահմանված ժամկետում գրավոր դիմում է ներկայացնում իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ նշելով իր նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը և շարադրելով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու պատճառները:

Քաղաքացու դիմումը տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, նրա անձնական գործի հետ ներկայացվում է տեղական գորակոչային հանձնաժողով:

Տեղական գորակոչային հանձնաժողովը նախապատրաստում և հանրապետական գորակոչային հանձնաժողով է ներկայացնում այլընտրանքային ծառայություն անցնելու համար դիմած քաղաքացու վերաբերյալ փաստաթղթերը: Հանրապետական հանձնաժողովն այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումը քննարկում է առանձին նիստում: Հանձնաժողովի նիստի ժամանակի և վայրի մասին դիմողը նախապես տեղեկացվում է: Հանրապետական հանձնաժողովը յուրաքանչյուր դիմումի վերաբերյալ ընդունում է որոշում:

Հանրապետական հանձնաժողովի որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին քաղաքացու դիմումը կարող է մերժվել, եթե՝

1) դիմում ներկայացրած քաղաքացին կրկին կանչվում է տեղական գորակոչային հանձնաժողովի նիստին և անհարգելի պատճառով չի ներկայանում.

2) դիմումում կան կեղծ տեղեկություններ:

Հանրապետական հանձնաժողովի կողմից քաղաքացու դիմումը մերժվելու դեպքում նրան 10 օրվա ընթացքում տրվում է տեղական գորակոչային հանձնաժողովի նիստի արձանագրությունից քաղվածք: Քաղվածքում նշվում է, թե ինչ պատճառներով է մերժվել նրա՝ այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումը:

Մերժումը ստանալուց հետո գորակոչիկն իրավունք ունի որոշումը բողոքարկել դատարան:

Այն դեպքում, երբ դիմումը բավարարվում է, և գորակոչիկին իրավունք է տրվում անցնելու այլընտրանքային ծառայության, գորակոչիկին հանձնվում է այլընտրանքային ծառայության անցնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիր: Այլընտրանքային ծառայության ժամկետի հաշվարկը սկսում է այդ ծանուցագրով զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրվանից:

Այլընտրանքային ծառայությունը կարող է փոխարինվել ժամկետային զինվորական ծառայության, եթե ծառայողն այդ մասին դիմում է ներկայացրել ծառայության առաջին 6 ամսվա ընթացքում. նման դեպքում անձը անցնում է ժամկետային զինվորական ծառայության ընդհանուր հիմունքներով, և այլընտրանքային ծառայության ժամկետը չի ներառվում պարտադիր զինվորական ծառայության ժամկետում:

3. Այլընտրանքային ծառայողների իրավունքները և պարտականությունները

Այլընտրանքային զինվորական ծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված չափով: Դրամական բավարարումը վճարվում է ծառայության վայրում: Այլընտրանքային զինվորական ծառայողին ծառայության ընթացքում որպես խրախուսանք կարող է տրվել 15 օրացուցային օր սևողությամբ միանվագ արձակուրդ:

Այլընտրանքային զինվորական ծառայողի երեխայի ծնվելու, ընտանիքի անդամի ամուսնության կամ մահվան դեպքերում նրան կարող է տրվել լրացուցիչ արձակուրդ՝ մինչև 5 օրացուցային օր սևողությամբ:

Ծառայության ընթացքում այլընտրանքային զինվորական ծառայողները պարտավոր են պահպանել ծառայության ներքին կարգապահության կանոնները, կատարել իրենց պարտականությունները և համապատասխան դեկավարի (հրամանատարի) հրամաններն ու հանձնարարականները, կրել սահմանված նմուշի արտահագուստ, ինքնակամ չլքել ծառայության վայրը:

Այլընտրանքային զինվորական ծառայողների աշխատաժամանակը կարգավորվում է ներքին ծառայության կանոններով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողի համար սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ: Այլընտրանքային աշխատանքային ծառայողի աշխատաժամանակի սևողությունը չի կարող օրական 8 ժամից ավելի կամ պակաս լինել, բացառությամբ արտաժամյա ծառայության ներգրավման դեպքերի, որոնք կարող են իրականացվել ծառայության վայրում տարերային կամ տեխնաձին աղետի, հրդեհի, վթարի կանխման կամ դրանց հետևանքների վերացման, ինչպես նաև այնպիսի ծառայողական առաջադրանքների կատարման համար, որոնք, իրենց առանձնահատկություններով պայմանավորված, չեն կարող կասեցվել կամ դադարեցվել:

3.1. Այլընտրանքային ծառայողների պատասխանատվությունը

Այլընտրանքային զինվորական ծառայողներն իրենց կատարած իրավախախտումների և հանցագործությունների (ներառյալ՝ զորամասն ինքնակամ լքելու, ինչպես նաև պետությանը հասցրած գույքային վնասի) հա-

մար պատասխանատվություն են կրում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողներն իրենց կատարած իրավախախտումների և հանցագործությունների, ինչպես նաև պետությանը հասցրած գույքային վնասի համար պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից կալանքի կամ ազատազրկման ձևով պատիժ կրելու, ծառայության վայրն ինքնակամ լքելու կամ ծառայությունից խուսափելու կամ ծառայությունը կատարելուց հրաժարվելու ժամկետը չի ներառվում այլընտրանքային աշխատանքային ծառայողի ծառայության ժամկետի մեջ:

Այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիները չեն կարող օրենքով սահմանված կարգով զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու իրավունք ստանալ:

Այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիները չեն կարող նշանակվել այնպիսի պետական պաշտոնների, որոնց զբաղեցնողների վրա օրենսդրությամբ դրված են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ:

Ինտերակտիվ խաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դերային խաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն: Այնուհետև դասախոսը ներկայացնում է իրական գործը և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկմանը հատկացվում է 30 րոպե ժամանակ:

Գործի փաստեր

Անձը, լինելով Եհովայի վկա կոչվող կրոնական շարժման հետևորդ, այդ մասին տեղեկացրել է ՀՀ գլխավոր դատախազին և այլ պետական մարմիններին և խնդրել է իրեն ուղարկել այլընտրանքային ծառայության: 2001 թ. նրան գորակոչել են պարտադիր զինվորական ծառայության, սակայն նա հրաժարվել է ծառայել:

Զինվորական ծառայությունից խուսափելու համար տվյալ անձը դատարանի կողմից ենթարկվել է քրեական պատասխանատվության, և նրան կատամարք նշանակվել է ազատագրվում մեկուկես տարի ժամկետով: Վերաքննիչ դատարանը որոշել է, որ պատիժը մեղմ է, և պատիժ է նշանակել երկուսն կես տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանը վճիռը թողել է անփոփոխ:

Բոլոր դատաքննությունների ընթացքում տվյալ անձը հայտարարել է իր կրոնական համոզմունքների և դավանանքի մասին, որոնք իրեն թույլ չեն տալիս զինվորական ծառայություն կատարել: ՀՀ-ում տվյալ ժամանակաշրջանում այլընտրանքային ծառայության մասին օրենք ընդունված չէր. անձը ենթարկվել էր քրեական պատասխանատվության՝ դատապարտվելով ազատագրվման: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, 2001 թ. դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ, պարտավորվել էր երեք տարվա ընթացքում ընդունել նման օրենք, իսկ այդ ժամանակաշրջանում ներում շնորհել բոլոր հրաժարվողներին՝ հետագայում նրանց այլընտրանքային ծառայության կանչելու պայմանով:

Հարց. արդյո՞ք խախտվել է անձի խղճի և կրոնական համոզմունքներ դավանելու իրավունքը:

Սա իրական գործ է՝ Բայաթյանն ընդդեմ Հայաստանի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Մեծ պալատ) նշել է, որ ՄԻԵԿ 9-րդ հոդվածի խախտում է տեղի ունեցել:

Պալատի վճռով սույն գործով կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չէր ճանաչվել՝ հաշվի առնելով հանձնաժողովի և դատարանի նախադեպային իրավունքը՝ սույն հարցը դիտարկելով կոնվենցիայի 9-րդ հոդվածի և 4-րդ հոդվածի (ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում) համակցությամբ, որը համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը թողնում է պետությունների հայեցողությանը: Դատարանը, ի դեմս Պալատի, հանգել էր եզրակացության, որ կոնվենցիայի 9-րդ հոդվածը չի երաշխավորում զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ կրոնական համոզմունքների հիման վրա, հետևաբար Բայաթյանի կրոնի ազատության իրավունքի խախտում առկա չէ:

Սակայն դատարանի Մեծ պալատը փաստեց, որ կոնվենցիան պետք է դիտել որպես կենդանի օրգանիզմ և այն մեկնաբանել իրավունքի առկա զարգացումների լույսի ներքո: Դատարանը որոշել է, որ Բայաթյանին քրեական պատասխանատվության ենթարկելու շրջանում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը (բացառությամբ միայն 4-ի) իրենց ներպետական իրավունքում և պրակտիկայում ճանաչել էին համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրա-

վունքը, հետևաբար այն ճանաչել էր նաև ՀՀ-ն: 2002-2003 թթ. այդ հարցի առնչությամբ, պետությունների ներպետական իրավական կարգավորումներով և միջազգային համաձայնագրերով պայմանավորված, գոյություն ունեւ հաստատված կոնսենսուս Եվրոպայի և հարևան պետությունների միջև: Հետևաբար, կոնվենցիայի 9-րդ հոդվածը սույն հարցի առնչությամբ այլևս չպետք է դիտարկվի 4-րդ հոդվածի լույսի ներքո:

Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, որպես այդպիսին, չէր ճանաչում զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Մակայն Մեծ պալատը փաստել է, որ զինվորական ծառայության մերժման պայմաններում, պայմանավորված անձի զինվորական ծառայություն անցնելու պարտականության և բավարար հաստատվածություն, լրջություն և կարևորություն ունեցող կրոնական կամ այլ համոզմունքի միջև լուրջ և անհաղթահարելի կոնֆլիկտով, կոնվենցիայի 9-րդ հոդվածի երաշխիքները գործում են:

Մեծ պալատի գնահատմամբ՝ Բայթայանի կողմից զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելը հանդիսացել է նրա կրոնական համոզմունքների արտահայտման միջոց: Դատարանը քննարկել է այն հարցը, թե արդյոք դիմումատուի դատապարտումը եղել է օրինական: Այն նախատեսված է եղել օրենքով, սակայն դատարանը չի քննարկել դրա հետապնդող նպատակի իրավաչափության հարցը, այն է՝ հասարակական կարգը և այլոց իրավունքների պաշտպանությունը: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության հարցին պատասխանելիս դատարանը փաստել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը ճանաչում է համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Դիմումատուն, լինելով Եհովայի վկա, հրաժարվել է զինվորական ծառայություն անցնելուց ոչ թե մասնավոր շահ հետապնդելով, այլ հիմնված իր կրոնական համոզմունքների վրա: Դատարանը փաստում է, որ պարտադիր զինվորական ծառայությունը քաղաքացու վրա դնում է ծանր պարտականություն: Հետևաբար, պետությունը պարտավոր է ապահովել դրան այլընտրանք: Մինչդեռ Բայթայանի դատապարտումը եղել է այն շրջանում, երբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություն ընդունելու այլընտրանքային ծառայության մասին օրենք և այդ ընթացքում ներում շնորհելու զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց՝ հետագայում նրանց այլընտրանքային ծառայության կանչելու պայմանով: Այսինքն՝ պետությունը, չկատարելով իր միջազգային պարտավորությունը, քրեական պատասխանատվության է ենթարկել քաղաքացուն: Հետևաբար, դիմումատուի դատապարտումը չի հետապնդել սոցիալական հրատապ անհրաժեշտություն՝ խախտելով նրա կրոնի ազատության իրավունքը:

Մոդուլ 14՝ Առողջության իրավունք

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Բովանդակություն

1. Առողջության իրավունքի հասկացությունը
2. Զինվորական ծառայողների առողջության իրավունքը. զինվորական համազգեստով քաղաքացիներ և առողջության իրավունք

Մոդուլի կառուցվածքը

| Թեմա | Մեթոդ | Տևողություն |
|---|----------------------------|--------------------------|
| Առողջության իրավունքի հասկացությունը | Պրեզենտացիա | 30 րոպե |
| Զինվորական ծառայողների առողջության իրավունքը. զինվորական համազգեստով քաղաքացիներ և առողջության իրավունք | Պրեզենտացիա Դերային խաղ | 30 րոպե 1 ժամ 30 րոպե |

Դասախոսության նյութ

1. Իրավունքի հասկացությունը ըստ միջազգային և ներպետական օրենքների

Առողջության իրավունքը անձի ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման հասանելի բարձր մակարդակից օգտվելու իրավունքն է, որը նաև ներառում է այդ իրավունքի ապահովման համար անհրաժեշտ շրջակա միջավայրի պահպանությունը:

Միջազգային իրավունքում ամրագրված անձի առողջության իրավունքը ավելի լայն ընդգրկում ունի, քան առաջին հայացքից կարելի է ենթադրել այդ իրավունքի ձևակերպումից: Քանի որ իրավունքները պետք է իրականացվեն հասարակական հարթության մեջ, առողջության իրավունքը ընդգրկում է ոչ միայն կենսաբանական կամ բնական առողջությունը, այլև որոշակի սոցիալական գործոններ: Այսպես՝ առողջության իրավունքի հետ ամբողջությամբ համատեղելի է այն աշխատանքը, որը կատարվում է համաճարակաբանության ոլորտում, որտեղ վատառողջության հիմնական պատճառները սոցիալական գործոններն են:

Առողջության իրավունքը ներկայումս ներառում է ինչպես նեգատիվ ազատությունները, ինչպիսիք են առանց անձի համաձայնության բուժման

կամ բժշկական փորձարկումների արգելքը, այնպես էլ պոզիտիվ ազատությունները, ինչպիսին է առողջապահության մատչելիությունը:

Առողջապահության ոլորտում պետությունը պարտավոր է՝

1. հարգել անձի առողջության իրավունքը, ձեռնպահ մնալ անձի առողջապահության իրավունքի խախտումներից և թույլ չտալ խտրական մոտեցում այս ոլորտում.

2. թույլ չտալ, որպեսզի երրորդ անձինք միջամտեն այս իրավունքի իրականացմանը, ինչպես նաև ձեռնարկել համապատասխան բնապահպանական միջոցառումներ.

3. իրականացնել առողջության իրավունքի կենսագործման աջակցման միջոցառումներ՝ ապահովելով բժշկական խնամքի մատչելիությունը և առողջության պահպանման անհրաժեշտ նախապայմանները:

Այն ընդգրկում է պետության կողմից ձեռնարկման ենթակա միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են՝

1. մեռելաձնության ու մանկական մահացության կրճատման ապահովման և երեխայի առողջ զարգացման համար,
2. շրջակա միջավայրի և արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բոլոր կողմերի բարելավման համար,
3. համաճարակային, տեղաճարակային, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման և վերահսկման համար,
4. այնպիսի պայմանների ստեղծման համար, որոնք հիվանդության դեպքում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն և բժշկական խնամք:

Առողջության իրավունքի իրականացումը պահանջում է անձի և համայնքի ակտիվ մասնակցություն այս ոլորտում որոշումների կայացման գործընթացներին, քանի որ դրանք ուղղակիորեն առնչվում են անձի բարեկեցությանը: Առողջության հետ կապված ռեսուրսների բաշխման, այդ կապակցությամբ խտրական վերաբերմունքի հարցերը հասարակական մեծ նշանակություն ունեն ոչ միայն այն պատճառով, որ դրանք անձի առողջության վրա ներգործող երևույթներ են, այլ նաև այն հիմքով, որ դրանք գտնվում են օրենքի կարգավորման դաշտում:

Այսպես՝ պետության կողմից այս ոլորտում պարտականությունների չկատարումը ոչ միայն սոցիալ-տնտեսական նշանակություն ունի, այլև կարող է բարձրացնել մարդկանց առջև պետության պատասխանատվության հարցը:

2. Զինվորական ծառայողների առողջության իրավունքը. զինվորական համազգեստով քաղաքացիներ և առողջության իրավունք

Հայաստանի Հանրապետությունում զինծառայողների առողջության իրավունքի իրականացումը հատուկ վերաբերմունքի է արժանացել: Զինվորական ծառայողների բժշկական սպասարկման նպատակով գործում են գերատեսչական առողջապահական հիմնարկներ՝ հոսպիտալներ, որոնք ապահովում են զինվորական ծառայողների բուժումը և բժշկական սպասարկումը: Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայողների բժշկական օգնությունը և բժշկական սպասարկումն անվճար են: Այն դեպքերում, երբ զինվորական ծառայողին կամ նրա ընտանիքի անդամին անհետաձգելի բժշկական օգնություն է անհրաժեշտ, նման օգնություն պարտավոր է մատուցել նրան ոչ միայն զինվորական հոսպիտալը, այլ նաև քաղաքացիական բժշկական հաստատությունները, որոնք իրենց մատուցած ծառայությունների համար հատուցումը կստանան օրենքով սահմանված կարգով: Եթե զինվորական ծառայողը բժշկական օգնությունը ստանում է քաղաքացիական առողջապահական հիմնարկում, ապա այս դեպքում նույնպես նման օգնությունը պետք է անվճար լինի, այսինքն՝ բուժման ծախսերը բուժհիմնարկին պետք է հատուցվեն պետության կողմից:

Զինվորական ծառայողներն ունեն նաև առողջարանային անվճար բուժման իրավունք, երբ նման բուժումը նրա առողջության պահպանման կամ բժշկական խնամքի անհրաժեշտ բաղադրիչը պետք է լինի:

Ամրագրումը իրավական նորմերում

ՄԱԿ-ի 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածով սահմանվել է, որ՝

1. Յուրաքանչյուր ոք այնպիսի կենսամակարդակի իրավունք ունի, որը պատշաճ է իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահությունը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները, ինչպես նաև ունի ապահովագրության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ գոյության այլ միջոցների անհրաժեշտության դեպքում:

2. Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն: Ամուսնությունից կամ արտամուսնական կապից ծնված բոլոր երեխաները պետք է օգտվեն միևնույն սոցիալական պաշտպանությունից:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածը սահմանում է.

1. Սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը:

2. Սույն դաշնագրի մասնակից պետությունների կողմից այս իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով ձեռնարկվող միջոցներն ընդգրկում են միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են.

ա) մեռելաձնության ու մանկական մահացության կրճատման ապահովման և երեխայի առողջ զարգացման համար,

բ) շրջակա միջավայրի և արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բոլոր կողմերի բարելավման համար,

գ) համաճարակային, տեղաճարակային, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման և վերահսկման համար,

դ) այնպիսի պայմանների ստեղծման համար, որոնք հիվանդության դեպքում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն և բժշկական խնամք:

ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

«Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է բժշկական սպասարկումը, համաձայն որի.

«Զինձառայողները և նրանց ընտանիքների անդամներն ապահովվում են անվճար որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում: Ծառայության անցկացման վայրում նման բժշկական հիմնարկների բացակայության, ինչպես նաև անհետաձգելի դեպքերում զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի բժշկական հիմնարկներում՝ համապատասխան մարմինների միջոցների հաշվին՝ բուժման ծախսերի հետագա փոխհատուցմամբ, որի կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինձառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք»:

Ինտերակտիվ խաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դերային խաղի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի պետության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմին տրվում է 10 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցել 5 րոպեն: Այնուհետև դասախոսը ներկայացնում է իրական գործը և դրա լուծումը դատարանի կողմից: Քննարկմանը հատկացվում է 30 րոպե ժամանակ:

Գործի փաստեր

Դիմողը առաջին անգամ զինվորական կոմիսսիայի կողմից բուժզննության է ենթարկվել 1977 թ. փետրվարի 12-ին, ինչի արդյունքում զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի է ճանաչվել: Երկրորդ բժշկական զննությունը կատարվել է 1988 թ. հոկտեմբերին, իսկ մեկ տարի անց կատարված զննության արդյունքում դիմողը ծառայության համար պիտանի է ճանաչվել: Անցնելով ծառայության՝ հինգ ամիս անց դիմողը կրկին բժշկական զննություն է անցնում՝ բողոքելով բանակում վատ վերաբերմունքի արդյունքում ծագած առողջական խնդիրներից: Հերթական բժշկական զննությունը դիմողի մոտ հայտնաբերել է ուղեղի սուր վնասվածքներ:

Ավելի ուշ դիմողը ծառայության համար ոչ պիտանի է հայտարարվել և լրացուցիչ զննության արդյունքում պարզ է դարձել, որ ուղեղի վնասվածքները ի հայտ են եկել զինվորական հաշվառումից առաջ, իսկ ֆիզիկական կոնկրետ ախտանշաններ չեն հայտնաբերվել:

Դիմողը վիճարկում է իր իրավունքների խախտման հարցը՝ հիմնավորելով պատշաճ բժշկական քննություն չիրականացնելու հանգամանքով:

Դասընթացավարը ներկայացնում է Կայանկին ընդդեմ Ռուսաստանի գործը¹⁸⁵: Չնայած այն հանգամանքին, որ սույն գործով դատարանը կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում չի արձանագրել, այդուհանդերձ, առանձին մեկնաբանությամբ նշվել է, որ դիմողը զինծառայության հաշվառվելիս հիվանդ է եղել, և բանակում նրա կրած հնարավոր տանջանքները, ենթադրվում է, որ կարող էին հասցնել հոդված 3-ով արգելված վերաբերմունքի աստիճանին:

¹⁸⁵ Kayankin v. Russia, no. 24427/02, 11 February 2010.



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Գավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am

